Инвентарь

1903

Учебный кабинет физики

059
И-37

13330

06 JUN 2009

059
Ա-37

56

Ա-36

1002
9366

529
12 կոպ.

ԱԽՈՒՐԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ՍԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ

1903 թ.

Խմբագրեց

ՏԵՐԷՆ ԴԱՒԹԱՐԳ ԱՓԲԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
Имени А. Мясникяна
Ս. ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՎԱՆ

Տպ. Ա. Մալխասեանցի ❖ Тип. А. М. Малхасянца
1902

01.02.2013

Дозволено цензурою Тифлисъ, 13 Августа 1902 г.

Գիր տարւոյն	2.
Վերապիրք	13
Եօթներեակք	Գ.
Խնկեւտանեւակք	2.
Տանուտէրն	Երկաւոր.

Բուն ձայնք ԱՀ. ԲՀ. ԳՀ. ԴՀ. ձախակողմեան դասին են սկսած Բուն բարեկենդանից:

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Օր Յայտնութեան . .	Բշ.	Աստուածածին . . .	Օգոստ. 17
Միջոց ուտիք . .	21 օր.	Միջոց ուտիք . . .	3 շաբաթ
Բարեկենդան առաջ. Յունվ.	26	Ս. Խաչ	Սեպտեմ. 14
Օր Տէառնընդառաջի .	Փետր.	Բարեկ. Վարագ. Խաչին	„ 21
Բուն Բարեկենդան Փետր.	16	Վարագայ Ս. Խաչ. .	„ 28
Զատիկ	Ապր. 6	Միջոց ուտիք . .	7 շաբաթ
Երեւման Խաչ . .	Մայիսի 4	Գիւտ Խաչ . .	Հոկտեմ. 26
Հաւքարձուցին . .	„ 15	Բարեկեն. Յիսնակի Նոյեմբ.	16
Հոգեգալուստ . .	„ 25	Բարեկեն. Ս. Յակոբ.	Դեկտեմ. 7
Բարեկ. Ս. Լուսաւոր.	Յուն. 15	Միջոց ուտիք . . .	17 օր.
Վարդավառ . . .	Յուլ. 13	Օր Բարեկ. Ծննդեան պան.	Բշ.
Միջոց ուտիք . .	4 շաբաթ		

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Ախուրեան»-ը, որ առաջին անգամ լոյս է տեսնում մեր հրատարակութեամբ, առանձնապէս նուիրուած է հայ մայրերին։ Մեր նպատակն է բոլոր հարազատութեան ամփոփ կերպով տալ հայ մայրերին մի օժանդակիչ ձեռնարկ, նոցա մայրական լուրջ, փափուկ եւ պատասխանատու գործում եւ եթէ այդ հնարաւոր կլինի, տարէցտարի պարբերաբար։

«Մանուկները ընկերութեան եւ հայրենիքի ապագան են» ասում է մի յայտնի առողջաբան. հարկաւոր է ուրեմն նոցա խնամելու եւ մեծացնելու խնդիրը իբրեւ մի կենսական եւ կարեւոր խնդիր նկատել։

Որչափ մայրական գորովը եւ նորա հեւատեսութիւնը հրաշքներ է գործում, սակայն քիչ չէ պատահում, որ հակառակ այդ սիրոյ եւ անձնուէր խնամքին, մայրը շատ անգամ դժուարանում է եւ նոյն իսկ մոլորւում իւր նորածինը խնամելիս։

Ո՞ւմ յայտնի չէ այն ճշմարտութիւնը, որ աւանդաբար հասած հին նախապաշարմունքային միջոցները շատ անգամ աւելի մահաբեր են եղել մանուկների համար, քան նրանց հիւանդութիւնները։ «Ախուրեան»-ը բովանդակում է առողջապահական այն բոլոր կանոնները, գիտական այն ճշմարտութիւնները, որոնք անհրաժեշտ են առօրեայ կեանքում ամեն մի ընտանիքի։

Յայտնի է նոյնպէս, որ երեխայի դաստիարակութիւնը գլխաւորապէս մօրից է կախուած եւ եթէ մայրը իւր օրինակով եւ երեխայի կեանքին մասնակցելով, կարող է կարգադրել նրա մէջ այն յատկութիւնները, որոնք անհրաժեշտ են նրա բարգաւաճութեան համար։ «Ախուրեան»-ը բովանդակում է նաեւ դաստիարակչական եւ մանկավարժական այն կարեւոր խորհուրդները, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր ծնողի իւր մանկան դաստիարակութեան համար։

Մեծամտութիւն կլինի կարծել, որ ներկայ հրատարակութեամբ մեր նպատակին լիովին հասած լինենք, սակայն չենք կասկածում յուսալ, ժամանակի ընթացքում, յարգոյ կանանց եւ պարոնների աջակցութեամբ իրագործել այնչինչ որ բարի կամքը եւ տոկուն աշխատանքը կարող են տալ։

ՏԻԳԻՆ Ն. ԱՓԻՆԵԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ

31 ՕՐ

Օր		Լ.	Օր		Լ.
1	Գշ. դմ. գ.որ Ծննդեան պան. Տարեմուտ եւ կաղանդ: Եւս Յ. եւ Ռ., որոց նուիրեալ անուանակոչութիւն տեառն եւ յիշատակ Բարդի հայրապետին:	16		պետին, Վրասայ եպիսկոպ. եւ Աբիսողոմայ սարկաւագ.	
2	Եշ. դկ. գ. որ Ծննդ. պան.	17	17	Ուր. դմ. Պանիլ:	2
3	Ուր. ամ. ե. որ. Ծննդ. պան.	18	18	Չր. դկ. Ս. Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ եւ Ինոփրիոսիմայ նշանաւորացն:	3
4	Չր. ակ. գ. որ. Ծննդ. պան. Յ. եւ Ռ. 72 աշակերտացն Քրիստոսի:	19	19	✠Կիր. ամ. Ա. գիւնի Ծնունդեան: Հարսանիք:	4
5	✠ Կիր. բմ. Հրազալոյց Ծննդեան: Նախատօնակ: Նաւակատիք. մինչեւ ամսոյս 13 ամենի երեկոյ նախատօն.	20	20	Բշ. ակ. Ս. Թեոդոսի բազաւորին եւ մանկանացն Եփեսոսի:	5
6	✠ Բշ. բկ. Տօն Ծննդեան եւ Միհրուրեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Հրաշագիտք: Միջոց ուտիքը 21 որ է: Յ. եւ Ռ. Միհրուրիւն Տեառն:	21	21	Գշ. բմ. Ս. Գիրակոսի եւ մօրին նորայ Յողիսայի եւ Ս. Գարտիսոսի, Պողիքոսի եւ Գրիգորիսի:	6
7	✠ Գշ. գմ. բ. որ. Ծննդեան: Յիշատակ մեռելոց: Յ. եւ Ռ. Յովհաննու Կարապետին:	22	22	Գշ. բկ. Պանիլ:	7
	☽ Վչ. խառ. լս. 21 ժ. 13 ր.			☾Ամ. խառ. լս. 15 ժ. 35 ր.	
8	✠Գշ. գկ. գ. որ. Ծննդեան:	23	23	Եշ. գմ. Ս. Վանանայ Գողբնեցւոյն Եւգինեայ կուսին եւ հօրն նորա Փիլիպպոսի եւ մօրն Կղոսեայ եւ երկուց եղբարցն Սերգեայ եւ Ապիսոնի եւ երկուցեւերիինացն:	8
9	Եշ. դմ. գ. որ. Ծննդեան:	24		Յ. եւ Ռ. Գրիգորի Աստուածաբանին:	
10	Ուր. դկ. ե. որ. Ծննդեան:	25	24	Ուր. գկ. Պանիլ:	9
11	Չր. ամ. գ. որ. Ծննդեան:	26	25	Չր. դմ. Ս. Հայրապետացն Արամատի եւ Կիւրղի:	10
12	✠Կիր. ակ. ե. որ. Ծննդեան: Նախատօնակ:	27	26	✠Կիր. դկ. Բ. գիւնի Ծնունդ. Բարեկենդան առաջաւորի պանց:	11
13	✠Բշ. բմ. բ. որ. Ծննդեան. Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Նախատօնակ:	28	27	Բշ. ամ. ա. որ առաջ. պան. Յ. եւ Ռ. Փոխադրութիւն նշխարացն Յովհաննու Ոսկեբերանին:	12
			28	Գշ. ակ. բ. որ առաջ. պան.	13
14	Գշ. բկ. Տօն Ծննդեան Յովհաննու Կարապետին. Անուանակոչութիւն Վեհափառ եւ Ս. Հայրապետին մերոյ Տ. Տ. Մկրտչի Ա..	29	29	Գշ. բմ. գ. որ առաջ. պան.	14
			30	Եշ. բկ. գ. որ առաջ. պան.	15
				☉ Լր. լս. 0 ժ. 46 ր.	
15	Գշ. գմ. Պանիլ:	30	31	Ուր. գմ. ե. որ առաջ. պան. Յիշատակ Յովհաննու մարգ.	16
	● Ծն. լս. 6 ժ. 24 ր.			Յունուարի 1-ից մինչեւ այսօր օրն աւելացել է 1 ժ. 52 ր.	
16	Եշ. գկ. Ս. Պետրոսի հայրապետին, Վրասայ եպիսկոպ. եւ Աբիսողոմայ սարկաւագ.	1			

ՕՐ		Լ.
1	Շբ. գկ. Ս. Սարգսի զօրավարի եւ ուղղոյ նորա Մատիսոսի եւ յորեֆտասան զինուորացն:	17
2	✠Կիր. դկ. Գ. զկնի Ծնընդեան: Հաւատիք: ✠ Ռ. Տեառնընդառաջ:	18
3	Բշ. դկ. Ս. Ասորիանոսից զօրավարացն:	19
4	Գշ. ամ. Ս. Սուրբանոսից վկայիցն:	20
5	Դշ. ակ. Պանիր:	21
6	Եշ. բմ. Ս. Ոսկեանից խանանայիցն:	22
	☾ Վերջ. խ. ր. 9 ժ. 57 ր.	
7	Ուր. բկ. Պանիր:	23
8	Շբ. գմ. Ս. Բռանակայ Պարեւի հայրապետին մեռոյ:	24
9	✠Կիր. գկ. Գ. զկնի Ծնընդեան: Հաւատիք:	25
10	Բշ. դմ. Ս. Մարկոսի եպիսկոպոսին, Պոմի խանանային, Կիւրղի եւ Բենիամինի սարկաւագացն եւ Ս. վկայիցն Արդրմեանի, Ուռզղանայ եւ Սալեանի:	26
11	Դշ. դկ. Ս. Վեռնոնեանց խանանայիցն:	27
12	Դշ. ամ. Պանիր:	
13	✠Եշ. ակ. Ս. Վարդանանց զօրավարացն մեռոց եւ 1036 վկայիցն, որ կատարեցան ի մեծ պատերազմին: Տօն ազգային եւ յիշատակ մեռելոց: Նախատօնակ:	28 29
	☽Ծն. ր. 19 ժ. 8 ր.	
14	✠Ուր. բմ. Պանիր: Տեառնընդառաջ: ✠ Ռ. բարեկենդ. եօթնեակի:	1
15	Շբ. բկ. Կ. Պօղոս ս. ժողովոյն 150 հայրապետացն: Երեկոյեան սեղանը ծածկուած է վարագուրով: ✠Ռ. բարեկենդ. եօթնեակի:	2
16	✠Կիր. դկ. Բուն բարեկենդ. եւս Յ. եւ Ռ., որոց մեռեալ Գիւտգրիգ.Յովհան.Կարապետ.	3
17	Բշ. ամ. ա. օր մեծի պահոց:	4
18	Դշ. ակ. բ. օր մեծի պահոց.	5
19	Գշ. բմ. գ. օր մեծի պահոց:	6
20	Եշ. բկ. դ. օր մեծի պահոց:	7
21	Ուր. գմ. ե. օր մեծի պահոց:	8
	☾ Առ. խաղ. ր. 4 ժ. 19 ր.	
22	Շբ. գկ. զ. օր մեծի պահոց: Ս. Թեոդորոսի զօրավարին:	9
23	✠Կիր. դմ. է. օր մեծի պահ. Բ. Քառասնորդական պահ.	10
24	Բշ. դկ. ը. օր մեծի պահոց:	11
25	Դշ. ամ. թ. օր մեծի պահոց:	12
26	Դշ. ակ. ժ. օր մեծի պահոց:	13
27	Եշ. բմ. ժա. օր մեծի պահ.	14
28	Ուր. բկ. ժբ. օր մեծի պահ.	15
	☉Լր. ր. 23 ժ. 30 ր.	

Փետրուարի 1-ից մինչեւ այսօր օրն աւելացել է 2 ժ. 7 ր.

ՕՐ		Լ.
1	Շբ. գմ. ժգ. օր մեծի պահ. Ս.Կիւրղիեպիսկոպոսի հայրապետին եւ միւս Կիւրղի եպիսկոպոսին եւ մօրն նորա Անիսայի:	16
2	✠Կիր. գկ. ժդ. օր մեծի պահոց. Գ. Քառասնորդական պահոց: Անառակին:	17
3	Բշ. դմ. ժե. օր մեծի պահ.	18
4	Գշ. դկ. ժզ. օր մեծի պահ.	19
5	Դշ. ամ. ժէ. օր մեծի պահ.	20
6	Եշ. ակ. ժը. օր մեծի պահ.	21
7	Ուր. բմ. ժթ. օր մեծի պահ.	22
	☾ Վերջ. խ. ր. 22 ժ. 41 ր.	
8	Շբ. բկ. ի. օր մեծի պահ. Ս. Յովհաննէս Երուսաղեմայ հայրապետին եւ Ս. Հայրապետացն մեռոց Յովհաննէս Օձնեցւոյն, Յովհաննէս Որոտնեցւոյն եւ Գրիգոր Տաթեւացւոյն:	23
9	✠Կիր. գմ. իա. օր մեծի պահոց: Դ. Քառասնորդական պահոց: Տնտեսին: Գարնանամուտ եւ հաստատկած գիշեր ցերեկ հաւասար են, ցերեկն սկսում է երեւալ իսկ գիշերը կարճանալ:	24
10	Բշ. գկ. իբ. օր մեծի պահ.	25
11	Դշ. դմ. իգ. օր մեծի պահ.	26
12	Գշ. դկ. իդ. օր մեծի պահ.	27
13	Եշ. ամ. իե. օր մեծի պահ.	28
14	Ուր ակ. իզ. օր մեծի պահ.	29
15	Շբ. բմ. իէ. օր մեծի պահ. Ս. Մանկանցն խաղաղութիւն որ'ի Սեբաստիայ կատարեց.	30
	☽Ծն. ր. 7 ժ. 52 ր.	
16	✠ Կիր. բկ. իբ. օր մեծի պահ. Ե. Քառասնորդական պահ: Դատաւորին:	1
17	Բշ. գմ. իբ. օր մեծի պահ.	2
18	Դշ. գկ. ի. օր մեծի պահոց:	3
19	Գշ. դմ. իա. օր մեծի պահ.	4
20	Եշ. դկ. իբ. օր մեծի պահ.	5
21	Ուր. ամ. իգ. օր մեծի պահ. Նախատ. Բացուում է պատարագի սեղանի վարագոյրը:	6
22	✠Շբ. ակ.իգ. օր մեծի պահ. Ս. Գրիգորի Լուսաւորչի մեռոյ, սոսկալի յարյարութեան եւ մեծի 'ի վիրապն:	7
	☽Առ. խաղ. ր. 17 ժ. 3 ր.	
23	✠ Կիր. բմ. իե. օր մեծի պահոց: Զ. Քառասնորդական պահոց: Դպրոցական:	8
24	Բշ. բկ. իզ. ր մեծի պահոց:	9
25	Գշ. գմ. իէ. օր մեծի պահ. ✠Յ. եւ Ռ. Աւետարանի Ասուածածնի:	10
26	Դշ. գկ. ԼԸ. օր մեծի պահ.	11
27	Եշ. դմ. իբ. օր մեծի պահ.	12
28	Ուր. դկ. իա. օր մեծի պահ.	13
29	Շբ. ամ. իաա. օր մեծի պահոց: Յիշատակ յարութեան Ղազարու:	14
30	✠Կիր. ակ. իաբ. օր մեծի պահոց: Ծաղկազարդ: Յերեկոյեան Թունաւորիք:	15
	☉Լր. ր. 2 ժ. 14 ր.	
31	Աւ. բշ. բմ. Պանիր:	16

Մարտի 1-ից մինչեւ այսօր օրն աւելացել է 2 ժ. 10 ր.

ԱՊՐԻԼ

30 ՕՐ

Օր		Լ.
1	Աւ. Գշ. բկ. Պանիք: Յիշատակ տասն կուսանաց:	17
2	Աւ. Գշ. գձ. Պանիք:	18
3	✠Աւ. եշ. զկ. Պանիք. Յիշատակ Ոստիպուպոլի:	19
4	✠Աւ. Ուր. զձ. Պանիք: Յիշատակ Զարշարանաց եւ Խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Թափոր բաղնեան:	20
5	✠ Աւ. Հր. զկ. Հրաշալոյց Զատկի: Նաւակատիք. Նախատ.	21
6	✠Կիր. ամ. Զատիկ: Ուտիք ամենիքոց մինչեւ Համբարձումն: Եւս Յ. եւ Ա. որոց ուտիք մինչեւ նոր Կիւրակի:	22
7	✠Բշ ակ. բ. or Զատկի. Յիշատակ մեռելոց: Տօն Առեստանի Ս. Կուսին Մարիամու: ☽Վերջ. խ. ր. 11 ժ. 25 ր.	23
8	✠Գշ. բձ. գ. or Զատկի:	24
9	Գշ. բկ. դ. or Զատկի:	25
10	եշ. գձ. ե. or Զատկի:	26
11	Ուր. զկ. զ. or Զատկի:	27
12	Հր. գձ. է. or. Զատկի: Յիշատակ գլխատեալն Ս. Յովհաննու Մկրտչի:	28
13	✠Կիր. զկ. ը. or Զատկի: Նոր կիւրակի (Կրկնազատիկ):	29
14	Բշ. ամ. թ. or յիսնից: ☾ Ծն. ր. 20 ժ. 36 ր.	30
15	Գշ. ակ. ժ. or յիսնից:	1
16	Գշ. բձ. ժա. or յիսնից:	2
17	եշ. բկ. ժբ. or յիսնից:	3
18	Ուր. գձ. ժգ. or. յիսնից:	4
19	Հր. զկ. ժդ. or յիսնից:	5
20	✠Կիր. դձ. ժե. or յիսնից: Աշխարհամատրան կիւրակի (Կանայք կիւրակի):	6
21	Բշ. զկ. ժզ. or յիսնից:	7
22	Գշ. ամ. ժէ. or յիսնից: ☾Աս. խ. ր. 5 ժ. 47 ր.	8
23	♔ Գշ. ակ. ժը. or յիսնից: ✠Յ. եւ Ա. Ս. Գեորգ.	9
24	եշ. բձ. ժթ. or յիսնից:	10
25	Ուր. բկ. ի. or յիսնից:	11
26	Հր. գձ. իա. or յիսնից:	12
27	✠Կիր. զկ. իբ. or յիսնից: (Կարմիր կիւրակի):	13
28	Բշ. դձ. իգ. or յիսնից:	14
29	Գշ. զկ. իդ. or յիսնից: ☉Լր. ր. 14 ժ. 58 ր.	15
30	Գշ. ամ. իե. or յիսնից:	16

Ապրիլի 1-ից մինչեւ այսօր օրն ապրացել է. 2 ժ. 4 ր.

ՄԱՅԻՍ

31 ՕՐ

Օր		Լ.
1	եշ. ակ. իզ. or յիսնից.	17
2	Ուր. բձ. իէ. or յիսնից.	18
3	Հր. բկ. իը. or յիսնից:	19
4	✠Կիր. գձ. իթ. or յիսնից: Տօն Երեւմանի Ս. Խաչի:	20
5	Բշ. զկ. լ. or յիսնից:	21
6	♔Գշ. դձ. լա. or յիսնից:	22
7	Գշ. ակ. լբ. or յիսնից: ☽ Վեր. խ. ր. 0 ժ. 9 ր.	23
8	եշ. ամ. լգ. or յիսնից:	24
9	Ուր. զկ. լդ. or յիսնից: Ա. Նիկոդեմոսի Սքանչելագործի:	25
10	Հր. բձ. լե. or յիսնից:	26
11	✠ Կիր. բկ. Հ. Կիւրակի զատկի:	27
12	Բշ. գձ. լէ. or յիսնից:	28
13	Գշ. զկ. լը. or յիսնից:	29
14	♔Գշ. դձ. լթ. or յիսնից: ☾ Ծն. ր. 9 ժ. 20 ր.	30
15	✠ եշ. ակ. խ. or յիսնից: Համբարձումն Քրիստոսի: Եւս Յ. եւ Ա.	1
16	Ուր. ամ. խա. or յիսն. պանիք:	2
17	Հր. զկ. խբ. or յիսնից:	3
18	✠Կիր. բձ. խգ. or յիսնից: Բ. Ծաղկազարդ:	4
19	Բշ. բկ. խդ. or յիսնից:	5
20	Գշ. գձ. խե. or յիսնից:	6
21	Գշ. զկ. խզ. or յիսնից: ☾ Աս. խ. ր. 18 ժ. 31 ր.	7
22	եշ. դձ. խէ. or յիսնից:	8
23	Ուր. զկ. խը. or յիսնից:	9
24	Հր. ամ. խթ. or յիսնից:	10
25	♔✠Կիր. ակ. Հոգեգալուստ: (Պենտեկոստէ): Բարեկենդան եղիսական պաշտաց: Եւս Յ. եւ Ա.	11
26	Բշ. բձ. ր. or Հոգ. պանիք: ✠Ա. ր. or Հոգեգալստեան:	12
27	Գշ. բկ. զ. or Հոգ. Պանիք:	13
28	Գշ. գձ. դ. or Հոգ. Պանիք:	14
29	եշ. զկ. է. or Հոգ. Պանիք: ☉Լր. ր. 3 ժ. 42 ր.	15
30	Ուր. դձ. զ. or. Հոգ. Պանիք:	16
31	Հր. զկ. է. or Հոգեգալս.	17

Մայիսի 1-ից մինչեւ այսօր օրն ապրացել է. 1 ժ. 17 ր.

Օր		Լ.
1	✠Կիր. ամ. Ա. Կիր. Յարութեան։ Յիշատակ Եղիայի մարգարէի։ Նախատօնակ։ Առաջին պասկ։ Հարամիք։	18
2	Բշ. բն. Ս. Կուռամնացի Հրոմիսիմեանց։ Նախատօն։	19
3	Դշ. բն. Ս. Կուռամնացի Գայանեանց։	20
4	Դշ. բկ. Պահք։ Նախատօնակ։	21
5	Եշ. գն. Ս. Յովհաննու Կարապետի եւ Աբանոգիենաց եպիսկոպոսին։	22
	☽Վեր. հա. լս. 12 ժ. 53 ր.	
6	Ուր. գկ. Պահք։ Նախատօն։	23
7	✠Աբ. դն. Ս. Գրիգորի Լուսաւորչին մեռոյ կալն Ի Վիրապին։	24
8	✠Կիր. դկ. Բ. զկնի հոգեգալստեան։ Տօն Կարապետի Ս. Էջմիածնի։ (Հայաստանեայց բոլոր եկեղեցիներ. կատարու

ՕԳՈՍՏՈՍ

31 ՕՐ

ՕՐ		Լ.
1	Ուր. գկ. Պանիք:	20
2	Շբ. դմ. Ս. Գրիգորի Աստուածաբանին:	21
3	✠Կիր. դկ. Գ. գկնի Վարդավառի: Հարամանիք: ☾ Վերջ. քս. քա. 14 ժ. 21 ր.	22
4	Բշ. ամ. Ս. Եղբիկոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կանիդիոսի եւ Ակիլղասայ:	23
5	Դշ. ակ. Ս. Անդրեի զօրավարին եւ քանանի նորին, Կարինիկոսի եւ Գոնեստեայ վկայիցն:	24
6	Դշ. ակ. Պանիք: ✠Ե. Վարդավառ:	25
7	Եշ. բկ. Ս. Անդրեանոսի եւ կնոջ նորա Անաստասայ, Թեոդուոսի, Երեւիանոսի վկայիցն:	26
8	Ուր. գմ. Պանիք:	27
9	Շբ. գկ. Եփեսոսի ս. ժողովոյն, երկու հարիւր հայրապետացն:	28
10	✠Կիր. դմ. Ե. գկնի Վարդավառի: Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: ☽ Ծն. քս. 23 ժ. 32 ր.	29
11	Բշ. դկ. ա. օր Աստուածած. պահոց: Նաւասարդ եւ տարեմուտ քաս բուն տուարի հայոց ՍՃԿԴ (4395):	1
12	Դշ. ամ. բ. օր Աստուածած. պահոց:	2
13	Դշ. ակ. գ. օր Աստուածած. պահոց:	3
14	Եշ. բմ. դ. օր Աստուածածնի պահոց:	4
15	Ուր. բկ. ե. օր Աստուածած. պահոց: ✠Ե. Վերափոխ. Ս. Աստուածածնի:	5
16	Շբ. գմ. Տօնի Զողակաթի Ս. Էջմիածնի քան տեղեաւն Ս. Գրիգորի Լուսաւորչի մեկոյ: Նախատօնակ: Նաւակատիք:	6
17	✠Կիր. գկ. Վերափոխումն Ս. Աստուածածնի: (Խաղող օրհնիք): Ինն օր ամեն երեկոյ նախատօնակ: Միջոց ուտիքը 3 շաբաթ է: (Մեծամանդիս or ուխտի հօրինվիրաց Ս. Աստուածածնի աւագ եկեղեցւոյն Աղեքսանդրապօլու):	7
18	✠Բշ. դմ. բ. օր Վերափոխման: Յիշատակ մեռելոց: ☽ Ան. քս. 8 ժ. 43 ր.	8
19	Դշ. դկ. գ. օր Վերափոխման:	9
20	Դշ. ամ. դ. օր Վերափոխման:	10
21	Եշ. ակ. ե. օր Վերափոխման:	11
22	Ուր. բմ. զ. օր Վերափոխման:	12
23	Շբ. բկ. է. օր Վերափոխման:	13
24	✠Կիր. գմ. բ. օր Վերափոխ.	14
25	Բշ. գկ. բ. օր Վերափոխման: ✠ Ե. Յիշատակ նուագանման արեւելեան Կոմկաւոր: ☉ Լր. քս. 17 ժ. 54 ր.	15
26	Դշ. դմ. Ս. Յովակիմայ եւ Անայի ծնողաց Ս. Աստուածածնի եւ կանանց իւղաբերից:	16
27	Դշ. դկ. Պանիք:	17
28	Եշ. ամ. Ս. Երեմիայի մարգարէին:	18
29	Ուր. ակ. Պանիք: Յ. եւ Ե. Դիմատուոմն Յովհաննեսի Կարապետի եւ պանիք նոցա:	19
30	Շբ. բմ. Ս. Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Զեբեդեայ: Նախատօնակ:	20
31	✠Կիր. բկ. Գ. գկնի Վերափոխ. Գիւս զօրաց Ս. Աստուածածնի: Հարամանիք:	21

Օգոստոսի 1-ից մինչեւ այսօր օրը պակասել է 2 ժ. 14 ր.

ՍԵՊՏԵՄԲԵՐ

30 ՕՐ

ՕՐ		Լ.
1	Բշ. գմ. Ս. Ստեփանոսի Ալիւնեցւոյն եւ Ս. վկայիցն Դանիարիկայ, Ծաւիդոսի, Տուրիկոսի եւ Ռաղիկոսի:	22
2	Դշ. դկ. Ս. Մարգարիտին եզեկիելի, եզրի, եւ Զաքարիայի հօրն Յովհաննու Մարգարէի: ☽ Վերջ. քս. 3 ժ. 5 ր.	23
3	Դշ. դմ. Պանիք:	24
4	Եշ. դկ. Ս. Յովհաննու Կարապետին եւ Յոթայ արդար.	25
5	Ուր. ամ. Պանիք:	26
6	Շբ. ակ. Նիկիոյ Ս. Ժողովոյն 318 հայրապետացն:	27
7	✠Կիր. բմ. Գ. գկնի Վերափոխ. Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Նախատօնակ:	28
8	✠Բշ. բկ. ա. օր Խաչի պահոց: Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱնանայէ: Եւս Յ. եւ Ե.	29
9	Դշ. գմ. բ. օր Խաչի պահոց: ☾ Ծն. քս. 12 ժ. 6 ր.	30
10	Դշ. գկ. գ. օր Խաչի պահոց: Աճանամուս եւ հասարակած. գիշեր գերեկ հաւասար են, գերեկն սկսում է կրճատանալ գիշերն երկարել:	1
11	Եշ. դմ. դ. օր Խաչի պահոց:	2
12	Ուր. դկ. ե. օր Խաչի պահոց:	3
13	Շբ. ամ. Տօն Ս. եկեղեցւոյ ի Նաւակատիս Ս. Խաչին: Նաւակատիք:	4
14	✠Կիր. ակ. Խաչվերաց: Թափոր: Ե. Խաչվերաց:	5
15	✠Բշ. բմ. Տօն Խաչի: Յիշատակ մեռելոց:	6
16	Դշ. բկ. Տօն եկեղեցւոյ: ☾ Ան. քս. 21 ժ. 17 ր.	7
17	Դշ. գմ. Տօն եկեղեցւոյ:	8
18	Եշ. գկ. Տօն եկեղեցւոյ:	9
19	Ուր. դմ. Տօն Խաչի:	10
20	Շբ. դկ. Տօն Խաչի:	11
21	✠Կիր. ամ. Բ. գկնի Ս. Խաչի: Բարեկենդան Վարագայ Խաչի:	12
22	Բշ. ակ. Պանիք: Ս. Մատթայ, Փիլիպպոսի եւ Սիմոնի Սիմեանցւոյն:	13
23	Դշ. բմ. Պանիք: Ս. Կուսանացն Փերոնիկայ եւ Մարիանայ եւ Զուշանայ մեծին Վարդանայ:	14
24	Դշ. բկ. Պանիք: ☾ Լր. քս. 6 ժ. 28 ր.	15
25	Եշ. գմ. Ս. Հայրապետացն Բարազատու, Անիրիսոսի եւ Երանոսի:	16
26	Ուր. գկ. Պանիք: ✠Յ. եւ Ե. Նինուէի Յովհաննու Անեցաւանցւոյ:	17
27	Շբ. դմ. Ս. Գեորգայ զօրավարին, Աղոիսոսի եւ Ռամանոսի եղբարցն:	18
28	✠Կիր. դկ. Դ. գկնի Ս. Խաչի: Տօն Վարագայ Ս. Խաչի: (Միջոց ուտիքը 7 շաբաթ է): Հարամանիք: Տասներորդ տարեդարձ օծման Վեհափառ եւ Ս. Կաթուղիկոսի ամենայն հայոց Տ. Տ. Մկրտչի Ս..	19
29	Բշ. ամ. Ս. Դաւթի Դպնեցւոյն եւ ս. վկայիցն Զամբիկոսի եւ Զամբիկուհւոյն:	20
30	Դշ. ակ. Ս. Եւսեբիոսի եւ կնոջ նորա Թեոդիստայ եւ երկուց որդւոցն եւ ս. կուսանացն Երեմեանայ եւ Նեփսաղիմայ:	21

Սեպտեմբերի 1-ից մինչեւ այսօր օրը պակասել է 2 ժ. 14 ր.

ՀՈԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

Օր		Լ.
1	Դշ. բն. Պանիլ:	
	✠Ի. Պաշտ. Ս. Աստուածածնի:	22
	☾Վշ. իր. յս 15 ժ. 39 ր.	
2	Եշ. թկ. Ս. Իշխանացի Սանահայ եւ Հանգստարան:	23
3	Ուր. գն. Պանիլ:	
4	Ընթ. գկ. Ս. 72 աշակերտացի Քրիստոսի:	24
5	✠Կիր. դն. Գ. գկնի Ս. Խաչի: Հարանիլ:	25
6	Բշ. ոկ. Ս. Փոկաւոր Հայրապետին եւ Երանոսի հեսեւոնական առաքելոյ:	26
7	Դշ. ան. Ս. Կուսանացի Թեկլի, Վառոյատաց եւ Պողեգեսայ	27
8	Գշ. ակ. Պանիլ:	
9	Եշ. բն. Ս. Պանդալ. բժշ. Եւ մոնեանց քան. եւ Եպրաքս. կուս.	28
	☾Ծն. իր. 00 ժ. 50 ր.	29
10	Ուր. բկ. Պանիլ:	30
11	Ընթ. գն. Ս. Թարգմանիչ. վարդապետ. մեծոց Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի, Դաւթի անյաղթ փիլիսոփայի, Գրիգորի Նարեկացւոյ եւ Ներսէսի Պայլեցւոյ:	1
12	✠Կիր. գկ. Ե. գկնի Ս. Խաչի: Հարանիլ:	2
13	Բշ. դն. Գիւտ նշխարաց Ս. Գրիգորի Աղուանից Կաթուղիկ. եւ ս. հարցն Թարգոյ, Վարոսի, Թոմասի, Անտոնի եւ Կոստիս. եւ 7 խոտածար. որք յինանակ. վանսն կատար.	3
14	Գշ. գկ. Ս. Առաքելոցն Անանիայի, Մատթէի, Բարնաբայ, Փիլիպպոսի, Յակոբայ. Զեբեդայի եւ Սիղոսի:	4
15	Դշ. ան. Պանիլ:	5
16	Եշ. ակ. Ս. Գիանիսիոսի Արիոպագացւոյն եւ Ս. առաք. Տիմոթեոսի եւ Տիտոսի:	6
	☾Ան. իր. 10 ժ. 1 ր.	7
17	Ուր. բն. Պանիլ:	
18	Ընթ. բն. Ս. Աստուածալիցացի Մատթեոսի, Մարկոսի, Դանիէլ եւ Յովհաննու:	8
19	✠Կիր. գն. Զ. գկնի Ս. Խաչի: Հարանիլ:	9
		10

Օր		Լ.
20	Բշ. գկ. Ս. Դաւանիկիանոսի նահատակաց. ս. նաւատաց Ի խալեպաբ. Քրիստոսի եւ Յովսեփայ Ասուածաւորի, Յովսեփայ Արիմաթացւոյ եւ բարեկամին Քրիստոսի Զաքարիայ եւ Ելիզի նորա Մարիամայ եւ Մարթայի:	11
21	♔Դշ. դն. Ս. Թեոդիտոսի քան. եւ Զենոնի գին. Մակարայ, Եւդոկիայ եւ Ռաքելայ:	12
22	Դշ. գկ. Պանիլ:	
	✠Ի. Հրաշագործ պատկերին Ս. Աստուածածնի Դաւանաւ:	13
23	Եշ. ան. Ս. Խարիսիմեանցի եւ ս. վկայիցն Արտեմ. եւ Քրիստափ. եւ երկուց կանանցի Կապիտոլինեայ եւ Ակիլինեայ:	14
	☾Լր. իր. 19 ժ. 12 ր.	
24	Ուր. ակ. Պանիլ:	
25	Ընթ. բն. Ս. Երկրատաւն վարդապետացն Թեոփանոսի, Գիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աբրահամայ Կիւրղի երուսաղեմացւոյն, Եփրեմի Խուրեմի Ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյ. Գիրգորի Նիւսացւոյ. Գրիգորի Աստուածաբ. Եպիփանի Կիպրացւոյ. Յովհաննու Ոսկեբերանի. եւ Կիւրղի Աղեքսանդրացւոյ.	15
26	✠Կիր. բկ. Է. գկնի Ս. Խաչի: Գիտս Խաչ: Հարանիլ:	16
27	Բշ. գն. Ս. Աթանասեայ քահանայի, Վարոսի եւ Թեոդորիտեայ եւ որդոց նորա եւ որք ընդ նոսա կատարեցան	17
28	Դշ. դկ. Ս. Հիպոլիտոսի ոչ ի Սամոսատա կատարեցեալ եւ ս. Սեւերիանոսի Սեբաստացւոյն եւ Բարեկայ ծերոյն եւ 84 աշակերտաց նորին:	18
29	Դշ. գն. Պանիլ:	
30	Եշ. գկ. Ս. Յովհաննու Ոսկեբերանի հայրապետին:	19
31	Ուր. ան. Պանիլ:	20
	☽Վշ. իր. 4 ժ. 23 ր.	21
	Հոկտեմբ. 1-ից մինչեւ այսօր օրը պակասել է 2 ժ. 10 ր.	22

ՆՈՅԵՄԲԵՐ

30 ՕՐ

Օր		Լ.
1	Ընթ. ակ. Տօն ամենայն սրբոց ելից եւ նորոց, յայսմ եւ անյայսմ:	23
2	✠Կիր. բն. Ը. գկնի Ս. Խաչի: Հարանիլ:	24
3	Բշ. թկ. Ս. Սնափանոսի Հրոմայ հայրապետին, եւ քահանայիցն եւ սարկաւագացն եւ ժողովրդոցն:	25
4	Դշ. գն. Ս. Ակիմիմեայ եպիսկոպոսին եւ Յովսեփայ քահանայի, Աղիրայ սարկաւագ. եւ Պղատոնի վկային:	26
5	Դշ. գկ. Պանիլ:	27
6	Եշ. դն. Ս. Հայրապետացն Միքայելանոսի, Ադեքսանդրոսի եւ Պողոսի խոստովանողին եւ նոցա սարկաւագի Մարկիանոսի եւ Մարտիրոսի:	28
7	Ուր. ոկ. Պանիլ: Նախատօն.	29
8	Ընթ. ան. Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի, Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:	30
	☾Ծն. իր. 13 ժ. 34 ր.	
9	✠Կիր. ակ. Թ. գկնի Ս. Խաչի: Հարանիլ:	1
10	Բշ. բն. Ս. Մեղիտոսի Անտիոքայ հայրապետին եւ Միւսայ Եգիպտացւոյն եւ միւս Մեղիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային եւ Զենոնի սարկաւագին:	2
11	Դշ. թկ. Ս. Դեմետրեայ վկային եւ Բարսղիկոսի քահան.	3
12	Դշ. գն. Պանիլ:	4
13	Եշ. գկ. Ս. Սարգիսայ, Սամուելայ եւ Աբիբայ սարկաւագին, Ռամանոսի միայնակեցին, մանկանն խոստովանողի Հիւսիսոսի գինաւորին:	5
14	♔Ուր. դն. Պանիլ:	6
15	Ընթ. ոկ. Ս. Առաքելոցն Անդրեի եւ Փիլիպպոսի:	7

Օր		Լ.
	☽Ա. իր. 22 ժ. 45 ր.	
16	✠Կիր. ան. Թ. գկնի Ս. Խաչի: Բարեկենդան Յիսնակի պանոց:	8
17	Բշ. ակ. ա. օր Յիսն. պանոց:	9
18	Դշ. բն. բ. օր Յիսն. պանոց:	10
19	Դշ. թկ. գ. օր Յիսն. պանոց:	11
20	Եշ. գն. դ. օր Յիսն. պանոց: Նախատօնակ:	12
21	✠Ուր. գկ. և. օր Յիսն. պանի. Տօն Երից ամանց Ընծայման Ս. Աստուածածնի ի տաճարն:	13
22	♔Ընթ. դն. Ս. Գրիգորի սքանչելագործին, Նիկոլայոսի հայրապետին եւ Միւռոնայ եպիսկոպոսին:	14
23	✠ Կիր. դն. Ա. Յիսնակի: Հարանիլ:	15
	☾Լր. իր. 7 ժ. 56 ր.	
24	Բշ. ան. Ս. Կուսանացի Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ:	16
25	Դշ. ակ. Ս. Դանիկիանոսի քահանային, Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի եւ Ոնեսիմեայ եւ այլոց աշակերտացն Պողոսի:	17
26	Դշ. բն. Պանիլ:	18
27	Եշ. թկ. Ս. Կղեմայ հայրապետին եւ Բազարասայ Տոմոմենոյ եպիսկոպոսին:	19
28	Ուր. գն. Պանիլ: Նախատօն.	20
29	✠Ընթ. գկ. Ս. Առաքելոցն եւ առաջին Լուսաւորչացն մեծոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:	21
30	✠Կիր. դն. Բ. գկնի Յիսնակի:	22
	☽Վշ. իր. 17 ժ. 07 ր.	
	Նոյեմբերի 1-ից մինչեւ այսօր օրը պակասել է 1 ժ. 19 ր.	

ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 ՕՐ

Օր		Լ.
1	Բշ. գկ. Ս. Գեւնարիոսի եպիսկոպոսին եւ Մեսկերիոնի զինաւորին, Յակովկայ եւ Բուսարիառայ:	23
2	Դշ. ամ. Ս. Կուռնելիոսի հարիւրապետին եւ Զմաւօնի ազգականին Քրիստոսի, որ խալեցաւ Յերուսաղէմ, Պօղիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ եւ ս. վկայիցն որ յարեւելս կատարեցան:	24
3	Դշ. ակ. Պաւիլ:	
4	Եշ. բմ. Ս. հարցն եգիպտացւոց, Պօղոսի, Պօղայ, Մակարայ, եւագրի, Յովհաննու Գրնեցւոյն, Յովհաննու Կարամանասակին, Նեղոսի, Արսենի, Սիսոյեանու, Դանիէլի, Սրապիոնի, Պիմենի եւ այլոց ս. հարցն:	25 26
5	Ուր. բկ. Պաւիլ:	
6	Աշ. գմ. Ս. Նիկողայոսի Զմիւռնացւոյսմանկ եպագործ հայրապետին:	27 28
7	✠ Կիր. գմ. Դ. զկնի Յիսն. Բարեկենդ. Ս. Յակովբայ պան. ☉ Ծն. յա. 2 ժ. 18 ր.	29
8	Բշ. դմ. Պաւիլ: Ս. Մինասայ, եւմոգենայ եւ Դրաքոսի եւ կամաւոր ոդմասացն՝ Յովհաննու եւ Ալեքսանդրոսի: Նախատօնակ:	1
9	✠Դշ. դկ. Պաւիլ: Տօն Յոյսեթան Ս. Աստուածածնի 'ի յԱնկոպ:	2
10	Դշ. ամ. Պաւիլ: Զմեռնաւոր եւ արեւադարձ գեղեցկն սկսում է երկարել եւ գիշերը կարճանալ:	3
11	Եշ. ակ. Պաւիլ: Ս. Եւստաթիոսի, Օգանիսիոսի, Եւգինեսի, Ոմրեաս. եւ Մարդար.	4
12	Ուր. բմ. Պաւիլ: Նախատօն:	5
13	Աշ. բկ. Ս. Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգեի ճգնաւորին եւ Մելիտաստի եպիսկոպոսին:	6
14	✠Կիր. գմ. Դ. զկնի Յիսն. Հարսանիք:	7

Օր		Լ.
	Հռ. յա. 11 ժ. 29 ր.	
15	Բշ. գկ. Ս. Հայրապետացն Եղնատիոսի եւ Ապդեի եւ Մարուքայի եպիսկոպոսին:	8
16	Դշ. դմ. Ս. Թեոդոսիպայ եպիսկոպ. եւ Թեոդիմայ վարդապետի յորից զինաւորացն Բասոսի, Եւսեբի, Եղիգի եւ Բասիլիկոսայ:	9
17	Դշ. դկ. Պաւիլ:	
18	Եշ. ակ. Ս. Կուռամի, Խնդոսի, Գամալիէլի եւ Դեղերիկ. քան. եւ եկ. Բիւրուղի որ այրեցան յեկեղեցին Նիքիմիդացւոց:	10 11
19	Ուր. ակ. Պաւիլ:	
20	Աշ. բմ. Տօն Նախավկայ եւ ամենդամիկ բազաւորին մերոյ արքայն Աբգարու:	12 13
21	✠Կիր. բկ. Ե. զկնի Յիսն. ☉Լր. յա. 20 ժ. 40 ր.	14
22	Բշ. գմ. Ս. Աբրահամու եւ Խարենայ եւ անուամբ բարձշկացն՝ Պղմայի եւ Գամիանոսի եւ Ասնուամատոյ վկայիցն: Նախատօնակ:	15
23	Դշ. գկ. Ս. Գաւրի մարգար. եւ Յակովբայ առաքելոյն:	16
24	Դշ. դմ. Պաւիլ: Նախատօն: Յ. եւ Ռ. ձրագալայ Ծննդ.	17
25	Եշ. դկ. Ս. Ստեփանոսի նախավկային եւ առաջի մարտիրոսին:	18
26	✠Յ. եւ Ռ. Ծննդեան Տեառն: Ուր. ամ. Պաւիլ: Նախատօն.	19
27	✠Յ. եւ Ռ. բ. օր Ծննդեան: Աշ. ակ. Ս. Առաքելոյն Պետրոսի եւ Պօղոսի:	20
28	✠Յ. եւ Ռ. գ. օր Ծննդեան:	
29	✠Կիր. բմ. Զ. զկնի Յիսն. Բշ. բկ. Ս. Որդւոց Որոտման, Յակովբայ առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին:	21 22
30	Դշ. գմ. ա. օր Ծննդ. պան. ☽Ալ. յա. 5 ժ. 51 ր.	
31	Դշ. գկ. բ. օր Ծննդ. պան.	23 24

Դեկտեմբ. 1-ից մինչեւ այսօր օրն ավելացել է 1 ժ. 27 ր.

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԱՐՁԱԿՄՈՒՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐ

5, 6, 7 եւ 13 **Յունվարի**—Տօն Ծննդեան եւ Աստուածայայտ. Քրիստոսի:

Յունվարի 14—Աստուածայայտի Միրոյի Ա. Վեհափառ Կաթողիկոսի:

Փետրվարի 14—Տեառնընդառաջ:

,, 13— Ս. Վարդանանց զօրավարացն:

Մարտի 22—Մուտն 'ի Վիրապն Ս. Գրիգորի Լուսաւորչին:

Ապրիլի 7—Տօն Աւետման:

Յունիսի 7—Ելն 'ի Վիրապէն Ս. Գրիգորի Լուսաւորչին:

Յունիսի 21—Գիւտ նշխարացն Ս. Գրիգորի Լուսաւորչին:

Յունիսի 26—Ս. բարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ:

Յուլիսի 19—Ս. Առաքելոյն Թադէոսի եւ Սանդիտայ կուսին:

Սեպտեմբերի 8— Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի 'ի յԱնկոպ:

Սեպտեմբերի 28—Տաճեռնարէ Ս. Օծման Վեհափառ Միրոյի Ա. Կաթողիկոսի:

Նոյեմբերի 21—Բնծայումն Ս. Աստուածածնի 'ի տաճարն:

Նոյեմբերի 29 — Ս. Առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:

Դեկտեմբերի 9—Տօն Յղութեան Ս. Աստուածածնի 'ի յԱնկոպ:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Ապրիլի 23 — Աստուածակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսրուհւոյ Ալէքսանդրա Թեոդորովնայի:

Մայիսի 6—Ծննդեան Ն. Կ. Մ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչի:

Մայիսի 14 — Թագադրութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչի եւ Ալէքսանդրա Թեոդորովնայի:

Մայիսի 25 — Ծննդեան Ն. Կ. Մ. Թագուհի Կայսրուհւոյ Ալէքսանդրա Թեոդորովնայի:

Յունիսի 22 — Աստուածակոչութիւն Ն. Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիա Թեոդորովնայի:

Օգոստոսի 25—Յիշատակ նուաճման արեւելեան Կովկասու:

Հոկտեմբերի 21—Գահակալութիւն Ն.Կ. Մ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչի:

Նոյեմբերի 14—Ծննդեան Ն. Կ. Մ. Մայր Թ. Կայսրուհւոյ Մարիա Թեոդորովնայի:

Նոյեմբերի 22—Ծննդեան Ն. Կ. Մ. Թագաժառանգ Կայսեր Միխայիլ Ալէքսանդրովչի:

Դեկտեմբերի 6—Աստուածակոչութիւն Ն. Կ. Մ. Կայսեր Նիկոլայ Ալէքսանդրովչի:

ՍՐԲՈՒՀԵԱՑ ՏՕՆԵՐԸ 1903 Թ.

ԱՆՈՒՆՆԵՐԸ	Ամիս	Օր	ԱՆՈՒՆՆԵՐԸ	Ամիս	Օր
Ազապի	Յուլիս.	31	Կղոդիա	Յունվ.	23
Ակիլինէ	Հոկտ.	23	Հեղինէ	Յուն.	17
Աղաւնի	Յունվ.	6	Հռիփսիմէ	Յուն.	2
Աղէքսանդրա	Յուն.	19	Դամբէուհի	Սեպտ.	29
Անատոլս	Օգոս.	7	Մանէ	Յուն.	10
Անթառամ	Օգոս.	17	Մարթա	Հոկտ.	20
Աննա	Օգոս.	26	Մարիամ	Օգոս.	17
Աբրեմիս	Հոկտ.	23	Մարիանէ	Սեպտ.	23
Բենիամին	Յունվ.	6	Յուլիանէ	Նոյեմ	24
Գայանէ	Յուն.	3	Յուդիթա	Յունվ.	21
Գոհար	Սեպտ.	1	Յուսանիանէ	Յուլ.	21
Դշխոյ	Յուն.	17	Նեբտարինէ	Սեպտ.	30
Դոմնա	Դեկտ.	18	Նունէ	Յուն.	10
Ելպիս	Յուլ.	31	Շամունէ	Յուլ.	28
Եղիսաբէթ	Օգոս.	26	Շողակաթ	Օգոս.	16
Երմոնէ	Սեպտ.	30	Շուշան	Սեպտ.	23
Եւդինէ	Յունվ.	23	Պեղագիա	Հոկտ.	7
Եւարաքսէ	Հոկտ.	9	Պիստոս	Յուլ.	31
Եւփիմէ	Յուլ.	21	Սանդուխտ	Յուլ.	19
Թեկղի	Հոկտ.	7	Սոփիա	Յուլ.	31
Թէոդոտէ	Հոկտ.	27	Վառվառէ	Հոկտ.	7
Թէոփիստէ	Սեպտ.	30	Վասիլուհի	Նոյեմ	24
Ինդոս	Դեկտ.	18	Փերրոնէ	Սեպտ.	23
Խոսրովիդուխտ	Յուն.	28	Քրիստինէ	Յուլ.	21
Կալինիկէ	Հոկտ.	23			

1002
93

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Именная, Мясникяна
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄՕՐ ՆԶԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ընտանեկան օջախում, ուր կինը իր պաշտօնն է մատուցանում մարդկութեանը, իւր ներքին արժանաւորութեան զօրութեամբ չպէտք է հանդուրժի ոչինչ անմաքուր կեղծ ու պատիր և սուտ բաներ։ Նորա առաջին հոգսը, որպէս վերին աստիճանի ներդաշնակ արարածի, այն պէտք է լինի, որ սոյն ներդաշնակութիւնը թագաւորեցնէ, իւր բոլոր շրջապատողների վրայ։ Տան դոհունակութիւնը և անդորրութիւնը,—ընտանեկան երջանկութեան առաջին պայմաններն են։ Ամուսինը և զաւակները այն համոզմունքով պիտի սնուած լինին, որ ոչ մի տեղ նոցա համար չի կարող այնքան դուրեկան լինել, ոչ մի տեղ այնքան լաւ, որքան իրանց տանը։ Մեծ մասամբ կինը ինքն է մեղաւոր, որ մարդը բաւականութիւն է փնտրում ընտանեկան շրջանից դուրս։ Սիրելի և խելացի կինը գիւրութեամբ կը գրաւի մարդուն և սիրել կը տայ իւր ընտանիքը։ Միևնոյն ժամանակ, նա օգնելով մարդուն նորա ըզբաղմունքների մէջ, դաստիարակելով զաւակներին և մերձաւոր բարեկամների շրջանում զարթեցնելով համակրութիւն դէպի ամեն գեղեցիկն ու վսեմը, նա հասնում է այնպիսի նշանակութեան, որ վեր է ամեն տեսակ փառասիրական և հաճոյամոլութեան ցոյցերից։ Սորա համար ամենևին հարկաւոր չեն մեծ միջոցներ, բաւական են ամենահասարակ պայ-

մաններ։ Ճշմարիտ գեղեցկութեանը հարկաւոր չէ ոչ հարստութիւն և ոչ փայլ. նա ինքը ամենին գեղեցկութիւն է շնորհում։ Անվիճելի է, և այն որ ճշմարիտ լուսաւորութիւնը ամենից առաւել պարզութիւն է սիրում։ Թողնենք հոգւով և սրտով աղքատներին նոցա փայլուն արտաքինը, նոցա գեղեցիկ հանդերձները, շքեղ զարդարուած սենեակները, ճոխ սեղանները։ Մի՞թէ այս շռայլութեանը, որ երբեմն մի առանձին գոհունակութիւն էլ չի պատճառում, կ'նախանձի խելացի մարդը, որ առանց այդ էլ վայելում է մաքուր հոգեկան բաւականութիւններ։

Խոհեմ մայրը ամենից առաւել պէտք է աշխատի զարթեցնելու զաւակների մէջ սէր դէպի պարզութիւնն ու համեստութիւնը. սովորեցնի նոցա զանազանելու արտաքին փայլը ներքին արժանաւորութիւնից, չ'արհամարելով ոչ մէկը և ոչ միւսը։

Ո՞վ որ մանկութիւնից ընտելացել է երջանիկ լինել ընտանեկան շրջանում, նա դժուար թէ թեթևամտութեամբ զգայական բաւականութիւնների յետևից ընկնի, որոնք այնքան շատերի կորստեան պատճառ են լինում։ Իսկ այս դրժարակութեան մէջ պէտք է որոնել։

Հոգալով մանկան զգայականութիւնը զարթեցնելու և նորան ուղղութիւն տալու մասին, նա հէնց դրա պատճառով առաջ է բերում համերաշխութիւն, որը ապագայում սերտ կապերով միաւորում է պատանիների ամբողջ սերունդ։ Փառասէր և գուարճութիւնների յանձնատուր եղող կինը ժամանակ չունի զաւակների հետ ապրելու։ Մանկան ողջ ապագան գտնում է մօր ձեռքում։ Նա կարող է ստորացնել կամ բարոյապէս վերանորոգել ամբողջ սերունդ։ Մեծ և ծանրը նախատինք է կանանց համար այն, որ նոցանից քչերը

միայն լիովին հասկանում են իրենց նշանակութիւնը և իրանց կեանքը ծուլութեան, ազմկալի բաւականութիւնների կամ տնային տնտեսութեան մանրակրկիտ վէճերի մէջ են անցկացնում։ Մինչդեռ նոքա պէտք է նուիրէին իրենց անձը ամենաազնիւ ձգտումների։

Մեծ մարդիկ գրեթէ առանց բացառութեան ընտիր մայրեր են ունեցել։ Բայց և իւրաքանչիւր կնոջ սրտում միշտ բաւականաչափ զգացմունք և անձնուիրութիւն կայ դէպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը. դժբախտաբար, այս գեղեցիկ սերմերը կամ բոլորովին խեղդւում են, կամ թէ արժանաւոր, վսեմ նպատակների պակասութեան պատճառով չեն հասնում կատարեալ զարգացման։ Ինքն իրան ազնուացնելով կինը հէնց դրանով կը նպաստի ամբողջ հասարակութեան բարոյական վերածնութեան։ Կնոջ լոկ երևալը բարերար ներգործութիւն է ունենում բոլոր շրջապատողների վրայ, այդ պատճառով էլ նա պէտք է արժանի լինի այդպիսի ներգործութեան։ Այն ընտանիքի մայրը, որի աչքի առաջն է իւր պարտաւորութիւնների իդէալը, որովհետև նա գիտէ որ այս տաղտկալի մօգայիկից պէտք է գեղեցիկ տեսարան դուրս գայ։ Եւ ի՞նչ մեծ վարձատրութիւն նրա համար, երբ նա վերջապէս կարող է մտցնել իրական կեանքի մէջ արդարասէր և ազնիւ, աներկիւղ և պարտաւորութիւններին հաւատարիմ զաւակներ։

Մօր ազդեցութիւնը առաւել զօրեղ է աղջկայ, քան թէ տղայի վրայ. աղջկայ համար նա պէտք է լինի ամենալաւ օրինակ նորա ամբողջ կեանքի ընթացքում։ Արդեօք օրիորդը կարո՞ղ է արհամարանքով նայել ընտանեկան պարտաւորութիւնների վրայ, երբ նորա նազելի, կրթուած մայրը կատարում է դոցա այնքան խնամքով, հոգատարութեամբ և տոկունութեամբ։

Արդեօք սիրելի մօր խստապահանջ պարզութեան առաջ չէ՞ լռիլ հպարտութեան և դէպի շքեղ զարդերն ու զգեստներն ունեցած կրքի ամեն տեսակ տրտունջը։ Բայց ինչ մեծ դժբախտութիւն է այն օրիորդի համար, որը փառասէր և ունայնամիտ մայր ունի, որը սրտաորով սպասում է այն բոպէին, երբ ինքը պէտք է իւր աղջկան զուգուած զարդարուած ժողովարանը տանի։ Սեփական արժանաւորութեան զգացմունքից զուրկ մայրը չի կարող զարթեցնել իւր դստեր մէջ սեփական արժանաւորութեան զգացմունք։

Մայրական զգացմունքը պէտք է ազատեր թեթևամտութիւնից ու պճնասիրութիւնից և այն կանանց, որոնք արդէն կորստեան անդունդի ծայրին են կանգնած։ Շատ կանայք կարծում են որ դեռ էլի ժամանակ կը լինի իրանց կենցաղավարութեան եղանակը փոխելու, երբ իրանց դուստրները կը մեծանան. բայց աւա՜ղ, այն ժամանակ արդէն ուշ է։ Մանուկը, բոյսի նման, զարգանում է այն մթնոլորտի համապատասխան, որը շնչում է։ Ապագայում ո՛չ մի խստութիւն չի կարող ուղղել այն, ինչ որ փչացուած է ձեռնունայն և չնչին մարդկանց վաղահաս ծանօթութեամբ։ Մանաւանդ օրիորդի համար դաստիարակութեան ժամանակ ամենից կարևորն է օրինակը։ Նորա քնքոյշ բնոյթը ընդունում է լաւ և վատ տպաւորութիւնները զարմանալի արագութեամբ, և նոքա նորա վերայ անհամեմատ առաւել զօրեղ են ներգործում, քան թէ տղայի վերայ։ Ինչպէս յաճախ մենք քարկոծում ենք թեթևամիտ կնոջը, բայց եթէ հարցնենք նորա մօր և նորա երիտասարդութեան հանգամանքների մասին,—այնուհետև բազմիցս մեր զայրոյթը կը փոխուի խորին ցաւակցութեան զգացմունքի։

ԿՆՈՋ ԴԵՐԸ

Ընտանեկան կեանքի մէջ, կինը ունի պաշտօններու ամենէն քաղցրը, ամենէն բարձրը և ամենէն դժուարինը միանգամայն. այն է՝ ընտանիքը կառավարելու, անոր երջանկութեան հսկելու, և առտնին անդորրութիւնը պահպանելու պաշտօնը։

Չենք կրնար ուրանալ թէ՝ ընտանեկան կեանքի ներքին երջանկութիւնը մեծաւ մասամբ կնոջմէն կախումն ունի, հետևաբար կինը պարտի ունենալ ընտանեկան կեանքի մէջ իր ստանձնելիք մեծ դերին գիտակցութիւնը, և ըստ այնմ պատրաստուիլ զայն կատարելու, մտածելով թէ՝ ինքը պիտի ըլլայ պատասխանատու եթէ իր ընտանիքը թշուառ և ապերջանիկ վիճակ մը ունենայ, ինչպէս նաև ինքը պատճառ՝ եթէ խաղաղ ու երջանիկ ըլլայ անոր կեանքը։

Թէև ֆիզիքապէս փափուկ ու տկար, սակայն բարոյապէս հզօր ու բարձր, կինը կարող է շատ մեծ ազդեցութիւն ի գործ դնել իրեններուն վրայ. ասկից զատ բնութիւնն ալ այնպիսի շնորհներով, հրապոյրներով օժտած է զինքը՝ որ այդ ազդեցութիւնը անդիմադրելի կը դարձնէ, և մեծապէս կը դիւրացնէ իր կատարելիք վսեմ դերին և նուիրական պաշտօնին դժուարութիւնները։

Եթէ իրենները բուռն ու կրքոտ են, իր մէկ ակնարկը, մէկ խօսքը բաւ է զանոնք քաղցրութեան բերելու։

Եթէ գիտնային կիները թէ ինչ՞ը կարող են ընելու, եթէ իրենց զօրութեան ազդեցութիւնը չափելու կարող ըլլային, և բնութեան իրենց վրայ դրած սրբազան պարտականութեանց գիտակցութիւնը լիովին ունենային, արդեօք քանի՞ քանի՞ ընտանեկան դժբաղդութիւններ, անհանգստութիւններ վերջ պիտի գտնէին և քանի՞ քանի՞ ընտանեկան յարկերու տակ երջանկութիւնն ու խաղաղութիւնը պիտի հաստատուէին . . ։

Կինն՝ երբ քաղցրահամբոյր, պարկեշտ ու ժրագլուխ է, հրեշտակն է ընտանեկան յարկին. ինչ դիրքի մէջ, ինչ անձուկ վիճակի մէջ ալ որ գտնուելու ըլլան, նա գիտէ իրենները երջանիկ դարձնելու գաղտնիքը. միշտ ժպիտը կը փայլի իր դէմքին վրայ, միշտ քաղցր և համոզիչ խօսքեր պատրաստ ունի իր շրթանցը վրայ. և ո՞վ է որ չմխիթարուիր, ո՞վ է որ երջանիկ չը զգար իր անձը, երբ ունի իր ընտանեկան յարկը դրախտ դարձնող այս պահապան հրեշտակը, կեանքի ամեն փորձութեանց մէջ անսասան, ամեն դառնութեանց մէջ համբերող, ամեն դառնութեանց մէջ անխռով ու հանդարտ... ասանկ կին մը ոչ ապաքէն Սողոմոնի ըսածին պէս «Պսակ է առն իւրումն»։

Իսկ ինչ պիտի ըսէր արդեօք իմաստունը այն կնոջ համար, որը ոտնակոխ ընելով բնութեան իր վրայ դրած Սուրբ պարտականութիւնները, քանդելու, աւերելու կելնէ իր ընտանիքին օջաղը։

Դաժան և խստադէմ, միշտ գանգատող, միշտ դժգոհ ինքնիրմէ և ուրիշներէն, անտանելի պատուհաս մը կը դառնայ իր ընտանիքին գլխուն, ինչպէս նաև պատճառ՝ կռիւներու, վէճերու, և կարգ մը գայթակղելի դէպքերու՝ զորս ցաւօք կը տեսնենք ու կը լսենք շատ անգամներ։

Այն ատեն իրեններն ալ իրաւամբ դուրսը կերթան փնտռելու երջանկութիւն մը՝ զոր չեն գտներ իրենց սեփհական տան մէջ, դուրսը գինետուններուն մէջ կուզեն վայելել իրենց ընտանեկան կեանքի դժբաղդութիւնները գոնէ վայրկենապէս մոռնալու տխուր հեշտութիւնը. կամ երեկոյթէ երեկոյթ, պարահանդէսէ պարահանդէս կը թափառին տեսնելու համար զուարթ, ժպտուն դէմքեր, լսելու համար անուշ խօսուածք, որմէ զրկուած են իրենց ընտանեկան յարկի մէջ։

Ի՜նչ յուսով աշխատին խեղճերը... ինչո՞վ մխիթարուին երբ օրուան անյաջողութիւններէն կամ ձախորդութիւններէն դառնացած տուն կը դառնան։ Ո՞վ սիրտ պիտի տայ իրենց. ո՞վ համոզիչ և քաղցր խօսքերով օրուան կեանքի նոր բանոր պայքարներուն պիտի պատրաստէ զիրենք. դաժան կիները... խստաբարոյ մայրը... դժգոհ քոյրը . . ։

Բնութիւնը երբ կինը կոչած է արդէն տանտիկին ըլլալու բարձր պաշտօնին, անոր շնորհած է անձնուէր և սիրող սիրտ, և համբերող հոգի, հետևաբար այն որ չունի ընտանիք մը բարւոք կառավարելու համար անհրաժեշտ եղող քաղցրահամբոյր ոգին արժանի չէ կին կոչուելու, արժանի չէ ամուսին և մայր սրբազան անուններուն։

Կործանուած համարելու է արդէն այն ընտանիքը՝ որոյ հայրը ձանձրացած իր տունէն դուրսը զուարճութիւն փնտռելու կերթայ. կնոջ ձեռքն է սակայն այս մեծ աղէտքին առաջքն առնել, և ամուր կապերով կապել զայն իր ընտանիքին, ինքն անձամբ տալով անոր այն ամեն հաճոյքները, երջանկութիւնը զորս նա կը ջանայ դուրսը գտնել, և կա՛յ միթէ տրտմութենէ անխառն կատարեալ երջանկութիւն ընտանեկան յարկէն դուրս. միշտ դառնութիւն մը կը

ծածկէ ան քաղցրիկ երևութի մը տակ. միշտ մահացու թոյն մը կը պահէ հրապուրիչ արտաքինի մը ներքև։

Եթէ կինը ուսեալ ըլլայ, իր մտքի զարգացումը կրնայ հզօր օժանդակ մը ըլլալ իրեն այս մեծ գործին մէջ։ Ամեն նիւթերու վրայ լուրջ ու յանկուցիչ խօսակցութեամբ, կրնայ զբաղեցնել զայն. և իր ճիշտ դատողութեամբ, գեղեցիկ գաղափարներով, օգտակար խրատներով շահիլ նաև նորա յարգանքն ու համարումը, բան մը՝ որ անհրաժեշտ է կնոջ, ընտանեկան կեանքի մէջ իր ազդեցութիւնը անխախտ պահելու համար։

Ահա՛ կը տեսնենք թէ՝ կնոջ մտաւոր ու բարոյական զարգացումը, նկարագրի բարձրութիւնը, հոգւոյ և սրտի ազնուութիւնը, պարկեշտ ու բարի վարելն, ապահովագոյն գրաւականներ են ընտանեկան կեանքի երջանկութեան։

ԴԱՀԻՐ

Մ. Ռ. Ի

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ

Երկայ դարուս մէջ թէպէտ մտքերը զարգացած, զգացումները նրբացած և գաղափարները բարեփոխուած են, սակայն կան դեռ մարդիկ՝ որոնք կը պնդեն թէ՝ ուսումն ու դաստիարակութիւնը բոլորովին աւելորդ են իգական սեռին համար, թէ կինը սաեղծուած է միմիայն ընտանեկան կեանքի մէջ բարօրութիւն մտցնելու համար, թէ կին մը կատարեալ է երբ քաջ կը ճանչէ իր խոհանոցը, իր աւելը, իր լուացքը, իր կարը և այլն։

Դժբաղդաբար այսպէս մտածողը աւելի մեր հայ բանուոր դասակարգն է, այն դասակարգը՝ ժողովրդեան ամենէն ազնիւ ու մտացի տարրը կարտադրէ, որ ամէն բանի մէջ զարմանալի յառաջադիմութիւն ցոյց կուտայ, որոյ խաւերուն մէջէն դուրս կուգան այնքան նշանաւոր մարդիկ ու կանայք։

Այո՛... այս դասակարգն է աւելի մեր մէջ, որ կը խորհի թէ՝ ուսումն ու դաստիարակութիւնը թող թէ օգտակար չեն, այլ կարի վնասակար ազդեցութիւն ի գործ կը դնեն կնոջ մտքին ու հոգւոյն վրայ. մանաւանդ երբ կինը ժողովրդեան աղքատիկ դասին կը պատկանի, այն ատեն ուսումն ու դաստիարակութիւնը բարոյականի դէմ զեղծումները շատցնելու կը նպաստէ, զի՞ր աղքատ կին, կըսեն, երբ ուսեալ է ու բարեկիրթ, երբ ունի ազնիւ ճաշակ, փափուկ զգաց-

մունք և բարձր գաղափարներ, կը հանդուրժէ արհեստաւորի համեստ յարկին նեղ մթնոլորտին մէջ ապրիլ, իր երիտասարդութեան ու գեղեցկութեան ծաղիկը՝ խոհանոցի ու լուացքի տաղտկալի պարապմանց մէջ թոռմեցնել։

Նա՝ սալոններ, հոյակապ տուներ կերազէ, բարձր ընկերութիւններ՝ յորս կարենայ փայլեցնել իր ընտիր դաստիարակութիւնը, իր տաղանդները։ Աղքատիկ արուեստաւորը բնականաբար չկրնար իր կնոջ կամ աղջկան այս երազները իրագործել և ահա այս պատճառներով յառաջ կուգայ անհամաձայնութիւն ընտանիքին մէջ։

Ցաւալի է որ այսպէս խորհող մարդիկ սոսկ քարոզելով չեն շատանար, այլ կը զրկեն նաև իրենց աղջիկները ուսման ու դաստիարակութեան կենսական հիւթեն, վախնալով որ մի գուցէ և թունաւորուի անոնց կեանքը . . .

Իսկ գալով մայրերուն, անոնք ալ թէրևս իրենց ամուսիններէն աւելի համոզուած այս պատճառաբանութիւններուն, հաղիւ թէ պարզ ընթերցանութիւն մը կամ առ առաւելն ուսման տարրական սկզբունքներն ուսուցանել կուտան անոնց, և ահա «իմ աղջիկս վարդապետ պիտի ըլլայ, վարժուհի՞ պիտի ըլլայ» գռեհիկ խօսքերը նետելով ամեն անոնց երեսին՝ որոնք կը յորդորեն զիրենք դեռ ևս թողուլ զանի վարժարանը, կը քաշէն կառնեն խեղճ աղջիկը ուսման դըրկէն ինչպէս մանուկը իր մօր ծիծէն, մեղքնալու անոր բնաձին յատկութիւնները։

Անուրանալի ճշմարտութիւն մընէ սակայն որ կին մը պարտի սիրով պարապել տնական ամեն տեսակ գործերու, և սովրել ու գիտնալ գլխաւորաբար տնարարութիւն, բան մը՝ որ անհրաժեշտ է ընտանիքը բարեոք ու խաղաղ վիճակի մէջ պահելու համար։

Գաւառի կանանց մասին խօսելով, բարեկամ մը կըսէր

թէ՝ «այս կանայք սոսկ երեք շրջան կը ճանչեն կեանքի մէջ, ծնիլ, ամուսնանալ, մեռնիլ, և կը կարծեն թէ՝ այս երեք շրջաններն են միայն որ կնոջ կեանքի սահմանը կը գծեն»։

Եւ յիրաւի գաւառներու մէջ մեծաւ մասամբ զանց առնուած է ուսումն ու դաստիարակութիւնը։ Սակայն ոչինչ աւելի վսեմ և յարգելի է քան ուսեալ կինն մանաւանդ երբ իր աղքատութեանը մէջ ուսեալ է. վասն զի ի բնէ ըլլալով հանճարեղ, և ունենալով ազնիւ հոգի, զգայուն սիրտ, փափուկ զգացմունք, ուսմամբ և դաստիարակութեամբ աւելի կը զարգացնէ այդ բնատուր յատկութիւնները և կըլլայ հրեշտակը ընտանեկան յարկին։

Գալով այն կարծիքին թէ՝ ուսեալ կին մը չհանդուրժեր երբէք խոնարհ յարկի տակ բնակիլ, դա սխալ է բոլորովին, ընդհակառակը, երբ կինը ստացեր է լուրջ, ընտիր և հիմնական դաստիարակութիւն և Աւետարանի ոգւով է սներ, երբէք դժգոհութիւն չյայտներ իր վիճակէն, սիրով կը խոնարհի իր կեանքի պահանջներուն ամեն նեղութիւններուն մէջ իսկ մխիթարութիւն փնտռելով այն լուրջ գաղափարներու մէջ, որով օժտեր է իր միտքը և այն ազնիւ զգացումներուն մէջ՝ որով զարդարեր է իր հոգին։ Երբէք ամօթ չը համարիր աղքատութիւնը, այլ վեհութեամբ կը տանի զայն։ Եթէ կին է՝ իր ամուսնոյն կօգնէ ինք ևս աշխատելով իր կողմէ, և երբ օրուայ կեանքի փոթորիկները ամպ մը նետեն անոր ճակտին, կը փարատէ զայն քաղցր ու մխիթարիչ խօսքերով, զորս կին մը գիտէ միայն ստեղծել։ Իսկ եթէ աղջիկ է, կը վազէ իր հօրը քով կը պատմէ անոր դպրոցին մէջ տարած յաղթանակները, առած բարի նիշերը, և ահա ժպիտը կերևի հօրը շրթունքներուն վրայ, և իր ընտանեաց ծոցին մէջ կը մոռնայ ամեն բան, վիշտն ու յոգնութիւն, զայրոյթ ու անյաջողութիւն, և ինքզինքը աշխարհիս ամենաբաղդաւոր ու երջանիկ անձը կը համարէ։

Իսկ խօսք չունիմ այն կանանց համար՝ որոնց առաջ դաստիարակութիւնը սոսկ երևութական է, որոնց գանկը լի է վիպական, օդային գաղափարներով, որոնք մեծցեր են այն սկզբունքով թէ՝ գեղեցիկ սեռը ստեղծուած է սոսկ հագուելու, շքուելու, պտտելու, զուարճանալու և ճոխութեան մէջ զվարճանալու համար միայն. անոնք չեն ճանչեր կնոջ հոգւոյն ազնիւ ու վեհ ձգտումները դէպ ի բարին ու ճշմարիտը:

Իրաւ է թէ երբ ուսումն ու դաստիարակութիւնը լուրջ և հիմնական սկզբունքներուն վրայ կրթնած չըլլան, կարի վնասակար ազդեցութիւն կունենայ իգական սեռին համար:

Ուսումն ու Դաստիարակութիւնը միևնոյն ժամանակ հրապուրիչ կը դարձնեն կինները:

Ատէն մը համակրելի գրագէտ մը խնդիր յարոյց թէ՝ ինչու հայ աղջիկները չեն գրաւեր:

Ադոր պատճառը ո՞չ ապաքէն դաստիարակութեան պակասութիւնն է... մինթէ հայ աղջկանց սև, խոշոր և վառ-վառուն աչքերը նուազ հրապուրիչ են օտարու հիներու աչքերէն, մինթէ կարելի է համեմատել հայ աղջկանց համեստ և բնական գեղեցկութիւնը Եւրոպուհիներու շատ անգամ կեղծ ու լպիրշ գեղեցկութեան հետ: Ուրեմն սոսկ գեղեցկութիւնը չէ՝ որ հրապուրիչ կը դարձնէ կինը այլ դաստիարակութիւնն է: Գեղեցկութիւնը միայն աչքերը կը հրապուրէ, իսկ ուսումն ու դաստիարակութիւնը «խօսել գիտնալ»ը հոգին ու սիրտը միանգամայն կը յափշտակեն:

Կը կրկնեմ, եթէ հայ աղջիկը կատարեալ և հիմնական դաստիարակութեամբ օժտուի օր մը, կը գերազանցէ ամեն ազգի աղջիկները իր աւանդական համեստութեամբ բնական գեղեցկութեամբ և մաքուր բարոյականով:

ԳԱՀԻՐԷ

Մ Ա Ռ Ի

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

(Բեօմէլի մանկավարժական նամակներից)

Օրինակը կանոնից աւելի է ներգործում», ասում է հին առածը: Ստախօսութիւնը տարածւում է ու արմատանում միայն այն պատճառով, որ երեխաները միևնոյնը տեսնում են ու սովորում իրանց դաստիարակներից և առհասարակ հասարակութիւնից: Դուք զարմանում էք: Դուք չէք կարող ընդունել թերևս, որ ծնողներն ու միւսները իրանց օրինակով երեխաներին ստախօսութիւն սովորեցնէին: Դրժբախտաբար ասածներս ճշմարիտ են: Դիտեցէք այժմեան հասարակութեանը և դուք կտեսնէք, որ նորա մէջ տիրապետում է սուտը և ստախօսութիւնը: Մենք ևս՝ ամեն տեսակ դաստիարակներս, ճշմարտախօսութեան վերաբերմամբ խիստ չենք, ամեն անգամ չենք կշռադատում մեր խօսքերը: «Ս. հագին, սարսափելի, անհաւատալի, զարմանալի, զարհուրելի» և այլ այս տեսակ չափազանցութիւններ գործ ենք ածում այնքան յաճախ, որ նոքա կորցնում են իրանց իսկական նշանակութիւնը: Օրինակ, մայրն ասում է երեխային. «քանի հազար անգամ քեզ ասել եմ, որ չանես այդ...» կամ՝ «դու երբէք մարդ չես լինի...» կամ՝ «միշտ քո խաղալիքը իւր տեղը չէ» և այլն: Իհարկէ երեխան զգում է որ մայրը չափազանցութիւն է անում և թէպէտ հասկանում է, որ այդ արածը բարի նպատակով է, բայց նա չի կարող չտեսնել և այն, որ մայրը ճշմարիտ չէ ասում: Այս տեսակ օրինակներից նա կազմում է իւր համար մի նախագիծ և սկը-

սում է սուտ խօսել նոյնպէս բարի նպատակով։ Փոքր առ
փոքր երեխայի մտքի և նորա արտաբերած բառերի մէջ երկ-
պառակութիւն է պատահում, բառերը նորա համար մի պայ-
մանաւոր նշանակութիւն են ստանում և նրա ճշմարտախօ-
սութեան զգացմունքը կամաց կամաց թուլանում է։ Սրանից
քանի ժամանակ առաջ աշակերտներից մէկը դրել էր իւր
ծնողներին. «գրեթէ մեր ուսումնարանի բոլոր աշակերտները
հիւանդ են կարմրուկով», մինչդեռ աշակերտների քառորդ
մասն անգամ հիւանդ չէր։ Դատապարտելու չէ աշակերտին,
նա իւր չափազանցութեամբ նմանել էր միայն հասարակու-
թեան մէջ ընդունած ձևին։

Ծնողները շատ անգամ պատմելով իրանց երեխաների
մասին փոքր ի շատէ չափազանցացնում են նոցա լաւ կող-
մերը։ Երեխաները, մանաւանդ փոքրերը, այս նկատելով կաշ-
խատեն իրանց աւելի լաւ ցոյց տալ, քան իսկապէս են. ուս-
տի զարմանալի չէ, եթէ այդ տեսակ երեխաները դառնան
նախ պարզամիտ և ապա անտանելի սնապարծներ։ Մի ան-
գամ մի մայր ցոյց տալով ինձ մի նկար, որ իբրև թէ իւր
որդին էր նկարել, ասաց. «վատ չէ նկարած, այնպէս չէ՞ և
գրեթէ բոլորն ինքն է նկարել»։ Երեխան գիտենալով, որ
նկարը մեծ մասամբ ուսուցիչն է նկարել, այս խօսքերից
քաշուեց և աչքերը հեռացրեց ինձանից։ Մի ուրիշ օրինակ.
„Նայեցէք, ինչպէս արդէն լաւ գրում է մեր Վարդանը“,
ասաց մի անգամ մի հայր, ցոյց տալով ինձ մի գրած թուղթ.
«Մինթէ այս նորա գործն է», հարցրի ես. «Այո՛», պատասխա-
նեց հայրը և դառնալով դէպի երեխան, աւելացրեց. «Դու
առանց ուրիշի օգնութեան ես գրել. այնպէս չէ՞»։ Վերջը ես
իմացայ, որ երեխան ոչ մի տառ ինքը չէր գրել։ Դատեցէք
այժմ, ինչ հետևանք կարելի է սպասել այս վարմունքից
ճշմարտախօսութեան վերաբերմամբ։

Հարկաւոր չէ չափազանցացնել երեխայի ոչ արժանաւո-
րութիւնները և ոչ պակասութիւնները։ Օրինակ, շատ ան-
գամ ծնողները մի բանից վրդովուած լինելով, երեխայի ա-
մենաչնչին յանցանքի համար սաստիկ բարկանում են, գործ
են ածում խիստ բառեր ինչպէս՝ «դժբախտ, անպիտան, հրէշ,
աւազակ» և այլն, երբէմն բացի այս, պատժում էլ են։ Այս
տեսակ անարդարութիւնը նոյնպէս ստախօսութիւն է և եթէ
յետոյ նորա հետ քաղցր և սիրուն, երեխան երբէք չի մո-
ռանայ, որ նորա ծնողները անարդար էին։ Մի օրինակ ևս.
մի փոքրիկ աղջիկ կոտրեց մի բաժակ։ Մայրը բարկութիւնից
նորան ա ն շ ն ո ր հ ք և ա ն գ գ ո յ շ անուանելուց յետոյ աւե-
լացրեց. «գոնէ եղբօրիցդ օրինակ առնէիր նա միշտ զգոյշ է
և շնորհքով»։ Անցաւ մի քանի ժամանակ, այդ աղջկայ եղ-
բայրը մի այլ բան կոտրեց։ Այս հանգամանքում մայրը յան-
դիմանեց նրան և յարակցեց. «գոնէ քրոջիցդ օրինակ առնէ-
իր նա այդ տեսակ անզգուշութիւններ չի անում»։ Այս տե-
սակ անյաջող համեմատութիւնները երեխայի վերայ աւելի
մեծ տպաւորութիւն են թողնում։ Անշուշտ այս հանգամանք-
ներում դարձեալ երեխաները կհասկանան ծնողների սխալը
և նոցա անարդարութիւնը և սոցա հետևանքն այն է, որ
երեխաները սկսում են չհաւատալ ծնողների հեղինակութեանը։

Պատահում են և այնպիսի ծնողներ, որոնք սպառնում
են հետևեալ խօսքերով. «լռիր, ապա թէ ոչ լուսամուտից
դուրս կձգեմ»։ Առհասարակ երեխաները այս սպառնալիքից
չեն լռում, բայց իհարկէ նոցա լուսամուտից դուրս ձգելը
անկարելի լինելով, սպառնալիքը չի իրագործւում։ Ի՞նչ հար-
կաւոր է անհնար սպառնալիք գործ ածել։ Երեխայի հա-
յեացքով այդ ստախօսութիւն է և դժբախտաբար շատ յա-
ճախ է կրկնւում թէ տան մէջ և թէ ուսումնարանում։ Առ-
հասարակ սպառնալիքը ներգործում է երեխայի վերայ մի-

այն մինչև այն ժամանակ, երբ նա տեսնի, որ ոչ մի վնաս չկայ նրանից, երբ հասկանալ որ միայն վախեցնելու համար են սպառնում և ոչ կատարելու։

Շատ անգամ դաստիարակները խոստանում են պարգև տալ երեխային և այնքան են կատարում իրանց խոստումը, որքան և սպառնալիքը. այսինքն՝ այս հանգամանքում ևս, ինչպես և երեխայի հետ վարուելու զրեթէ ամեն մի դէպքում, սովորեցնում են երեխային ստախօսութիւն։ Դէպի մեծերը ծանրաբարոյ և ճշմարտասէր մարդիկ անգամ փոքրերի հետ հակառակ են վարուում կարծելով թէ երեխային մի այլ ձևով ևս կարելի կլինի վարձատրել։ Օրինակ մայրն ասում է երեխաներին. «եթէ դուք այսօր խելօք կլինէք, ես ձեզ երեկոյեան մի լաւ առակ կպատմեմ»։ Երեխաները ամբողջ օրը հանդարտ մնալուց յետոյ, երեկոյեան գալիս են մօր մօտ և խնդրում են կատարել խոստացածը։ Բայց մայրը շատ յոգնած է և յետաձգում է առակը վաղուան, թէև չգիտէ կը կարողանայ կատարել իւր խոստումը վաղը թէ ոչ։ Զեմ ասում, որ խոստացած բոլէին մայրը մտադիր չէ կատարելու իւր խոստումը, այլ ցանկանում է հանդարտեցնել երեխաներին կամ մի բան կատարել տալ նոցա—թէև այս ևս պահում է—ոչ. նա խոստանում է կատարելու դիտաւորութեամբ։ Բայց կարելի կլինէ արդեօք։ Ինչ փոյթ. կարելի է ասել, երեխաները պահանջող չեն։ Այնուամենայնիւ երեխան փոքրառ փոքր կդայ հեռևեալ եզրակացութեանը։ «Մայրիկս թէպէտ չկատարեց իւր խոստումը, բայց այդ փոյթ չէ, նա դրա փոխարէն այս ինչ բանը կատարեց»։ Այս եզրակացութիւնը նա սկսում է գործ դնել և իւր սեփական վարմունքին։ Միթէ կարելի է զարմանալ, եթէ երեխաները որոշեալ ժամանակին չաւարտեն իրանց գործը, և եթէ ոչ մի հնարով չեն համոզուի իրանց պարտականութիւնները ճշտու-

թեամբ կատարելու անհրաժեշտ լինելը։ Երեխան տեսնում է հակառակը և շատ կարելի է, որ ասէ. «մայրիկ կամ հայրիկ, դուք ինքդ ասում ես մի բան իսկ կատարում ես միւսը»։ Կարծեմ ասածներս որոշ ցոյց են տալիս, որ միշտ զգուշանալու է անհնար խոստումներ անելուց։ Այսպիսի, ըստ երևոյթին, չնչին հանգամանքները փոքր առ փոքր երեխայի բնաւորութեանն ու հասկացողութեանը մի որոշ ձև են տալիս։ Այս քանի մէջ մեծ դեր է խաղում ծնողների և դաստիարակների յարաբերութիւնը դէպի երեխաները. նայելով ինչ տեսակ է այդ յարաբերութիւնը, երեխան ճշմարտախօս կդառնայ կամ ստախօս։

II.

Ծնողները անշուշտ ուրախանալու են, երբ տեսնեն իրանց երեխաների մտաւոր զարգացման առաջին քայլերը, բայց ուրախանալու են արդեօք նոքա, երբ երեխաների միտքը վատ ուղղութիւն է ստանում, օրինակ երբ երեխաներն իրանց զարգացումն ի չարն են գործածում խորամանկ ստախօսութեամբ, ուրիշին ծաղրելով և կամ մի այնպիսի վարմունքով, որ միանգամայն վնասակար է։ Ի հարկէ ոչ. բայց ամեն մի քայլափոխում մենք տեսնում ենք, որ ծնողներն երեխայի այդ տեսակ արարմունքներով, մանաւանդ փոքրը երեխայի, զուարճանում են, եթէ նորա վարմունքը իւր ծնողներին չէ վերաբերում, այլ օտարներին, ապա թէ ոչ ծնողները շատ նեղանում են և մինչև անգամ պատժում երեխային։ Բայց ինչ մտքեր և զգացմունքներ պէտք է ծագեն երեխայի մէջ երբ նա տեսնի, որ այսօր պատժում են նրան այն բանի համար, որ երեկ ծիծաղ էր պատճառում և որի համար նրան գովեցին։

Մի անգամ իմ ծանօթներից մինն ընկերութեան մէջ պատ-

մում էր իւր սրսորդական կեանքից մի դէպք։ Նորա որդին, որ ներկայ էր այս պատմութեանը յանկարծ ընդմիջեց հօրը ասելով. «Հայրիկ, այդ սուտ է, դու հնարում ես բոլորը»։ Հայրը ուշադրութիւն չդարձրեց որդու խօսքերի վերայ և շարունակեց իւր պատմութիւնը. (երևի նա սովոր էր երեխայի այդ տեսակ վարմունքին). մենք իհարկէ ծիծաղեցինք։ Այս դեռ ոչինչ. երեխաները միշտ տեսնում են ու լսում սորանից անհամեմատ վատ ստախօսութիւններ։ Օրինակ. եկաւ մի հիւր. նրան ընդունում են շատ քաղցր և ուրախութեամբ, բայց հիւրի տանից դուրս գալուն պէս, իսկոյն սկսում են քննադատել ամեն մի շարժուածքը և զանազան կծու նկատողութիւններ են անում նորա մասին։ Պատահում է և այնպէս, որ ծնողները երեխաների մօտ ծառային հրամայում են եկող հիւրին ասել, թէ տանը չեն և շատ անգամ իսկոյն սկսում են խօսել զանազան ձանձրացուցիչ հիւրերի մասին, որոնք անտանելի են և այլն։ Երեխաները առաջ տեսել էին այդ մարդկանց և երբէք չէին նկատել, որ նոքա անպիտան և անտանելի են։ Լինում է և այնպէս, որ ըստ երևոյթին պարզասիրտ և բարեմիտ խօսակցութիւնից յետոյ սկսում են դատել այսպէս. «ինչո՞ւ նա այսքան բան պատմեց, ինչ էր կամենում ասել, կամ գիտեմ, թէև բարի բան է արել, բայց առանց նպատակի չի լինի» և այլն։ Այս բոլորը երեխան փոքր ի շատէ տեսնում է ու լսում և շուտով նա կգայ այն անորոշ եզրակացութեան, որ «խօսքը տուած է մարդուս իւր մտքերը ծածկելու համար»։ Դեռ չփչացած երեխան այս տեսակ ստախօսութիւնն ու կեղծաւորութիւնը տեսնելով սկզբում ապշում է. նա չի կարողանում բացատրել ծնողների յարաբերութիւնը դէպի մի քանի անձինք։ Ես չեմ խօսում այն դէպքերի մասին, ուր կեղծաւորութիւնը և խաբեբայութիւնը արտայայտւում է ա-

մենախայտառակ կերպով. ես աչքի առաջ ունիմ մեր «լաւ» հասարակութիւնը և մեր առօրեայ և սովորական հասարակական յարաբերութիւնները։ Մեր յարաբերութիւնների մէջ մենք միշտ ի նկատի ունենք այն ձևերը, որոնք ընդունուած են հասարակութեան մէջ. մեր կարծիքով «անվայել» է մարդու երեսին ամեն բան ասել, բայց նորա բացակայութեան ժամանակ մենք մեզ թոյլ ենք տալիս այդ։ Երեխան զգացդ բաբախաբար (գուցէ և բարեբախտաբար) չունի այդ զգացմունքը. նա ամեն բանում տեսնում է միայն սուտը, որի վերայ հիմնուած է մեր հասարակութիւնը։ Մթթէ պիտի զարմանանք, եթէ երեխան յաճախ իւր մօրն ասելու լինի. «մայրիկ, դու այս ինչ տիկնոջ շատ գովեցիր, նորա հետ շատ քաղցր խօսեցիր, մինչև անգամ գնալու ժամանակ համբուրեցիր, մինչդեռ մի քանի օր առաջ դու պախարակում էիր նրան, ասացիր որ...» և այլն։ Պատահում է և այսպէս՝ երեխան տեսնում է, որ հայրն իւր իշխանաւորին և կամ մի «մեծ» մարդու ընդունելու ժամանակ յայտնում է իւր յարգանքը և պատիւը իսկ վերջը խօսակցութեան ժամանակ ասում է այն պարոնի մասին, թէ նա յիմար է, նա այդ աստիճանին հասել է ոչ արժանի լինելով, այլ բարեկամների շնորհիւ, թէ ոչինչ չէ շինում և այլն։ Այս տեսակ դէպքեր ընտանիքի մէջ շատ յաճախ են պատահում և թէպէտ երեխան լռում է, բայց անշուշտ նա որևիցէ եզրակացութեան պէտքէ գայ այդ յարաբերութիւնների մասին։ Հարցնում եմ. լաւ եզրակացութիւն կլինի արդեօք, թէ վատ։ Երևի նա կը եզրակացնէ, որ սուտը—սովորական երևոյթ է և ուրեմն ինքը ևս երբեմն սուտ խօսելով ուրիշներից վատ չի վարուում. կարելի է հաստատ կերպով պնդել, որ երեխաներին սուտ խօսել են սովորեցնում, որովհետև այդ ախտը շատ խոր արմատներ է թողել մեր կեանքի մէջ։—«Դու չպէտք ասես

քո բոլոր մտածածը» խրատում է մայրը երեխային, թողնելով նրան ուրիշի մօտ գնալու. «վերադ կ'ծիծաղեն, քեզ յիմարի տեղ կդնեն. դու պէտք է գովես ամեն բան, թէև ամեն տեսածդ չհաւանես—ապա թէ ոչ անքաղաքավարի կանուանեն քեզ։ Իսկ եթէ հարցնեն, ինչու վաղուց է ես նոցա մօտ չեմ գնում, ասա՛ տկար է. իմ մասին էլ ոչինչ չխօսես»։ —Ի՞նչ անէ խեղճ մայրը. նա ստիպուած է այդպէս վարուելու։ Նա շատ լաւ գիտէ որ երեխայի ճշմարտախօսութիւնից երբեմն վատ հետևանքներ են առաջ գալիս թէ ծնողների և թէ երեխաների համար։ Նա գիտէ, որ բարի և ճշմարտասէր երեխային յիմար և անքաղաքավարի են անուանում. ապա ուրեմն „առաւել ձեռնտու“ է նմանել ուրիշներին պարզամիտ ճշմարտախօսութիւնից հեռու պահելով իրան։

Այնուամենայնիւ չի կարելի ասել, որ ծնողները ցանկանում են իրանց երեխաների վատութիւնը. երբէք։ Նոյի մասին և շատ անգամ գիտակցաբար տխրում են իրան երեխայի վատ վարմունքի համար։ Ես ներկայ էի հետևեալ տեսարանին. երեխան մի յանցանք գործեց և առաջին հարցին իսկ պատրաստ էր խոստովանել իւր արածն, որովհետև գործի հանգամանքներից երևում էր, որ բացի նորանից ոչ ոք արած չէր լինի։ Մայրն էլ շատ լաւ հասկանում էր այս, նա սարսափում էր ոչ այնքան յանցանքից, որքան երեխայի խոստովանանքից։ „Ոչ, Վարդան, դու ճշմարիտն ասա“. ասում էր մայրը, „դու չէիր անողն, այնպէս չէ։ Դու միայն ճշմարիտն ասա“, շարունակում էր մայրը վրդովուած, տեսնելով, որ երեխան պատրաստ է խոստովանելու. „դու պարզ ասա, մի ծածկիր ոչինչ, դու չէիր, այնպէս չէ։ Երեխան տեսնելով, որ հնար չկայ մի այլ պատասխան տալու, ասում է

ցածր ձայնով. „ես չէի“։—Կան և ուրիշ շատ ձևեր երեխային ստախօսութիւն սովորեցնելու։ Օրինակ. շատ անգամ երեխային ձանձրացնում են հետևեալ հարցով «սիրում ես զառնուկ, հայրիկիդ կամ մայրիկիդ», և չեն հանգարտւում, մինչև երեխան ասէ «այո»։ Իսկ եթէ երեխան ինքն է գալիս և սկսում է յայտնել իւր սէրն, իսկոյն նորան քաղցրեղէն են տալիս։

Բայց պէտք է գիտենալ, որ „սիրել“ բառը երեխայի համար մի լոկ խօսք է միայն, նա ոչինչ չի ներկայացնում իրան այդ խօսքի հետ և կրկնում է միանգամայն մեքենայաբար. միայն նկատելով որ մի քանի պատասխաններից և գգուանքներից նա շահւում է, երեխան շատ յաճախ գործ է ածում „սիրում եմ“ բայն—այսինքն կեղծաւորութիւն կանէ։ Մինչև անգամ եթէ երեխան ինքն ասէ, թէ այլ ևս անելու չէ այդ, պէտք է նորան պատասխանել, որ դժուար է իսկոյն թողնել մի վատ սովորութիւն, բայց հարկաւոր է այնպէս վարուել, իբր թէ խոստացել է այլ ևս չանելու այդ բանը։ Սա հասարակ երեխան խոստանում է միմիայն պատժից ազատուելու համար։ Հարկաւոր է ստիպել երեխային ներողութիւն խնդրել մի հանգամանքում միայն, երբ նա վիրաւորել է մինին, իսկ եթէ նա ծուլութեամբ, անհոգութեամբ և այլն վնասել է իրան միայն, այն ժամանակ ներողութիւն պահանջելն—անտեղի է և աւելորդ։ Պէտք է այս ևս գիտե-

նալ, որ երեխան միայն այն ժամանակ կարող է զղջալ երբ կհասկանայ արդարութեան իմաստը և մինչև որ դաստիարակներն իրանց ազդեցութեամբ և օրինակով չեն հաստատել երեխայի մտքի մէջ այդ բառերի գաղափարները, ներողութիւն խնդրելն ամեն մի հանգամանքում միայն կեղծաւորութիւն պէտք է համարել։

Դժբախտաբար ամենայայտ հանգամանքներում ևս, երբ դաստիարակները և ծնողները երեխաների հետ ճշմարիտ և ազնիւ յարաբերութիւն ունեն, այնուամենայնիւ երեխան կարող է ենթարկուել վատ ազդեցութեան։ Օրինակ. ծառաների ազդեցութիւնը։ Ծառաները միշտ ունենում են իրանց գաղտնիքը և շատ անգամ աշխատում են երեխաներին խառնել իրանց կեղտոտ գործերում, սովորեցնելով նոցա խաբեբայութիւն և գաղտամտութիւն։ Վատ կրթուած ընկերներն ևս զանազան նպատակներով սովորեցնում են երեխային սուտ խօսել ծաղրելով նորա պարզամտութիւնն ու պարզասրտութիւնը։ Յայտնի է, որ ծաղրելը շատ խիստ գործիք է և այդ միջոցով կարելի է ճշմարտախօսութիւնից շեղել նորան։

Այսպէս ուրեմն դուք տեսնում էք, որ երեխան ամեն կողմից շրջապատուած է փորձութիւններով. ամեն հանգամանքում նա անախորժութիւններից ազատուելու համար ստախօսութեամբ կարող է ելք գտնել՝ այն ինչ ճշմարտախօսութեամբ շատ անգամ անախորժութիւններ է լսում, անյարմարութիւններ է տեսնում, այնպէս որ ճշմարտասէր երեխան ևս վերջը դառն փորձերից յետոյ դառնում է ստախօս։ Սուտն ու ստախօսութիւնը այնքան արմատացել են մեր հասարակական կեանքի մէջ, որ չկայ միջոց հեռու մնալու նոցա ազդեցութիւնից։ Ծնողների և դաստիարակների դրութիւնը անել է երևում, բայց բարեբաղդաբար երեխայի

առաջին տպաւորութիւններն առաւել զօրեղ են քան վերջիններն և նոցա թողած հետքերից կազմւում է մարդուս ապագայ բնաւորութիւնը։

III.

Մարմնի տկարութիւնները բժշկելն երբեմն դժուար է և երբեմն անհնար, որովհետև կան անբուժելի ցաւեր. իսկ նոցա առաջն առնելը շատ դիւրին է։ Նոյնը կասեմ և հոգու հիւանդութեան՝ ստախօսութեան մասին։ Ստախօսութեան առաջն առնելը աւելի դիւրին է, քան նորան վերջը անհետացնելը։ Մենք տեսանք, որ ստախօսութեան գլխաւոր աղբիւրը միշտ կրկնուող օրինակներն են. ուրեմն ճշմարտախօսութիւն կարող ենք արմատացնել միայն օրինակներով։ Մեր պարտականութիւնն է ճշմարտախօս լինել երեխայի հետ և պահպանել նորա թարմ հոգեկան ընդունակութիւնները սխալ և սուտ հասկացողութիւններից և պատկերներից։ Մեզ գուցէ պատասխանեն, թէ այդպիսով մենք կզրկենք երեխայութիւնն իւր գրաւիչ կողմերից և կմտցնենք չոր ու ցամաք յարաբերութիւններ ծնողների և երեխայի մէջ։ Երբէք. մենք պահանջում ենք, որ երեխայի հասկացողութիւններն և զգացմունքներն ի չար գործ չդրուին. մենք օրինակ, պնդում ենք, որ տալ երեխային կաւիճ ասելով, թէ այդ շաքար է և զուարճանալ նրա սխալուելովն — աններելի հանաք է, այլ աւելի խելացի կլինի ցոյց տալ նորան մի կտոր շաքար և մի կտոր կաւիճ և բացատրել նոցա յատկութիւնները։ Մենք պնդում ենք նոյնպէս, որ լացող ձևանալը մօր կողմից և յանկարծ ծիծաղելն, երբ երեխան կամենում է նորան մխիթարել — յիմար և անվայել խաղ է։ Նոր խօսել սկսող երեխան շատ ծիծաղ և զուարճութիւն է պատճառում իւր քաղցր սխալներով։ Ծիծաղելն ոչ մի

վատ հետևանք չունի, բայց հարկաւոր չէ կրկնել երեխայի սխալները, այլ պէտք է ուղղել նոցա։ Այդ վարմունքով երեխան իւր պարզամտութիւնը չի կորցնում և վերջապէս պարզամիտ է երեխայի մէջ այն, ինչ որ իրանից է արտայայտում. իսկ ուրիշներից ստացածը պարզամտութիւն չէ, այլ ստախօսութիւն։ Երբ երեխան սկսում է արդէն խօսել, ծնողները պէտք է որքան կարելի է խիստ լինեն դէպի իրանց ճշմարտախօսութիւնը և պէտք է պահպանեն իրանց հեղինակութիւնը երեխայի առաջ։ Ծնողները պէտք է պահանջեն, որ երեխան կատարէ նոցա ամեն մի պատուէրը ճշտապէս. ուրեմն առաջուց նոքա պէտք է խորհեն և կըշռադատեն իրանց հրամանները, ապա թէ ոչ իրաւունք չունեն պահանջելու, եթէ երեխան չկատարէ տուած պատուէրը։ Այս կէտի վերաբերութեամբ շատ սխալներ են պատահում թէ տանը և թէ ուսումնարանում։ Տանը պահանջում են երեխայից այնպիսի բաներ, որոնք նորա կարողութիւնից վեր են, ուսումնարանում նոյնպիսի խնդիրներ են տալիս լուծելու։ Զգուշացէք երեխայի կարողութիւնից վեր պահանջներ անելուց, որ չխաբուէք։

Այն չափազանցութիւնները, որոնք երեխան գործ է ածում իւր պատմութեան մէջ, ինքն ըստ ինքեան մի վատ նշանակութիւն չունի. մինչև անգամ կարելի է ուրախանալ խելքի և երևակայութեան զարգացման համար. բայց մի մոռանաք, որ երեխաները, մանաւանդ տղաները, սնապարծութեամբ չափազանցութիւններ գործածելով դառնում են սաստիկ ստախօս։ Ուստի երբ դուք նկատէք, որ ձեր որդին մի անկարելի բան աւելացրեց իւր պատմութեան մէջ, կանգնեցրէք նրան և հասկացրէք, որ նա ուղղէ իւր սխալը և այդպիսով վերադառնայ դէպի ճշմարիտը։ Օրինակ. «մտածիր, հոգիս, ինչ ասացիր. մթթէ մեր տունն եկեղեցուց բարձր է»

կամ «մթթէ դու հարիւր անգամ նաւակով զբօսնել ես, ինչպէս պարծեցար Գաբրիէլի առաջ»։ Եթէ դուք միշտ ընդունէք այս ձևը, երեխան շատ շուտ կսկսէ ճշմարտախօս լինել և ամեն մի սուտ կատէ, եթէ նա մնացած ամեն կողմերով լաւ է դաստիարակուած։

Այո՛, եթէ նա մնացած ամեն կողմերով լաւ է դաստիարակուած։ Այս ամենագլխաւորն է։ այս մի քանի խօսքերով ասած է այն, ինչ որ անհրաժեշտ է ստախօսութիւնից հեռու պահելու համար երեխային—այն է՝ լաւ բարոյական կրթութիւն առհասարակ։ Լաւ դաստիարակուած երեխան շատ քիչ առիթ կունենայ սուտ խօսելու և շատ քիչ դիպուածներ կարող են պատահել նորան, որոնցից ազատուելու համար նա սուտ խօսի։ Երեխաները զուարճութեան համար չեն սուտ խօսում, այլ սուտ են խօսում իրանց յանցանքն ու բարոյական պակասութիւնները ծածկելու համար կամ մի որոշ նպատակ աչքի առաջ ունենալով. մի խօսքով ստախօսութիւնը միւս ախտերի արբանեակն է։

Ուստի վատ դաստիարակուած երեխան միշտ առիթ կունենայ սուտ խօսելու, որովհետև նրա համար այդ միակ ելքն է դժուարութիւնից ազատուելու համար։ Հեռացրէք բարոյական պակասութիւնները և ախտաւոր ձգտումները, կհեռանայ ստախօսութիւնը։

Ստախօսութեան ներքին շարժառիթները, թէև զանազան են, բայց դրեթէ բոլորն առանց բացառութեան մի աղբիւրից են ծագում. այն է ինքնասիրութիւնից։ Տղան չափազանցացնում է և պարծենում ցանկանալով զարմացնել ուրիշներին, նա խաբում է ցանկանալով ազատուել անախորժութիւններից կամ շահուել. նա կեղծաւորութիւն է անում և սուտ է խօսում—պատժից ազատուելու համար. մի խօսքով ամեն տեղ և միշտ ստախօսութիւնը ծառայում է

ևս-ին։ Ուրեմն հեռացնելով եսականութեան վատ կողմերը, մենք երեխային ճշմարտախօս կդարձնենք։ Սնապարծը երբեմն շատ յարմարեցնում է սուտը ճշմարտութեան հետ ուրիշներին զարմացնելու և կամ մի առանձին ընդունակութեան տէր ճանաչուելու համար։ Երբ նկատուեց այդ դիտաւորութիւնը, հարկաւոր է իսկոյն կանգնեցնել նրան և ասել, որ նրա ստերի միտքն ուրիշներին խաբելն է, իւր մասին մեծ կարծիք հաստատել տալն է։ Երեխան մի քանի անգամ անյաջող փորձեր անելուց յետոյ տեսնելով որ դիւրահաւատ ունկնդիրներ չի գտնում, կամայ, ակամայ կթողնէ իւր սովորութիւնը։ Բացի այս բացասական միջոցը հարկաւոր է գործ դնել և դրական միջոց. կարելի է ասել նրան այդ հանգամանքներում, «այդ տեսակ սուտ շարադրելը շատ դիւրին է բայց արժողութիւնը չնչին, ուստի հաւատալ կարող են միայն թեթևամիտ և տխմար մարդիկ։ Առաւել լաւ է, թէև դժուար, գրաւիչ ձևով պատմել, միշտ ճշմարիտ խօսելով. դու ևս կարող ես այդ անել. հարկաւոր է միայն ուշադիր լինել և ճիշտ պատմել պատմածդ։»

Երբեմն երեխաները պարծենում են տեսնելով, որ դաստիարակները նոցա արժանաւորութիւնները չեն ճանաչում։

Այնպիսի ծնողներ և դաստիարակներ որոնք կարծում են, թէ վտանգաւոր է երեխային գովելը, շատ կայ. նոքա պարտք են համարում միշտ վատաբանել երեխային։ Այդ սխալ է և անարդարութիւն. երեխան ևս շուտով կհասկանայ. բացի այդ երեխան միջոց չունենալով բաւականութիւն տալ իւր ինքնաճանաչութեանը, սկսում է ինքն իրան գովելով վարձատրուած համարել այդ զրկանքից։

Դուք տեսնում էք, որ երեխաների սկզբնական կրթութեան ժամանակ հարկաւոր է մեծ բարեխղճութիւն։ Սկզբնական կրթութեան նպատակը արտայայտուելու է Պօղոս Առաքեալի հետևեալ խօսքերով. «Հայրեր ու մայրեր, թողէք սուտը և ճշմարտախօս եղէք»։ Առանց վատ օրինակների երեխան չի կարող ստախօսութիւն սովորել և ես արդէն ցոյց եմ տուել թէ ինչ բանի վերայ ծնողները պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն իրանց վերաբերութեամբ։ Արդարև շատ դժուար է երեխային հեռացնել խաբեբայութեան և կեղծաւորութեան տեսարանից, որովհետև մեր հասարակական յարաբերութիւնները գլխաւորապէս հիմնուած են միմեանց խաբելու վերայ. բայց մենք մի մեծ քայլ կանենք դէպի լաւը, եթէ հրաժարուենք մի քանի ընդունուած ձևերից. այսինքն եթէ մենք նուրբ քաղաքավարութեան փոխարէն կասենք և կլսենք միայն ճշմարտութիւնը։ Կան, այո, մի քանի անձինք, որոնք հետևում են այս սկզբունքին. բայց նոքա տարօրինակ մարդիկ են համարում և կոչում են կոպիտ և անքաղաքավարի։ Ես տեսել եմ այնպիսի ծնողներ և դաստիարակներ, որոնք երբէք հարկաւորութիւն չեն ունեցել երեխայի ստախօսութեան առաջն առնելու, որովհետև ստախօսութիւն չեն նկատում երեխայի մէջ։ Այս տեսակ երեխաների մշտական ճշմարտախօսութիւնը կարելի է բացատրել միայն ամենաբարձր բարոյականութեան տէր անձի ազդեցութեամբ։ Երեխան զգում է, որ դաստիարակը նորանից բարձր է ամեն բանով և սիրում է նորան. ուստի նա ենթարկուում է նորա ազդեցութեան ոչ միայն սիրելով նորան, այլ և յարգելով։ Բաւական չէ, որ երեխան միայն սիրէ իւր դաստիարակին, մենք տեսանք արդէն, որ երբեմն սէրը խաբեբայութեան պատճառ է դառնում, հարկաւոր է ունենալ հեղինակութիւն, որին հասնելու համար պէտք է գերազանց լինել թէ բարոյապէս և թէ մտաւորապէս։ Միւս կողմից առանց սիրոյ հեղինակութիւնն ոչ այլ ինչ է, բայց եթէ ահ ու դողի պատճառ, որից մնում է ատելութիւն,

եթէ սէր չկայ, երեխան սուտ խօսելու ժամանակ կաշխատի որքան կարելի է ճարպիկութեամբ ծածկել իւր արածն։

Ուրեմն բարոյական կրթութիւնը յաջող է միայն այն ժամանակ, երբ երեխան սիրում և յարգում է իւր դաստիարակին։ Բայց սէրը արտայայտուելու է ոչ միայն փաղաքշանքով և քաղցրեղէնով, այլ երեխայի մարդկային իրաւունքները լիապէս յարգելով և հաւատարմութիւն ունենալով դէպի նա։ Այս կէտի դէմ մեղանչում են երբեմն ծնողները. նոքա սիրում են իրանց երեխաներին որպէս խաղալիք, բայց չեն յարգում նոցա։ Նոքա յոժարութեամբ տալիս են երեխային նիւթական յարմարութիւններ և շատ անգամ չափից դուրս հոգում են նոցա բարեկեցութեան համար, բայց վարւում են նոցա հետ չճանաչելով նոցա մարդկային իրաւունքները։

Ճշմարիտ սէրը պատուիրում է ներողամիտ լինել երեխայի յանցանքներին և չպատժել միշտ։ Ապա թէ ոչ դաստիարակութիւնը կդառնայ խրատների, սպառնալիքների և պատիժների շարք մի կողմից և խաբեբայութեան ու ստախօսութեան—միւս կողմից։ Մանաւանդ որ երեխաները շուտով նկատում են, որ ծնողների պահանջը վեր է նոցա կարողութիւնից և թէ նոցա պատժում են այն բանի համար, որ ծնողները իրանք անում են անպատիժ։ Առաւել լաւ է երբեմն չնկատել երեխայի յանցանքը, իսկ եթէ պատժելն անհրաժեշտ է, պէտք է ի նկատի ունենալ, որ պատիժը միւս անգամ յանցանքը չանելու համար է և ոչ վրէժ։ Երեխայի պակասութիւններն ու յանցանքները պէտք է ընդունել իբրև հիւանդոտ և անկանոն երևոյթներ և պէտք է միշտ մտածել չլինի թէ մենք ենք նոցա պատճառը։

ՅՂԻ ԿՆՈՋ ԵՒ ԾՆՆԴԿԱՆԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Յղի կնոջ համար հարկաւոր է ամենականոնաւոր կեանք, երեկոները երկար անքուն չմնալ, ժամանակին քնել, հոգեկան անհանգստութիւններից խուսափել. ամեն օր պէտք է չափաւոր կերպով զբօսնել մաքուր օդի մէջ. չպառկել ամբողջ օրերով բազմոցի վերայ ինչպէս անում են շատերը։ Շարժողութեան բացակայութիւնը ևս շատ վնասակար է. նա առաջացնում է ստամոքսի անկանոնութիւն, անքնութիւն և մի քանի ուրիշ խանգարմանքներ։

Յղի կնոջ կերակուրը պէտք է զանազանակերպ լինի և բաղկացած գլխաւորապէս մսից, կանաչեղէնից, մրգեղէնից, կաթից և ձուից։ Մրգեղէնը առանձնապէս օգուտ է, որովհետև նպաստում է մարսողութեանը։ Ինչ վերաբերում է զանազան տեսակ հացերին և ուրիշ դժուարամարս կերակուրներին, հարկաւոր է կարելոյն չափ խուսափել նոցանից։

Յղութեան ժամանակ կանայք շատ անգամ անհանգիստ են լինում որտախառնութիւնից և փխոզութիւնից։ Այդպիսի դէպքերում հարկաւոր է չափաւորութիւն պահպանել ուտելու ժամանակ, իսկ փխոզութեանը լաւ օգնում է սելտերի և սոդայի ջուրը, նոյնպէս պաղ շամպանեան գինին։

Այն կինը որը մտադիր է ինքը կերակրել իւր երեխա-

յին, որը բնական և ամենալաւ միջոցն է, պէտք է վերջին երեք ամսուայ ընթացքում պատրաստէ իւր ծծերը կերակրելու համար։ Պտուկների մորթը շատ քնքոյշ է, դորա համար հարկաւոր է նախապէս պնդացնել նրան։ Այս նպատակով առաւօտ և երեկոյ հարկաւոր է պտուկների վերայ 10 րոպէի չափ դնել հիգրոսկոպիական բամբակ (гигроскопическая вата) արաղով թրջած, լաւ է նոյնպէս սառը ջրով լուալը և նոյն բամբակով սրբել։ Ներկայ կանանց անյարմար հագուստից, այսինքն կորսետի սեղմելուց շատ անգամ պտուկները հարթ են լինում։ Այս պակասութիւնը հեռացնելու համար հարկաւոր է վերջին ամիսներում ձեռքով դուրս քաշել նոցա մի քանի րոպէով։

Ծննդկանի առողջապահութիւնը.— Ծննդկանի խնամատարութիւնը մեծ նշանակութիւն ունի նորա ապագայ առողջութեան համար։ Դեռ ծնունդից առաջ պէտք է հոգ տանել ծննդկանի սենեակի մաքրութեան մասին, որտեղ նա պիտի ապրի մինչև կազդուրուելը։ Պէտք է ընտրել նրա համար աւելի ընդարձակ սենեակ, և այնտեղից հեռացնել բոլոր աւելորդ առարկաները. սենեակի տաքութիւնը պէտք է լինի ոչ պակաս 14°R., իսկ ծննդից յետոյ ոչ պակաս 16°R։ Սենեակը մթնեցնելու առանձին կարևորութիւն չկայ, ինչպէս այդ անում են սովորաբար, սակայն լուսամուտները կապոյտ վարագոյրով ծածկել կարելի է, որ լոյսը չ'վնասէ նորածնի աչքերը։

Յետոյ հարկաւոր է առանձնապէս հոգ տանել սպիտակեղէնի և անկողնի մասին։ Առաջուց պէտք է խնամքով թափ տալ, մաքրել անկողինը, բարձերը, իսկ սպիտակեղէնը ըստ հնարաւորութեան պէտք է պատրաստել մեծ քանակութեամբ և եթէ կարելի է ախտահանել նրանց (продезинфицировать)։ Ջուրը որ, պէտք է գործածուի ծննդեան ժամանակ, պէտք է եփած լինի, դրա համար պէտք է 1—2

մեծ շիշ եփած ջուր մշտական պատրաստի ունենալ, պէտք է նաև պատրաստի ունենալ տաք ջուր և հիգրոսկոպիական բամբակ (гигроскопическая вата) և նորան խնամքով պահել ապակեայ ամանի մէջ։

Ծննդկանը հանգիստ պէտք է պառկի անկողնի մէջ ամենապակասը ինն օր, իսկ եթէ հնարաւորութիւն կայ դեռ աւելի։ Առաջին երկու օրերը նա պէտք է պառկի մէջքի վերայ, իսկ երրորդ, չորրորդ օրերում նա կարող է զգուշութեամբ կարճ ժամանակ կողքի վերայ պառկել։ Առաջին 5—6 օրերում երեխային ծիծ տալու, կերակուր ուտելու համար և կամ այլ պատճառով նստելը միանգամայն վնասակար է և պէտք է արգելել։

Ծննդից յետոյ առաջին շաբաթում ծննդկանը պէտք է հեռու մնայ մտաւոր աշխատանքից և հոգեկան վրդովմունքից։ Պէտք է աշխատել որ ծննդկանի մօտ կողմնակի մարդիկ շատ չլինին։

Ազատուելու չորրորդ օրը օգտաւէտ է ծննդկանին փորկապ հագնել, որ թեթև ճնշում գործ դնելով, օգնում է արգանտի փոքրանալուն։ Ծննդկանի ուտելիքը առաջին երեք օրերում պէտք է լինի հեղուկ կերակուր։ Կարելի է տալ կաթ, սուպ, բուլիոն, կաթով սուրճ կամ թէյ։ Եթէ ծննդկանը լաւ ախորժակ ունի կարելի է տալ շատ քիչ քանակութեամբ սպիտակ հաց և եփած պտուղ (компотъ)։ Չորրորդ օրուանից կարելի է տալ աւելի սննդարար կերակուրներ իսկ 2—3 շաբաթներում փոքր առ փոքր անցնել սովորական կերակուրներին։ Իններորդ օրից սկսած ծննդկանը մի քանի ժամ տեղից պէտք է վեր կենայ, բայց մինչև երրորդ շաբաթը նա պէտք է խուսափէ ծանր շարժողութիւններից, չբարձրացնէ ծանրութիւններ և ընդհանրապէս հեռու պահէ իրան ամեն տեսակ ճնշումներից։ Չորս շաբաթից առաջ

նա չպէտք է տանից դուրս գայ և միայն հինգերորդ շաբաթում նա պէտք է ձեռնարկէ իւր սովորական աշխատանքներին։

Ծծերի հեղուելը.—Ծծերի ճեղքուածների վերայ հարկաւոր է իսկոյն դնել բորական թթուտում (борная кислота) թրջած քաթան և անմիջապէս դիմել բժշկի օգնութեանը, որովհետև այդ ճեղքուածները երբեմն վարակւում են և մեծամեծ վերքերի պատճառ են դառնում։ Բժշկի բացակայ եղած դէպքում գիւղում կարելի է գործ ածել աղաղի (танинъ) և քաղցրիտի (глицерина) խառնուրդ, կամ բիսմուտի օծանելիք։ Մինչև բժշկի գալը կարելի է յիշեալ միջոցով օգտուել, փոխելով իւրաքանչիւր $^1/_2$ ժամ թրջած քաթանը, վերան դնելով մաքուր հիգրոսկոպիական բամբակ, որը պէտք է ամեն անգամ փոխել։

Մor կերակուրը. — Երեխային կերակրելու ժամանակ թէև ուտելեղէնի մէջ խիստ պահեցողութիւն հարկաւոր չէ, սակայն կան մի քանի անհրաժեշտ գիտելիքներ որոնց պէտք է ի նկատի ունենալ, զորօրինակ վնասակար է գործածել լոբի, սիսեռ, հում միրգ և կանաչեղէն, բայց եփած մրգեղէնի չափաւոր գործածութիւնը օգտակար է։ Լաւ է գինիներ գործածելուց հեռու մնալ, բայց եթէ մայրը թոյլ է և կարիք է զգում գինու, կարելի է գործածել, միայն թէ քիչ։ Արգելւում է նոյնպէս թթուն, աղին, դափնի տերևով և վանիլով պատրաստուած կերակուրները։

Եթէ կնոջ կաթը չէ բաւականացնում երեխային, օգտակար է չափաւոր աղի ուտելիքներ գործածել. զորօրինակ, իկրա, սելեօգկա և այլն. այս կերակուրները սաստկացնում են ծարաւը և ջուր կամ այլ հեղուկ գործածելով շատացնում կաթը։ Սառնց բժշկի թոյլատուութեան չի կարելի լուծողական ընդունել և ուրիշ դեղեր գործածել։ Եթէ բը-

ժիշկը դեղ գրել է կամենում, պէտք է նախապէս նրան յայտնել, որ հիւանդը ինքն է կերակրում երեխային։

Ծծմայր.—Երբ երեխային ծծմայրն է կերակրելու, նա պէտք է իւր մարմինը տաք ջրով մաքուր լուանայ և ապա կերակրէ մանկանը։ Ծծմօր ուտելիքը պէտք է լինի իւր սովորական կերակուրը և ըստ կարելոյն չափ՝ յագեցնել նրա ցանկութիւնները, բացի գրգռիչ խմիչքներից։ Նրան հարկաւոր չէ տալ սուր հոտով ուտելեղէն. զորօրինակ սխտոր, բահար, թթուներ, չոր կանաչեղէն, պտուղներից յետոյ գարեջուր և առհասարակ պէտք է խոյս տալ այն ամեն բաներից, ինչ որ կարող է լուծ առաջացնել։ Ծծմայրը յոգնած, վրդովուած և կամ բարկացած ժամանակ չպէտք է ծիծ տայ մանկանը։ Եթէ եղանակը վատ է և երեխային չի կարելի տանել բաց օդի մէջ, այն ժամանակ ծծմայրը յամենայն դէպս պարտական է մի քանի ժամ զբօսնել մաքուր օդի մէջ, որը շատ լաւ ազդում է նրա կաթի առատութեան և լաւանալու վերայ։ Պէտք է խստօրէն հսկել, որ ծծմայրը երեխայի վրայ գործ չդնէ զանազան քնացնող և թմրեցնող միջոցներ, դրանք միշտ վնասակար են և նոյն իսկ վտանգաւոր։

Ծծմor ընտրությունը.—Ծծմայրը պէտք է առողջ և լաւ կազմուածք ունենայ. ազատ ամեն տեսակ հիւանդութիւններից, (խլախտից, արեան սակաւութիւնից, թոքախտից, սիֆիլիսից, աչքի վարակիչ հիւանդութիւնից և այլն)։ Ցանկալի է նոյնպէս առողջ ատամներ։ Ծծմայրութեան ամենալաւ հասակը 20—35 տարին է. լաւ կլինի եթէ ծծմօր երեխան հասակակից է իւր նոր սանիկի հետ։ Ծծմայր չպէտք է վարձել այն կնոջը որ նոր է ազատուել, կամ ծննդից 6 ամիս արդէն անցել է։ Լաւ ծծմայրը պէտք է ունենայ առատ և լաւ կաթ։ Կաթի առատութիւնը կարելի է ստուգել երեխա-

յի 15 բոպէ ծիծ ուտելուց յետոյ կթելով ծծմօր ծծերը. իսկ կաթի յատկութեան վերայ մեծ ազդեցութիւն ունի ծծմօր կենցաղը և պահեցողութիւնը։

Ծծմօր խոխելը.—Եթէ երեխային ծիծ տալը յաջող է գնում, երեխայի ծնողները չպէտք է ոչ մի դէպքում փոխէն ծծմօրը, մինչև որ բոլորովին ծծից չկարեն։ Եթէ ծրծմօր հետ դաշտան է պատահում, և թէև դա անախորժ է կերակրելու ժամանակ, սակայն դրա համար ծծից կտրել պէտք չէ, թէև երեխան կարճ ժամանակով հիւանդանայ նոյն իսկ։ Ամենից առաջ հարկաւոր է բժշկին դիմել, որովհետև շատ դէպքերում գերադասելի է թողնել ծծմօրը, քան թէ փոխել երեխայի կաթը։ Իսկ եթէ երեխայի հիւանդութիւնը կրկնուի հետևեալ դաշտանների ժամանակ, այդ դէպքում հարկաւոր է անպայման փոխել ծծմօրը։

Կին բժիշկ Վ. Ա. Վոլկենշտեյն



ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԽՆԱՄԵԼ ՆՈՐԾԾԻՆ

(Քաղուածք ЖУКЪ-ից և Carnet de Bébé)

Առաջին հոգատարութիւնը.—Երեխայի ծնելուց յետոյ պէտք է անմիջապէս մաքրել նրա աչքերը հիգրոսկոպիական բամբակով (гигроскопическая вата), կամ մաքուր շորով, և եթէ կարմրած է, հարկաւոր է կաթացնել ամեն մի աչքի մէջ մի կաթիլ 2% Ag № 3 և ապա մարմնին վազելին, ձիթաւուղ, կամ մի որևէ անալի իւղ քսել և փաթաթել բրդէ շորի մէջ ու դնել մի ապահով տեղ, հեռու դռնից և պատուհանից։ Հարկաւոր է նոյնպէս մաքրել երեխայի բերանը կեղտերից, որպէս զի ապատ կատարուի նրա շնչառութիւնը։ Պէտք է մաքրել այսպէս. ամենից առաջ մաքուր լուանալ ձեռքերը. ապա ցուցամատի վերայ, փաթաթել մի հին, բայց մաքուր, քընքոյշ շոր և աշխատել այդ մատով բաց անել երեխայի բերանը և հանել այնտեղից լորձունքը։

Առհասարակ մեզ մօտ շատ էլ ուշք չեն դարձնում մաքրութեան վերայ, կեղտոտ ձեռքերով ծննդկանից դառնում են նորածինը և այդպիսով տեղիք են տալիս զանազան հիւանդութիւնների։

Առաջին վանիան.—Հենց որ տատմայրը վերջացրեց ծննդկանի մաքրելը և տեղաւորելը, նա պէտք է իսկոյն երեխային լողացնէ։ Սրա համար հարկաւոր է վերցնել մաքուր, պարզ և թարմ ջուր, չափել ջերմաչափով ջրի տա-

քուլթեան աստիճանը որ նա ունենայ ոչ պակաս քան 27°R (33,3c) և ոչ աւելի քան 29 R (36 c)։ Երեխային լաւ մաքրելու համար անհրաժեշտ չէ սապոն. Vernix caseosa որ լինում է նորածնի վրայ բաւական լաւ մաքրում է ձուի դեղնուցը, իսկ եթէ երեխի վրայ իւղը լաւ է քսած, այն ժամանակ բաւական է լուալ միայն հասարակ ջրով։ Մեզ մօտ ընդունուած է նորածնի վրայ աղ ցանել, կարծելով որ այդ օգնում է նրա առողջութեանը և ամրացնում է երեխայի մարմինը. սակայն այդ սխալ է, որովհետև երեխայի քնքոյշ մարմինը առանց ցաւի անկարող է տանել աղի սուր գրգռումը։

Եթէ երեխան իսկապէս շատ կեղտոտ է, այն ժամանակ կարելի է լուանալ մաքուր սապոնով այն է գլիցերինի կամ ձուի սապոնով, որոնք հազար անգամ աւելի լաւ և անվնաս են քան թէ այն բոլոր անուշահոտ սապոնները, որոնք իբրև թէ երեխաների համար են պատրաստած։

Լողացնելու ձեւը.—Երեխային պէտք է փաթաթել կամ ֆլանելի կամ բումազէի մէջ և ապա ընկղմել սկսած ոտքերից։ Գլխի տակ հարկաւոր է դնել մի մաքուր կսլրած շոր, և այնպէս պէտք է տեղաւորել երեխային ջրի մէջ, որ ամբողջ մարմինը բացի երեսից ծածկուած լինի ջրով։

Լողացնում են այսպէս. քաշում են գլխից սաւանը և լուանում են գլուխը, ամեն անգամ ձեռքը ճակատից դէպի երեսը տանելով։ Պէտք զգուշանալ որ վաննայի ջուրը երեխայի երեսին չթափուի, նոյն իսկ եթէ սապոն էլ չլինի։ Գլուխը լուանալուց յետոյ ծածկում են և ապա միւս մասերն են լուանում։ Մեծ ուշադրութեամբ պէտք է լուանալ ականջների յետևը վզի շուրջը, այսինքն ծալքերը, կռան տակերը, ոտերի արանքը, որպէս զի ոչ մի տեղ կեղտ չմնայ։ Ծալքերը հարկաւոր է լուանալ միմիայն ջրով այսինքն հարկաւոր չէ սպունգով կամ շորով անպատճառ սրբել այդ քնքոյշ մասերը, այլ բաւական է ծալքերը միմիանցից հեռացնել, սպունգը սեղմել և ջուրը վազեցնել նրանց վրայից։ Եթէ երեխան ձեռքը կամ ոտը չի հեռացնում, որ կարելի լինի լուանալ ծալքերը, պէտք չէ ուժով հեռացնել, այլ մի բոպէ միայն բռնեցէք նրա ոտը կամ ձեռքը և նա, շնորհիւ իւր թուլութեան, ձեզ կհնազանդի։ Երեսը և աչքերը երբէք չպէտք է լուանալ վաննայի ջրի մէջ. երեսը պէտք է լուանալ առանձին ջրով, բայց նոյն աստիճանի, ինչ աստիճանի որ մարմինը լողացնելու ջուրն է. իսկ աչքերը պէտք է լուանալ բորական թթուլուտով (борная кислота)։ Մարմինը լաւ է լուանալ մի կտոր շորով, իսկ երեսը մի փոքրիկ սպունգով։ Վաննայից հանելուց եթէ մի ամանով ջուր ածէք վերան, հարկաւոր է որ այդ ջուրը լինի վաննայի ջրի տաքութեան աստիճանին և ածէք առաջ գլխին և ապա մարմնին։ Վաննայից հանելուց յետոյ իսկոյն պէտք է փաթաթել տաքացրած սաւանի մէջ և ծածկել վերմակով։ Ծալքերը չորացնելու համար հարկաւոր է սաւանը դնել նրանց մէջ, որ ծծէ խոնաւութիւնը։ Որքան կարելի է պէտք է լաւ մաքրել։ Վաննայի ջուրը պէտք է այնքան լինի, որ ծածկէ երեխայի ամբողջ մարմինը, աւելի հարկաւոր չէ, որովհետև սա կարող է ճնշել երեխայի կուրծքն ու փորը։

Իբրև ման լողացնելու առաջին երկու ամիսը նպատակայարմար են մեր տաշտակները. բայց նրանց պէտք է վերին աստիճանի մաքուր պահել։ Առաջին վաննայից յետոյ, անհրաժեշտ է եռացրած ջրով և աւազով լուանալ, որովհետև փայտը ծծում է օրգանական մասերը, որոնք փչացնում են յետագայ վաննայի ջուրը։ Ամեն անգամ տաշտակը պէտք է լուանալ եռացրած ջրով և սապոնով և ապա դնել արևի տակ չորանալու։ Տաշտակը պէտք է այնքան խոր լինի, որ ջուրը ծածկի ամբողջ մարմինը։ Տաշտը բացի երեխային լողացնելուց, ոչ մի բանի չպէտք է ծառայէ։ Դժբախտաբար մեզ

մօտ երեխայի կեղտոտ շորերը լուանում են նոյն տաշտակի մէջ, սակայն այդ սխալ է, որովհետև ինչպէս վերևն ասացի, փայտը ծծում է օրգանական մասերը, փչացնում է յետագայ վաննայի ջուրը և այդպիսով վարակում է երեխային և տեղիք տալիս զանազան հիւանդութիւնների։ Մետաղի վաննաները ևս լաւ են, միայն սրանք պէտք է լինին նոր, հարթ և խոր. ներկած վաննաները մի քանի օր ծննդից առաջ հարկաւոր է լուանալ տաք ջրով և մէջը ջուր թողնել որ հեռանայ ներկի թունաւոր մասերը։ Աւելի լաւ են ցինկի վաննաները։

Ջերմաչափի անհրաժեշտութիւնը.—Ամենամեծ ուշադրութիւնը պէտք է դարձնել վաննայի ջրի տաքութեան աստիճանին, ուստի հէնց առաջին օրից մայրը պէտք է ստիպէ, որ չափեն ջրի տաքութեան աստիճանը, որովհետև համարեա դրանից է կախուած երեխայի կեանքը։ Առհասարակ տատմայրը և ծծմայրը ջրի տաքութեան աստիճանը չափում են իրենց ձեռքով կամ քթի ծայրով, և կարծում են, որ ջուրը արդէն յարմար և պատրաստ է. սակայն այդ միանգամայն սխալ է։ Մարդուս մորթը ժամանակի ընթացքում կորցնում է իւր զգայնութիւնը և այդպիսով հեշտութեամբ սխալեցնում է. և այն ջուրը որ նրանք պատրաստում են չի կարող հարկաւոր աստիճանին լինել։ Կերեր պատմում է որ Էլբինգ քաղաքում 380 երեխաներից 99 մեռել են շնորհիւ նրա, որ հմուտ տատմայրը վաննաների տաքութեան աստիճանը իւր ձեռքովն է չափել և այն ջուրը, որ նրան շատ հով է երևացել ունեցել է միշտ 31° — 35°R. ահա ինչ սոսկալի վախճան է ունենում ջերմաչափից խոյս տալը, որը և շատ էժան է և շատ հեշտ է ձեռք բերելը. ջերմաչափ կարելի է գտնել ամեն մի դեղավաճառի մօտ, միայն պէտք է խնդրել, որ ջերմաչափը ուղղեն յետոյ տան, որովհետև մի երկու աստիճան սխալը շատ վատ ազդեցութիւն կարող է ունենալ։

Ինչպէս առաջին նոյնպէս և բոլոր վաննաների ջրի տաքութեան աստիճանը պէտք է լինի ոչ պակաս քան 27°R (34°c) և ոչ աւել քան 29°R (36c)։ Հարկաւոր է լողացնել ոչ երկար քան 5—10 րոպէ դրանից աւելի երկար պահելը կարող է վնասել երեխային, որովհետև ջրի մէջ մարմնի նիւթերի փոխանակութիւնը և կաշուի միջոցաւ տաքութեան հաղորդակցութիւնը փոխւում է։ Ջրի տաքութեան աստիճանը հարկաւոր է չափել հետևեալ կերպով. բոլորովին մաքուր վաննայի մէջ հարկաւոր է ածել տաք և սառը ջուր լաւ խառնել և չափել ջերմաչափով։ Երբ ջրի տաքութեան աստիճանը լինի 29°R. (36°c) միայն այդ ժամանակ է հարկաւոր գցել ջրի մէջ այն շորը, որի վրայ երեխային պէտք է դնել. շորը գցելուց կրկին չափել և երբ կլինի 27° կամ 28°R, այն ժամանակ կարելի է երեխային լողացնել։ Լողացնելուց յետոյ անհրաժեշտ չէ իսկոյն հագցնել շորերը. կարելի է մաքուր չորացնել ու փաթաթել ֆլանելի կամ բումազէի սաւանի մէջ և թողնել որ քնէ։

Առաջին վաննայից յետոյ, հարկաւոր է նայել և տեսնել արդեօք երեխան վնասուած չէ՞ և կամ պակասութիւն չունի՞. եթէ որևէ բան նկատւում է, պէտք է իսկոյն դիմել բժշկին։ Այդ բոլորը պէտք է անել շուտափոյթ, որ երեխան չմրսի։ Մինչև 6 շաբաթը լաւ է լողացնել օրական 2 անգամ այն է կէս օրին և քնելուց առաջ։ Եթէ զանազան պատճառներով անկարելի է լողացնել 2 անգամ, այն ժամանակ անհրաժեշտ է օրական գոնէ մէկ անգամ։ Ամեն անգամ երեխային պէտք է լողացնել ոչ առաջ քան $1^1/_2$-2 ժամ անցած կերակրելուց, այսինքն եթէ կերակրել էք ժամը 10-ին, կարող էք լողացնել ոչ առաջ քան $11^1/_2$—12-ին։ Որքան էլ երեխան

լաց լինի, չպէտք է շտապել և ժամանակից առաջ լողացնել, որովհետև վնաս է։

Յաճախ ծծմայրը կամ աղախինը երեխային լողացնելիս տակն են գցում նրա կեղտոտ շորերը, որպէս զի յետոյ լուանան վաննայի մէջ. բայց ինչպէս վերևն ասացի անկարելի է վաննան ուրիշ բանի գործ ածել, աչքի առաջ ունենալով վարակուելը հետևապէս և հիւանդութիւնը։ Մայրը միշտ պարտական է ինքն իւր ներկայութեամբ և իւր ձեռքով պատրաստելու իւր երեխայի վաննայի ջուրը, որքան էլ զբաղուած լինի նա չպէտք է խոյս տայ, մօր սուրբ պարտականութիւնից ամենաառաջին զբաղմունքն իւր երեխան է։

II

Առաջին ասիգամ ծիծ տալը.—Առաջին վաննայից յետոյ, նորածինը քնում է մօտ 4—6 ժամ. արթնանալուց յետոյ հարկաւոր է նայել, եթէ թրջած կամ կեղտոտած է պէտք է մաքրել (սրա համար միշտ պատրաստ մի ամանում պէտք է ունենալ սպունգ և ջուր, որպէս զի ամեն անգամ լուանալ կեղտոտ տեղերը, կարելի է հենց առաջին օրից սովորեցնել քիչ հով ջրի) կրկին հարկաւոր է լուանալ բերանը և շորերը հագցնել։ (Թոյլ կամ օրապակաս նորածիններին շոր չեն հագցնում, այլ բամբակի մէջ են պահում)։ Եթէ նորածինը արթնանալուց յետոյ անհանգստանայ, կարելի է ծիծ տալ առաջին անգամ. առաջին կաթը, որը երեխան ծծում է կոչւում է Colostrum շատ լաւ է ազդում նորածնի մարսողութեանը մաքրում է ստամոքսը այն կեղտերից, որոնք գտնւում են նրա փորում մօր արգանտում գտնուած ժամանակը։ Ամեն անգամ ծիծ տալուց առաջ և յետոյ անհրաժեշտ է լուանալ ծծերը մի մաքուր շորով, որպէս զի չկեղտոտուեն և միկրոբների տեղիք տան։ Նոյնպէս պէտք է լուանալ երեխայի բերանը մի մաքուր բարակ շորով, որը պէտք

թրջել եփած և սառեցրած ջրի մէջ։ Ծիծ տալուց առաջ հարկաւոր է մի երկու կաթ կթել որպէսզի կուրծքը կակղի։ Իսկ իւր թուքը քսել կամ խնդրել սրան նրան որ ծծեն և յետոյ տալ երեխային, ոչ մի կերպ չի կարելի։ Հարկաւոր է ընդմիշտ թողնել այդ անմիտ և վտանգաւոր սովորութիւնը. որովհետև բերանում կարող են լինել զանազան բակտրեաներ, որոնք վարակելով ծիծը, կընկնեն երեխայի բերանը և կխանգարեն մարսողութիւնը։ Երկրորդ անգամ երեխային կարելի է ծիծ տալ, միայն երկու ժամից յետոյ. այդ երկու ժամուայ ընթացքում ծննդկանը պէտք է մի բան ուտէ. օրինակ մի բաժակ կաթ, կամ մի ման բուլիոն, կամ հաւի ծեծած միս։ Եթէ մօր կաթը առաջին օրերը չըբաւականացնէ նորածնին, այն ժամանակ կարելի է տալ եռացրած շաքարի ջուր, բայց ոչ գտալով, այլ ծծակով, (рожокъ) (որը պէտք է լաւ եռացնել և լուանալ)։ Առաջին օրը երեխային բաւական է կերակրել 3 անգամ։ Երկրորդ օրը 6 անգամ, չորրորդ օրը 7 անգամ։ Առաջին օրերը հարկաւոր է ծիծ տալ, ոչ յաճախ քան ամեն մի 2—3 ժամը։ Եթէ մի ժամ աւելի քնէ հոգ չէ. հարկաւոր չէ արթնացնել։ (Թոյլ կամ օրապակաս նորածիններին հարկաւոր է արթնացնել և տալ ամեն 2—$2^1/_2$ ժամը ճշտապէս)։ Եթէ երեխան երկար քնէ և արթնանալուց ծիծ չուտէ, ցաւ չէ, հարկաւոր չէ ուժով կերակրել, եթէ շրթունքները չորացած են, կարելի է քիչ շաքարաջուր տալ։ Անհրաժեշտ է միշտ հսկել երեխայի մաքրութեան վերայ, այսինքն ամեն անգամ արթնանալիս հարկաւոր է մաքրել և լուանալ կեղտերը։ Եթէ առաջին վաննայից յետոյ նորածինը քնէ մօտ 10 ժամ հարկաւոր չէ անհանգստանալ և նրան արթնացնել, հարկաւոր է աչքի առաջ ունենալ նորածնի յոգնածութիւնը ծննդեան ժամանակ և նրան հանգիստ տալ։ Առհասարակ պէտք է խոյս տալ երեխա-

ին արթնացնելուց և ուժով ծիծը բերանը խրելուց, իսկ եթէ ինքը նորածինը ցանկանայ, իհարկէ հարկաւոր չէ զրկել նրան իւր կաթից։ Երբէք հարկաւոր չէ լսել զանազան տատերի, ծծմայրների խորհուրդը և բացի ծծից և եռացրած շաքարաջրից, ոչինչ չպէտք է տալ նորածնին։ Եռացրած ջուրը պէտք է սառեցնել մինչև մօր կաթի տաքութեան աստիճանը. այն է 36°—37°C (39°R)։ Մեր պառաւների հմտութիւնը ոչինչ չարժէ, քանի որ նրանց խորհուրդները բոլորովին զուրկ են առողջապահական սկզբունքներից, լուրջ դէպքում հարկաւոր է դիմել բժշկին և նրա խորհրդին հետևել։ Չպէտք է լսել շրջապատողներին և յետաձգել բժշկին դիմելը. աւելի լաւ է վաղօրօք դիմել և հիւանդութեան առաջն առնել, քան սպասել, որ երեխան ուժից ընկնի և բժշկի համար անհնար լինի այլևս հիւանդին օգնել։ Առհասարակ պէտք է աշխատել որքան կարելի է շատ կարդալ առողջապահական գրքեր որքան կարելի է լաւ ծանօթանալ երեխայի օրգանիզմի և նրա զարգացման հետ և որքան կարելի է խոյս տալ հին, նախապաշարուած խորհուրդներից...

Կշռելը.—«Երեխան չէ խօսում, բայց կշիռն է խօսում, նա ասում է արդեօք երեխան աճում զօրանո՞ւմ է, թէ ընդհակառակը նիհարում է կամ մնում անփոփոխ» այսպէս է ասում Տալ՛բեր։ Հէնց որ երեխան ծնուեց հարկաւոր է նրան կշռել և թուերը նշանակել նրա յարմար յատուկ տետրակում։ Առաջին 3—4 օրը երեխայի կշիռը պակասում է, շնորհիւ զանազան հանգամանքների, 5-րդ օրից սկսում է կամաց կամաց աւելանալը։ Եթէ էլի շարունակում է պակասել այդ արդէն պաթոլոգիական երևոյթ է, հարկաւոր է առաջն առնել։ Երեխայի կշռի պակասելը կարող է լինել 1) երբ երեխան չի ստանում այնքան կաթ, որքան նրա օրգանիզմն է պահանջում, 2) երբ աղիքները ցաւում են, 3) երբ

թոքերը թոյլ են և դժուարացնում են ծծելու կարողութիւնը։ Կշռելով կարող էք իմանալ երեխայի պակասելը և վաղօրօք դիմելով բժշկին, չէք թոյլ տայ, որ երեխան նիհարի այն աստիճան, որ նկատելի լինի պարզ աչքի համար, որովհետև այդ աստիճան լղարելը արդէն վտանգաւոր է։ Կշռելով երեխային դուք կարող էք դատել, թէ արդեօք կաթը, որը նա ծծում է լաւ է թէ ոչ. լինի այդ մօր կամ ստնտուի կաթը, կամ արհեստական պատրաստած։ Մօտ 10-րդ օրը երեխան կշռում է այնքան, որքան որ կշռել է ծնուած ժամանակը, բայց պատահում է, որ միայն 20—28-րդ օրն են վերականգնում իրանց առաջուայ կշիռը, ուստի հարկաւոր չէ անհանգստանալ։ Հարկաւոր է կշռել առաւօտեան ծիծ տալուց առաջ, որովհետև ծծած կաթը ազդում է կշռի վերայ։ Եթէ մայրը շատ զբաղուած է և ամեն օր չի կարող կշռել, նա պարտաւոր է գոնէ շաբաթը 2—3 անգամ կշռելու բայց միևնոյն ժամանակ և միևնոյն պայմանների մէջ։ 5-րդ ամսից արդէն կարելի է կշռել շաբաթը 1 անգամ։ Կշռելը հեշտ է. հարկաւոր է առաջուց կշռել այն բոլոր մաքուր շորերը, որը պէտք է հագցնեն կամ փաթաթեն նորածնին (ոչինչ չպէտք է մոռանալ, մինչև անգամ պորտի բամբակը պէտք է կշռել)։ Կշռելուց յետոյ պէտք է գրել այն թիւը, որը կստանաք, յետոյ երեխային պէտք է հագցնել կամ փաթաթել այդ շորերը և կշռել կրկին, պէտք է գրել նոր թիւը և առաջինը հանել այս վերջինից ու կստացուի երեխայի քաշը։ Ինչ վերաբերում է կշռին ամենից լաւն է հռոմէական կշիռը (balace romaine), բայց դժբախտաբար նա շատ սուղ է և արժէ 25 ռուբլի։ Կայ և 8 ռուբլիանոց, Պետերբուրգ Ռիխտէրի խանութում, բայց եթէ այդ էլ թանգ համարուի, այն ժամանակ կարելի է գնել հասարակ էժան կշիռ և ամեն անգամ կշռելիս վերան դնել կամ տախտակ,

կամ մի մատուցարան, որ երեխայի համար յարմար լինի պարկելը (ի հարկէ առաջուց պէտք է կշռել և իմանալ դրանց քաշը)։

Կշռելն անհրաժեշտ է. բոլոր հեղինակաւոր բժշկներն ասում են, կշռելը միակ միջոցն է, որով կարող են իմանալ թէ արդեօք երեխան աճում է թէ ոչ։ Բժշկապետ Սնեակինը բաժանում է նորածիններին 3 կարգի.

		գրուանքա	grammes
I	թոյլ նորածինները կշռում են	2— 6,5—	800—2500
II	նորմալ » » »	6—10	—2500—4000
III	խոշոր » » »	10—11	—4000—4500

Տղայ նորածինները կշռում են աւելի ծանր քան աղջիկները։ Միջին թւով նորմալ նորածինը կշռում է 3 կիլոգ. 250 գր. առաջին օրերը, ինչպէս ասացի նա պակասում է, ապա կամաց, կամաց աւելանում։ Մինչև 5-րդ ամիսը նա աւելանում է միջին թւով շաբաթը 150 գր. (gr.) 5—6 ամիսը նա կրկնապատկումէ իւր ծնուած օրուայ կշիռը և այդ ժամանակ նա աւելանում է շաբաթը միայն 100—80 գր. (gr.) և մի տարում նա կշռում է 9 կիլոգրամ։ Եթէ երեխան չաւելանայ, կամ պակասի, հարկաւոր է բժշկին դիմել, որպէս զի նա հիւանդութեան առաջն առնէ։ Հարկաւոր չէ երկար սպասել։

Մor ծիծ տալու առաւելութիւնը.—Մայրը, եթէ նա տկար չէ և բաւականաչափ կաթ ունի, ինքը պարտաւոր է կերակրել իւր երեխային. դա մի ոուրբ պարտականութիւն է, որից նա չպէտք է խոյս տայ, ոչինչ չէ կարող փոխարինել մօր անձնուէր խնամքին և հոգացողութեանը։ Զուր չէ Ֆեդր ասում, որ «իսկական մայրը նա չէ, որ ծնել է, այլ նա է, որ կերակրել է»։ Մօր կաթը երեխայի համար ամենալաւ և ամենաառողջարարն է։ Ծիծ տալը օգնում է նոյն-

պէս մօր շուտ առողջանալուն (ծննդից յետոյ)։ Թէ որքան անհրաժեշտ է երեխայի համար մօր կաթը, այդ ցոյց է տալիս հետևեալը. մօր կաթով կերակրուողներից մեռնում են 8,28%, իսկ ծծմօր կաթով կերակրուողներից 18%։ Մայրը չպէտք է կերակրէ միայն հետևեալ դէպքերում. 1) երբ նա ունի սաստիկ սակաւարիւնութիւն, որովհետև այդպիսիների կաթը վատ է լինում. 2) երբ նա ունի թոքախտ, 3) երբ նրա ծնողները ունին թոքախտ. 4) երբ նա հոգեպէս հիւանդ է։ Այս դէպքերում աւելի լաւէ ծծմայր վարձել, որովհետև մօր կաթից յետոյ առաջին տեղը կնոջ կաթն է բռնում, յետոյ իշի և ապա այծի կաթը։ Իսկ եթէ մայրը հիւանդ է սիֆիլիսով, այն ժամանակ պարտաւոր է ինքն կերակրելու և իրաւունք չունի դիմելու ծծմօր, որովհետև երեխան շատ հեշտ կարող է վարակել անմեղ ծծմօրը։ Սիֆիլիսի ժամանակ մօր կաթը չէ փչանում, ուստի և կարիք չկայ ծծմօր դիմելու։

Զարկերակը.—Ամեն մայր պէտք է կարողանայ հաշուել իւր երեխայի զարկերակը։ Զարկերի քանակութիւնը իմանալու համար, հարկաւոր է ունենալ վայրկեանով ժամացոյց։ Պէտք է բռնել երեխայի ձեռքը, գտնել զարկերակը և ապա նայել ժամացոյցին և տեսնել քանի անգամ է խփում զարկերակը 30 վարկենում և ապա ստացած թիւը բազմապատկել 2-ով. այսպէս եթէ 30 վայրկենում խփել է 60 անգամ, ուրեմն նա մի րոպէում կխփէ 60×2=120։

Երեխայի զարկերակի քանակութիւնը մի րոպէում լինում է

130—140	զարկ	ծնուած ժամանակը.		
100—120	զարկ	1	տարեկան	հասակում.
100—110	զարկ	3	»	»
90—100	զարկ	5	»	»
80— 90	զարկ	7	»	»
80— —	զարկ	11	»	»

Բնած ժամանակ զարկերի քանակութիւնը քչանում է 15—20-ով։ Եթէ զարկերի քանակութիւնը շատանում է բայց տաքութիւն չունի, կնշանակէ լուրջ հիւանդ չէ, ընդհակառակը զարկերի քանակութեան պակասելը ապացոյց է հիւանդութեան և պէտք է իսկոյն բժշկի դիմել։

Ջերմութիւնը.—Ջերմութեան աստիճանը իմանում են ջերմաչափով, սրա համար հարկաւոր է ջերմաչափը իւր սուր ծայրով, ուր գտնւում է սնդիկը, դնել կռան տակը, (ջերմաչափը դնելուց առաջ հարկաւոր է սրբել կռան տակը, որ նա քրտնած չլինի, որովհետև այդ բոլորը ազդում է տաքութեան վերայ)։ Ջերմաչափը հարկաւոր է պահել 10—15 րոպէ. նորմալ տաքութեան աստիճանը 37° c. է, 38° c. ցոյց է տալիս թեթև ջերմ, 39° c. արդէն լուրջ ջերմ է. իսկ 40° c. բոլորովին լուրջ։ Եթէ տաքութիւնը սկսւում է 38° c.-ից և կամաց կամաց հասնում է 40° c.-ի այդ աւելի երկիւղալի է, քան թէ այն ժամանակ երբ ուղղակի 40° c. է։

Շնչառութիւնը.—Մայրը նոյնպէս պէտք է կարողանայ հաշուել իւր երեխայի շնչառութիւնը։ Երեխաների շնչառութեան քանակութիւնը մօտ 40 է մի րոպէում։ Շնչառութիւնը հաշուելու համար հարկաւոր է ձեռքը թեթև կերպով դնել երեխայի փորի վրայ և ամեն մի արտաշնչելն ու ներշնչելն հաշուել մի շնչառութիւն։ Նկատուած է. որ թոքերի հիւանդութեան ժամանակ շնչառութիւնը լինում է 80. այն ժամանակ ասում են որ շնչառութիւնը շատ յաճախ է, իսկ երբ շնչառութիւնը ծանր և հեւոց է նշանակում է փորն է հիւանդ։ Ուղեղի հիւանդութեան ժամանակ շնչառութիւնը անկանոն է կամ արագ կամ կամաց։

Լեզուի գոյնը.—Նմանապէս պէտք է ուշք դարձնել լեզուի գոյնի վերայ. առողջ երեխայի լեզուն պէտք է լինի վարդագոյն, մանաւանդ լեզուի ծայրը և կողքերը։ Լեզուի

մէջ տեղը պէտք է լինի բոլորովին մաքուր և խոնաւ։ Եթէ լեզուի վերայ խիտ և սպիտակ կեղտ կայ, նշանակում է երեխան ջերմ ունի։ Եթէ լեզուն չոր կարմիր և տաք է, նշանակում է մարսողութեան խողովակը խանգարուած է. եթէ լեզուն անշարժ է և անգոյն ու վրան նկատւում են ատամի հետքեր, նշանակում է երեխան շատ թոյլ է։

Սենեակի տաքութեան աստիճանը.—Պէտք է աշխատել երեխային չմրսեցնել. սենեակի տաքութեան աստիճանը պէտք է լինի 15°—17°R, բայց ոչ աւել, նոյն իսկ եթէ երեխային տաք հագցնեն, նա կարող է տանել 10°—12°R։ Երեխայի հագուստը պէտք է լինի սպիտակ գոյնի որպէս զի կեղտը անմիջապէս երևի։ Բարձը և դօշակը թաւամազից չը պէտք է լինեն այդ վնասէ, այլ ձիու պոչի մազից։

Գլխի ձեւը.—Շատ անգամ նորածինների գլուխը անկանոն ձև է ստանում, սակայն հարկաւոր չէ, ինչպէս մեզ մօտ ընդունուած է, տրորել, որպէս զի ձևը լաւանայ, այլ պէտք է որ ինքն իրան ուղղուի, որովհետև այդ անմիտ տրորելը կարող է խելագարութեան պատճառ դառնալ։

Կուրծքը.—Նորածնի կուրծքը, միևնոյն է լինի նա աղջիկ կամ տղայ նորածին, 4-րդ օրը ծննդից յետոյ ուռչում է, կաշին կարմրում է և եթէ սեղմէք կաթ կհոսէ։ Այդ ուռուցքը աւելանում է մինչև 8-րդ օրը, յետոյ սկսում է կամաց կամաց անցնել և բոլորովին քաշւում է կամ մի, կամ երեք ամսուայ ընթացքում։ Բայց պատահում է որ տևում է նոյն իսկ մինչև 6 ամիս։ Դժբախտաբար մեզ մօտ ընդունուած է այդ ուռած ծծերը կամ ծծել կամ սեղմել, կարծելով որ բնութիւնը սխալ է գործել, պէտք է ուղղել, սակայն այդ սեղմելը աւելի է բորբոքում կուրծքը և շատ անգամ լուրջ հիւանդութեան տեղիք է տալիս, հարկաւոր է թողնել, որ ինքն իրան անցնի կամ թէ դիմել բժշկին։

Ծծակի կտրելը.—Երեխան ծնուելու ժամանակ պէտք է դնել մօր ոտների արանքում և աշխատել որ ծծակը չը ձգուէ, մի քանի բոպէից, երբ պորտի երակի զարկելը վերջանայ, հարկաւոր է նրան երկու տեղից կապել, եթէ միայն ընկերը դեռ չէ ընկել, մէկը երեխայի փորից 3—4 մատ հեռաւորութեան վրայ և միւսը այդ կապից 3 սանտ. հեռաւորութեան, և ապա ախտահանած մկրատով կտրել այդ երկու կապերի մէջ տեղը։

Պորտի կազմուելը.—Պէտք է ուշք դարձնել որ պորտը լաւ կապեն, որովհետև հակառակ դէպքում կարող է արնաքամ լինել։ Կապելուց յետոյ, սկսւում է նրա չորանալը. սկզբում պորտը լինում է հաւասար և կլոր, իսկ յետոյ սկսում է բարակել, տափակել և կամաց կամաց դառնում է թափանցիկ, այնպէս որ նկատելի են լինում երկու զարկերակ և մի երակ։ կամաց կամաց ծծակը սկսում է չորանալ և վերջին օրը կախւում է միայն մի երակի վրայ։ Առհասարակ 4—5 օրը վայր է ընկնում բայց կարող է իւր հաստութեան պատճառով այդ չորանալը տևել աւելի երկար, մօտ 7—8 օր մինչև անգամ 13 օր։ Ծծակը վայր ընկնելուց յետոյ տեղը մնում է մի վերք, որը կամաց կամաց լաւանում է և թողնում է մի սպի։ Կաշին, որը պահում է ծծակին, սկսում է հետզհետէ ներս քաշուել (շնորհիւ պորտի երակների սեղմուելուն) և այսպիսով ստացւում է պորտը։

Պորտի խնամելը.—Պորտի վերքը մինչև բոլորովին լաւանալը շատ երկիւղալի է, որովհետև շատ հեշտ վարակւում է, բժիշկները այդ վերքը կոչում են «նուազագոյն դիմադրութեան կէտ». նա վարակւում է կեղտոտ ջրից, կեղտոտ ձեռներից, կեղտոտ շորից և մինչև անգամ սենեակի կեղտոտ օդից, հարկաւոր է շատ զգոյշ վարուել նրա հետ։ Եւ որովհետև հիւանդութեան տեղիք չտալու ամենագլխաւոր պայ-

մանը պորտի շուտ չորանալն է, ուստի հարկաւոր է ամեն ջանք գործ դնել, որ նա չհոտի, իսկ սրա համար անհրաժեշտ է, որ պորտի հետ գործ ունեցողի ձեռքերը ինչպէս և պորտի շորը միշտ ախտահանած լինեն։ Ամեն անգամ վաննայից յետոյ պէտք է ծծակը փաթաթել փափուկ ախտահանած շորով և զգուշութեամբ դարձնել ծծակը դէպի փորի ձախ կողմը, վրան դնել սալիցիլեան բամբակ և ամրացնել փաթաթանով (бинтъ)։ Լողացնելու ժամանակ հարկաւոր չէ պորտի շորը պոկել, այլ բաւական է միայն փաթաթանը վերցնել և սպասել որ վաննայի ջրի մէջ ինքը կակղէ և վայր ընկնի։ Առհասարակ հարկաւոր չէ երբէք պոկել պորտի շորը, նոյն իսկ եթէ մազի չափ բարակ կախուած լինի, թողէք ինքն իրան վայր ընկնի։

Վաննայից յետոյ հարկաւոր է զգուշութեամբ չորացնել ախտահանած փափուկ շորով և նորից կապել։ Կարելի է ցանել բորական փոշի։ Իւղ, ճարպ կամ սապոն հարկաւոր չէ դնել, նրանք աւելի են վնասում և ուշացնում պորտի չորանալը։ Պորտը պէտք է փաթաթել այսպէս. մի հին, բայց մաքուր քաթան մի 2 անգամ ծալել և կտրել այս տեսակ

և դնել պորտի վրայ այնպէս, որ ա մասը շրջապատէ ծծակի հիմքը, յետոյ ծծակը ծռել դէպի փորի ձախ կողմը և Բ և Գ ծայրերով փաթաթել, վրան դնել սալիցիլեան բամբակ և կապել փաթաթանով։ Այդպէս պէտք է անել մինչև պորտի կազմուելը և ապա հարկաւոր է միայն կապել փաթաթանով։ Փաթաթանը պէտք է լինի լայն, երեխայի փորի ձևին, որպէս զի նրան չը նեղացնէ։ Որովհետև հազի կամ լացի ժամանակ պորտը դուրս է գալիս, ուստի հարկաւոր է կապել մինչև 2 ամիսը լայն փաթաթանով։ Երբ պորտի հետ ան-

զգույշ են վարուում, չորացած սպիի տեղ ստացուում է կարմիր մակերևոյթ, որը արտավիժում է ժահր (гной) և հեղուկ որոնք վերքեր են տալիս։ Այս դէպքում աւելի ևս զգույշ պէտքէ լինել, որովհետև կոշտ շորի շփումից և վատ կապելուց կարող է աւելի ևս բորբոքուել։ Երբէք չպէտքէ թոյլ տալ շրջապատողներին, որ այդ վերքը բժշկեն տնային միջոցներով կրկնում եմ, որ մեր բոլոր տնային միջոցները զուրկ են առողջապահական սկզբունքներից և յաճախ իրանց այդ բժշկութեամբ առաջացնում են պորտի իջուածք, (грыжа) կոչուած հիւանդութիւնը։ Չէ կարելի ոչ զանազան փոշիներ ցանել և ոչ էլ զանազան պտուղներ կամ նրանց հիւթերը դնել, այդ ամենը աւելի են գրգռում և սաստկացնում բորբոքումը. այդ դէպքում աւելի լաւ է բորիական վազելին քսել, մաքուր պահել և օրական մի քանի անգամ եռացրած սառցցած ջրով լուանալ, բոլոր ծալքերը միմեանցից հեռացնել և նոյնպէս լաւ լուանալ։ Եթէ ժահրի արտավիժումը երկար տևէ, հարկաւոր է դիմել բժշկին, առանց մի որևէ տնային միջոցի դիմելու, հակառակ դէպքում կ'զրկուէք ձեր թանկագին մանկիկից։ Մանաւանդ պէտքէ զգույշ լինել, երբ քաղաքում կարմիր քամի կամ բգացաւ կայ։ Եակօբի ասում է. «աւելի լաւ է այս դէպքում 20 անգամ դիմել անօգուտ բժշկական միջոցների, քան մի անգամ բաց թողնել անհրաժեշտ միջոցը», որովհետև ինչպէս վերևն ասացի ամենահեշտ վարակուող մասնէ այդ պորտի վերքը։ Դրա լաւանալը տևում է 15 օր (պատահում է որ տևում է 40 օր)։

Կլենկէ բժիշկը խորհուրդ է տալիս մի քանի ժամանակ վրան օդի փաթեթ (компрессъ) դնել, որպէս զի կաշուի զգայնութիւնը քչանայ և պորտի ներս քաշուելը արագանայ։

Աչքի բորբոքումը.—Աչքացաւը որի մասին ես պիտի խօսեմ, կոչուում է բլենօրրեական աչքի բորբոքումն (блено-

ррейное воспаленіе глазъ). Քանիցս անգամ պատահած կը-լինէք մանուկների կարմիր կոպերով, իրար կպած թերթիչ-ներով, որոնց վրա ծանրանում է ժահրը. այդ աչքացաւը եթէ չի բժշկուում հասցնում է կուրութեան։ Իսկ բժշկուում է բաւական ուշ 4—6 և մինչև անգամ 8 շաբաթում։ Հէնց որ նկատեցիք, որ երեխայի կոպերը կարմրել են, ժահր են արտավիժում և թերթիչները իրար են կպչում, իսկոյն դիմեցէք բժշկին։ Շրջապատողներին շատ անգամ թւում է, որ երեխան աչքացաւը ստանում է 4—6 օրը, բայց այդ սխալ է, եթէ լաւ նայէք կ'տեսնէք որ երկրորդ օրից նկատուում է կոպերի և թերթիչների միմեանց կպչելը։ Յետոյ 3—4 օրից կոպերը սկսում են կարմրել և ուռչել և շօշափելիս տաք են։ Յետոյ սկսում են դեղին կիտրոնի գոյնի ժահր արտավիժել. 4—5 օրից ժահրը աւելի է շատանում, ուռածը քչանում է և արտաւիժումը այնքան սաստիկ է, որ սկսում է թափուել թշերի վերայ, կամաց կամաց առաջ է գնում բորբոքումը և փչացնում է աչքը։

Որպէսզի խոյս տալ այդ հիւանդութիւնից հարկաւոր է, որ 1) Եթէ մայրը ունի սպիտակ ապարահ (perde blanche), աշխատի ծննդից առաջ բժշկուել։ 2) Երեխան ծնելուց իսկոյն կաթացնել նրա աչքերի մէջ 2% Ag. № 3 և կոպերը մաքուր լուանալ բամբակով։ Առհասարակ հարկաւոր է ամեն միջոց գործադնել, որ երեխան չստանայ այդ աչքացաւը, իսկ սրա համար անհրաժեշտ է մաքրութիւն և միայն մաքրութիւն։ Ամեն առաւօտ մայրը պէտքէ վաննայից յետոյ առանձին սպունգով լուանայ երեխայի երեսը 26°-27°R տաքութեան ջրով, իսկ աչքերը բորական թթուտի ջրով (4%). Ամեն մի աչքը պէտքէ լուալ առանձին բամբակով և ամեն անգամ բամբակը դէն ձգել։ Մեզ մօտ մայրերը սովորութիւն ունին իրանց կաթը քսելու երեխայի աչքերին և մատով մաքրելու. դա

վայրենի սովորութիւն է, որից պէտք ընդմիշտ հրաժարուել, որովհետև դա տեղիք է տալիս աչքացաւի։ Տնային և ոչ մի միջոցի հարկաւոր չէ դիմել, այլ միայն դիմել բժշկին և հետևել նրա խորհրդին։

Օրորելը.—Մեզ մօտ մի շատ վատ սովորութիւն կայ. դա երեխաներին օրօրելն է։ Օրօրելուց երեխայի գլուխը տարուբերուում է և նա կամաց կամաց քնում է. բայց այդ քունը իսկական չէ այլ արհեստական և նոյն ազդեցութիւնն ունի, ինչ որ բոլոր թմրեցուցիչ միջոցները. ապացուցուած է, որ երկար օրօրելը մեծերին հասցնում է ինքնամոռացութեան. ուրեմն զարմանալի չէ, որ օրօրելուց երեխան կորցնում է գիտակցութիւնը և չի զգում ոչ ցաւ, ոչ քաղց և ոչ անյարմար դրութիւն։ Բժիշկ Վ. Ա. Մանասսէին եկել է այն եզրակացութեան, որ օրօրելը ջերմութիւնը իջեցնում է, ինչպէս այդ պատահում է մորֆիի (морфія) ալկոհոլի ազդեցութիւնից։ Օրօրելը ուղեղին սաստիկ վնաս է, բացի այդ, օրօրելը վնասում է և նրանով, որ թաղցնում է երեխայի անհանգստութեան իսկական պատճառը, որովհետև փոխանակ վերցնելու և նայելու թէ, արդեօք թրջուած է, կամ անյարմար է պարկեցրած, նրան օրօրում են մինչև որ յոգնի և արհեստական միջոցով քնի։ Գուցէ ասէք, չէ՞ որ մեզ օրօրել են, ապա ինչո՞ւ մենք չենք վնասուել. աւա՜ղ քանի քանի երեխաներ մեռնում են ուղեղի վիրաւորուելուց, քանիսն են մեռնում խաշխաշ (макъ) ուտելուց։

Մի խօսքով ոչ մի մայր չպէտք է ունենայ իւր տանը օրօրոց։ Հէնց առաջին օրից լաւ է երեխային քնացնել կողովի մէջ։ Կողովը պէտք է դնել մի լայն աթոռի կամ արկղի վրայ։ Անկողինը միշտ պիտի լինի 80—90 սանտ. յատակից բարձր։ Կողովը հարկաւոր է շուտ շուտ քամու տալ. իսկ երեխային այդ ժամանակ կարելի է դնել մօր անկողնու վրայ։

Յետոյ աւելի մեծ հասակի համար հարկաւոր է գնել մի անկողին, որը նրան կարող է ծառայել մինչև 6—8 տարին։ Թէ կողովը և թէ անկողինը պէտք այնպէս տեղաւորել, որ միջանցուկ (сквозной) քամի չլինի, որովհետև դա երեխային սաստիկ վնասում է։ Եթէ երեխան ծնելուց յետոյ բարձր լաց է լինում, նշանակում է նա առողջ է. այդպիսիները շուտով լաց են անում աչքերը և շարժում են իրանց վերջաւորութիւնները։ Բարձր լացը օգուտ է, որովհետև թոքերը լայնանում են և օդը գնում է մինչև նրա ամենափոքր թոքափողերը (бронхи), բայց դժբախտաբար ոչ բոլորին է վիճակուած այդ. շատերը ընդհակառակը ծնւում են լուռ, մունջ, աչքերը փակ, չեն շնչում և եթէ լսէք սիրտը հազիւ հազ է բաբախում. այդ դէպքում հարկաւոր է իսկոյն բժշկին դիմել, որովհետև այդպիսիներից մի քանիսը մեռնում են իսկոյն, միւսները մի քանի ժամից կամ շաբաթից։ Բժիշկը կարող է առողջացնել։ Տնային միջոցները անօգուտ են և միայն կուշացնեն բժշկի գալը։

Պատահում է, որ երեխայի ստամոքսը առաջին օրերը չի գործում, կամ նա չէ միզում, այդպիսի դէպքերում հարկաւոր է բժշկին դիմել, պէտք չէ ոչինչ առանց բժշկի խորհրդին խմացնել։

Զբօսանքը.—Զբօսանքը անհրաժեշտ է մանուկներին թէ ամառը և թէ ձմեռը։ Ամառը կարելի է դուրս բերել նորածնին 10—12 օրից։ Ամառուայ զբօսնելու ամենալաւ ժամանակը առաւօտ և երեկոյեան է, որ շատ շոգ չլինի։ Ձմեռը հարկաւոր է դուրս բերել նորածիններին 5 շաբաթից յետոյ, իսկ մի քանի օր առաջ հարկաւոր է տաք հագցնել և մօտեցնել բաց պատուհանին, որպէս զի մի 2 րոպէ նա սովորէ դրսի օդին։ Ձմեռը ամենալաւ ման գալու ժամանակը կէս օրն է. հագցնել հարկաւոր է եղանակի համեմատ,

իսկ երեսը միշտ ծածկել սպիտակ քողով։ Առաջին անգամ կէս ժամից աւել հարկաւոր չէ դրսում մնալ։ Նորածնին միշտ պէտք է ձեռքերի վրայ պառկած զբօսնել, իսկ երբ նա արդէն կարողանայ նստել, հարկաւոր է նստացնել հերթով կամ աջ կամ ձախ ձեռքի վրայ, որպէս զի նրա ողնաշարը չծռուի։

Կին բժ. Ա. Բաւղաղեան-Նազարեան

ՀՊԻՑ



ԻՆՉՊԻՍ ՊԻՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԾԾԿԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Շատ յաճախ փոքր երեխաները հիւանդանում և մեռնում են փորլուծից մանաւանդ ամառ ժամանակ. դրա գլխաւոր պատճառն այն է, որ շատ մայրեր չեն իմանում իրանց մանուկներին կանոնաւոր կերպով ծիծ տալ։

Ամեն մի մայր, երէ նա առողջ է, պէտք է ինքը կերակրէ իր ստինքով (ծծով) իւր մանուկին, որովհետև մօր կաթը երեխայի համար ամենաբնական և սննդարար կերակուրն է։ Բաց կրծքով կերակրելը ունի իւր կարգ ու կանոնը, նայած երեխայի հասակին։ Այս պատճառով խիստ պահանջւում է հետևեալ կարգը պահպանել. մինչև վեց ամսական հասակը պէտք է ծիծ տալ երեխային ոչ աւելի քան ամեն երկու ժամից յետոյ, ընդամենը վեց անգամ ցերեկը և երեք անգամ գիշերը։ Իսկ վեց ամսից յետոյ՝ չորս անգամ ցերեկը և երկու անգամ գիշերը։

Մայրերը մի վատ սովորութիւն ունեն, մանկիկի բերանը ծիծ են դնում, հէնց որ նա ձայնը բարձրացնում է։ Շուտ—շուտ կերակրելը երեխային շատ վնաս է, դրանից նրանք փսխում են, նրանց փորը փքւում է, սաստիկ ցաւում և յաճախ լուծում։ Եթէ երեխէն անհանգիստ է և

քղաւում է, այդ չէ նշանակում, որ նա քաղցած է։ Պէտք է նայել թէ արդեօք նրա տակը հօ թաց չէ, կամ կեղտոտած. մրսում է երեխէն, թէ տաքից նեղւում, չէ սեղմում նրան բարուրը, կամ չէ կծում նրան բաղլինճը կամ մի ուրիշ միջատ։ Ահա դեռ այս ամենը պէտք է կարգի դնել և չշտապել կերակրելու երեխային մինչև որոշած ժամը։ Պէտք է ծիծը հերթով տալ—մէկ անգամ աջը և միւս անգամ ձախը։ Ամեն անգամ թողնելու է ծծել ստինքը, մինչև որ երեխէն ինքը դադարի։ Հիւանդ ծիծը երբէք չպէտք է երեխին տալ։ Մանկան կերակրելիս մայրը պէտք է հանգիստ նստած լինի. երեխին վերցնի իւր ծնկան վրայ և փոքը ինչ թեքուի դէպի երեխի բերանը—այս դիրքով սրան յարմար կլինի ծծելը։ Կշտացած երեխին հարկաւոր չէ սաստիկ օրօրել կամ վեր—վեր անել, քանի որ դրանից կերակուրը կարող է յետ գալ։ Չի կարելի քնած երեխին պահել ծծի վերայ, նոյնպէս մայրը չպէտք է քնի երեխային կերակրելիս։

Մայրը իր ստինքը (ծծերը) պէտք է շատ մաքուր պահէ.—Ամեն ծիծ տալուց առաջ մաքուր տաք ջրով լուանայ և կերակրելուց յետոյ մաքուր կտորով սրբէ պտուկները։ Կեղտոտ ծծերից երեխէն կվնասուի (բերանումը դուրս կգան բշտիկներ, փորը կլուծէ), և մօր պտուկներն էլ կճաքճաքուին, որից կհետևի սաստիկ պակացաւ և յետոյ կարող է առաջ գալ ստինքների բորբոքումն։

Եթէ երեխէն լաւ չի ծծում, պէտք է իսկոյն նայել երեխի բերանը.—Եթէ բերանումը սպիտակ բշտիկներ են քուսնած կամ մի ուրիշ հիւանդութիւն է երևում, դեռ պէտք է հոգ տանել բժշկին ցոյց տալու, իսկ մինչև այդ կատարելը, պէտք է վերցնել փափուկ, բոլորովին մաքուր քաթանի կտոր, փաթաթել մի մատին (ճըկթին), թաց անել մա-

քուր ջրում կամ անշաքար չայում և այդ մատով սրբել երեխայի ընտերքը, լեզուն և թշերի ներսի կողմերը։

Երբ մայրն իր կրծքով է կերակրում երեխային, պէտք է ինքն էլ լաւ սնունդ ունենայ. օգտակար է ուտել կաթ, ձու, միս, շիլախաւիծ։ Մայրը պէտք է հեռու մնայ այնպիսի կերակուրներից որոնք սովորաբար նրան վնասում են և ստամոքսը խանգարում։

Ծիծ տուող մայրը բոլորովին չպէտք է գործածէ ոգելից խմիչք (գինի, արաղ), որովհետև դրանք բոլորն էլ վնասում են երեխային։ Մինչև վեց ամսական հասակը երեխային ոչ մի ուրիշ բան չի կարելի տալ, բացի մօր կաթից.—մինչև այդ ժամանակ նորածինը թոյլ է և ամեն ուրիշ կերակուր, մանաւանդ պինդ կերակրեղէն նրան անշուշտ կվնասէ։ Վեց ամսից յետոյ, եթէ երեխէն առողջ է, կարելի է քիչ—քիչ տալ նրան կովի եփած կաթ, թերխաշ ձու, բրնձէ կաթնապուր կամ շիլա։

Երեխայի կերակուրը պէտք է անպատճառ տաք լինի եւ ոչ սառը.—Պինդ կերակրեղէն, օրինակ՝ սև կամ սպիտակ հաց, բաքսմաթ, գետնախնձոր (կարթոֆիլ) կարելի է տալ, երբ երեխէն կունենայ գոնէ ութը ատամ, այսինքն մէկ տարեկան հասակում։ Գիշերները յիշածս կերակուրները տալը աւելորդ է։

Երեխային կարելի է ծծից կտրել, երբ երեխայի մէկ տարին լրանայ.—Մի տարուց աւելի երեխային ծիծ տալու հարկ չկայ. այդ միջոցին մօր կաթն էլ առաջուայ պէս չի կշտացնում և օրէցօր պակասում է, մայրն էլ ոյժից ընկնում է ու նուազում։

Ծծից պէտք է կտրել կամաց—կամաց, այն է աւելի ուշ—ուշ ծիծ տալ և փոխարէնը ուրիշ կերակուրներ տալ։ Եթէ երեխէն հիւանդ է, մանաւանդ եթէ փորլուծ ունի,

այդ ժամանակ չի կարելի մօր կաթից զրկել, շատ շոք ժամանակ ծծից կտրելը նոյնպէս վտանգաւոր, է որովհետև երեխային փորլուծ կպատահի։ Երբ երեխային ծծից կտրեցիր, պէտք է նրան տալ նոյն կերակուրը, որ քիչ առաջ էլ տրուում էր. նախ ջրալի և ապա պինդ բաներ, ինչպէս խաշած կարտօֆիլ, լաւ թխած տանու հաց, ձու։ Բաղցրեղէնից ամենից լաւն է շաքարը, որովհետև զանազան կանֆէտները, մանաւանդ ներկածները շատ անգամ վտանգաւոր են։ Երրորդ տարուումը երեխային կարելի է չափաւոր կերպով տալ այն կերակուրները, որ մեծերն են ուտում սովորաբար։

Եթէ կաթնատու մայրը հիւանդ է, պէտք է անշուշտ բժշկի դիմէ, որ կարող է բացատրել թէ այդ հիւանդութիւնով կաթ տալը երեխային և իրան վնասակար չէ արդեօք։

Լա՜ւ, ի՞նչ անել այն դէպքում, երբ բժիշկը չթոյլ տայ մօրը ծիծ տալ, երբ մօր կաթը ցամաքել է, կամ Տէրը մի արասցէ, մայրը վաղճանուել է թողնելով քաղցած ծծկերին։ Ամենից լաւը կլինի դիմել մի առողջ կինալմասի՝ ծծերում կաթ ունեցողի, որ նա ծիծ տայ երեխին գոնէ այնքան ժամանակ, որ սա ամրանայ. պէտք է այնպիսի ծծմօր դիմել, որի երեխէն էլ նոյն հասակին լինի։ Այս բանը շատ կարեւոր է մանաւանդ երեխայի առաջին երեք ամիսներում։ Եթէ այդ էլ չյաջողուի պէտք է ուրեմն երեխային կերակրել կովի կաթով։

Բայց դրա համար հետեւեալ զգուշութիւններն են հարկաւոր.—Մի բաժակ կովի կաթին պէտք է խառնել եփ տուած ջուր և մի թէյի գդալ շաքարի մանրունք։ Ջրի խառնուրդը պէտք է լինի այս հաշուով՝ մէկ շաբաթական երեխայի համար մի թաս կովի հում կաթին պէտք է աւելացնել երեք թաս ջուր և եփ տալ։ Երկու և երեք շաբաթական երեխայի համար պէտք է մի թաս (բաժակ) կաթին աւելացնել երկու թաս

ջուր։ Չորս—հինգ—վեց շաբաթական երեխային կարելի է տալ կովի կաթը կիսով չափ ջրախառն։ Եօթներորդ շաբաթից մինչի 3 ամսուայ հասակը երկու թաս կովի կաթին պէտք է աւելացնել մի թաս ջուր։ Իսկ չորս ամսական երեխային կարելի է արդէն սննդել անխառն հում կաթով տաքացրած և քիչ շաքարով քաղցրացրած։

Պէտք է կաթ տուող կովի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել — Նրան պէտք է մաքուր պահել, բաւական խոտ տալ՝ չոր թէ կանաչ, մաքուր ջուր խմացնել խառնուած թէփով և ալիւրով, քիչ էլ աղ աւելացրած։ Կովին չպէտք է տալ կեղտոտ ջուր, զանազան տանու մնացորդներով խառնուրդ բաներ։

Կովը կթելուց յետոյ (առաւօտ եւ երեկոյ) կաթը պէտք է լաւ եփել եւ մինչեւ երեխային տալը պէտք է պահել (մաքրուած եւ կրակի վրայ բռնած ամանով) սառը տեղում։ Երեխային պէտք է տալ կաթը միշտ տաքացրած և այնքան անգամ, որքան վերը յիշուած է մօր կաթի համար։ Այս կարգին պէտք է աւելի հետևել, քանի որ չափից աւելի կովի կաթը աւելի ևս վնաս կտայ, քան թէ մօր կաթը։

Պէտք է կաթը տալ երեխային այնքան, որ նա կուշտ լինի և զկռտալով յետ չբերէ աւելորդը։ Կովի կաթն ու ջրալի կերակուրը երեխային պէտք է տալ ապակէ ծծակով, որովհետև պոզի (կոտոշի) և երկաթի կամ անագեայ ծծակները շուտ են կեղտոտուում։ Թէկուզ քիչ թթուած լինի կաթը, չպէտք է տալ երեխային, որովհետև դրանից կըսկսի փըսխել և լուծմունք կստանայ։ Արհեստական ծծակները ռետինից լինելու են։ Թէ այդ ծծակները և թէ կաթի շուշէն (ապակէ ամանը) պէտք է մաքուր լուանալ տաք ջրով ամեն կերակրելուց յետոյ։

Երբէք գործածելու չէ կեղծ ծծակ երեխայի բերանը դնելու, որ պատրաստում են մայրերը ծամած հացից, տրն-

ռած գազարից կամ կաթնախառիծից։ Ոչ մի օգուտ նրանցից չկայ, բայց վնասը շատ մեծ է, նրանցից երեխայի բերանը բշբշտում է, լուծ և փորացաւ է առաջ գալիս։ Երեխաները լղարում են և թուլանում։ Ոչ մի դեղ այդ դէպքում երեխային չի օգնում, մինչև մայրը ձեռք չվերցնէ երեխի բերանը դնելու անպէտք սուտ պտուկները։

Ինչ որ այստեղ գրուած է, պէտք է կատարել միշտ, մանաւանդ մեր պատուէրներին պէտք խիստ հետեւել շոգեր ի ժամանակ, ամառուան եղանակին երբ սովորաբար երեխէքն աւելի շատ են տկարանում և մեռնում լուծից։ Առհասարակ փորլուծի դէպքում, փոխանակ աւելորդ դեղեր երեխային տալու, լաւ է տանել նրան հէնց սկզբից բժշկի մօտ, որը որ կայ։

Քանի այդ շուտ կատարուի, այնքան աւելի լաւ կլինի։

Թարգ. Տիկին Ս. Բաբայեան



Մի փոքրիկ յիշողութիւն

Ամառուան տաք օրերից մէկն էր Վիեննայում երբ մեր կառքը սրարշաւ անցաւ Դեօբլինգ կոչուած արուարձանով և կանգնեց խուլ ու համրների դպրոցի մեծ շէնքի առաջ։

Դեռ նոր էինք իջել կառքից, երբ յանկարծ մեր առաջը եկաւ մի դեռահաս երիտասարդ և ձեռքերի շարժումներով ու իւր տարօրինակ խօսակցութիւնով սկսեց մեզ ցոյց տալ դպրոցի դուռը ու զանգահարել և վազելով մտաւ մեծ դարպասից դէպի բակը, երևի հաղորդելու օտարականներիս գալու մասին։

Դուռը բացուեց, ներս մտանք։ Աշակերտներն ու աշակերտուհիներն իրար անցան։ Քիչ յետոյ մեզ ընդունելու եկաւ մի բարի դէմքով երիտասարդ պարոն և խնդրեց մտնել ընդունարանը։ Նա յայտնեց իւր ազգանունը և ասաց, որ այդ դպրոցի վարժապետն է։ Նա շատ սիրալիր կերպով տարաւ մեզ ցոյց տուեց աշակերտների դասարանները, ննջարանները, այն մեծ ու ընդարձակ սենեակները պարտէզի մէջ, որտեղ մարմնամարզութեամբ են պարապում աշակերտները. քանի մարմնամարզական գործիքներ ասես, որ չկար այնտեղ։

Ահա և մէկ ուրիշ մեծ սենեակ դորան կից, որտեղ խուլ ու համր աշակերտներն ու աշակերտուհիները խոհարարութիւն են սովորում։ Ահա սիրուն ու մեծ պարտէզը, որտեղ դժբախտ երեխաները բահ ու թիակները ձեռքերին ուրախ—զուարթ մարկեր են փորում և ծաղիկները ջրում։ Դպրոցում ուսուցանում են և նկարչութիւն, աղջիկներին ձեռագործ, իսկ տղայոց ձեռքի աշխատանք։ Ուսման ծրագրի մէջ կայ նաև տնտեսագիտութիւն՝ սանիկներին ծանօթացնում են մարդկային սնունդի, հագուստեղէնի, ոտնամանի, տնաշինութեան առարկաներին. նմանապէս թղթեղէն, փայտեղէն, մոմեղէն և այլ նիւթերից պիտանի առարկաներ պատրաստելու։

Այդ ուսումնարանն ունի ութը դասարան և իմ տեսածը ժամանակ կար 157 աշակերտ երկու սեռից բոլորն էլ Ձրիավարժ գիշերօթիկ, բացի երկուսից։ Նոցանից 74-ը ի ծնէ խուլ ու համր, 38 տղայ, 36 աղջիկ. 75 հոգին ծանր հիւանդութիւնից են խլացել, իսկ ութը թէև կատարելապէս լսում են, բայց հոգեկան հիւանդութեան պատճառով բոլորովին համր են։ Դպրոցում կան 17 ուսուցիչ և 2 բժիշկ։ Բոլոր ծախսերի գումարն է 52,000 ֆիօրին, մօտաւորապէս 50,000 րուբլի, որի մեծ մասը արուարձանի հասարակութիւնն է վճարում, իսկ մնացած ծախսերը լրացնում են նուիրատուութիւններով։ Տարուայ մէջ նշանաւոր տօների առթիւ լինում են նուիրատուութիւններ ոչ միայն դրամով, այլև զանազան նիւթերով. այդ նուիրատուութիւններով գլխաւորապէս հոգացւում են մատենադարանի, ուսումնական պիտոյքների և աշակերտական զբօսանքների ծախքերը։ Ամառուայ ամիսներին ուսուցիչները խումբ-խումբ են բաժանում սանիկներին և գնում են ճանապարհորդելու Վիեննայից դուրս շրջակայ նշանաւոր տեղերը։ Աղջիկների ձեռագործները տարին մէկ անգամ հանդէս է դրւում և վաճառւում

է հրապարակաւ. այդ առթիւ ևս լինում են նուիրատուութիւններ, որոնք մնում են իբրև օգուտ ձեռագործի դասատուութեան համար։

Այս դպրոցը բացի կրթութիւնից տալիս է այդ թշուառներին և խաղաղ ու վշտերից հեռու կեանք, որը միակ միջոցն է նոցա բժշկութեան։ Ես հաւաստի եղայ այնտեղի բժիշկների խօսքերից, որ հիւանդութիւնից խլացածներին՝ ոչ մի դեղ ու բժշկութիւն չի օգնում, բացի կանոնաւոր և անդորը կեանքից։ Այդպիսի կրթութեան արդիւնքն է երևի այն որ այդ դժբախտները երբ աշխարհ են մտնում, սիրում են կեանքը։ Նոքա մինչև անգամ ունին Վիեննայում յատուկ ժողովուելու տեղ, մի սրճարան, որտեղ հաւաքւում և լաւ, ուրախ ժամանակ են անցկացնում։ Լայպցիգում էլ այս մօտ ժամանակներս խուլ ու համրները ներկայացում են տուել և հասարակութիւնը, բացի լրագիրների թղթակիցներից, բաղկացած է եղել միայն խուլ ու համրներից։

Այդ ամեն տեղեկութիւններն իմանալուց յետոյ, խընդրեցինք ուսուցչին ծանօթացնել մեզ, թէ արդեօք ինչպէս է պարապում իւր սաների հետ։ Ահա նա կանչեց մօտը երկու աղջիկների, որոնք 17-18 տարեկան հազիւ լինէին և ի ծնէ խուլ ու համր էին ու հարցրեց նոցա անունը, ազգանունը և նոքա անմիջապէս պատասխանեցին նորա հարցին, բայց թէ այնպիսի տարօրինակ, կարծես գետնատակից լսուող ձայնով ու հնչիւնով էին արտասանում այդ խօսքերը, որ մարդ սոսկում էր։ Ապա նա կանչեց 9 տարեկան մի աղջկայ, որը նոր էր մտել դպրոց։ Այդ խելօք, մեծ աչքերով և գեղեցիկ դէմքով աղջիկը, բացատրեց վարժապետը՝ խլացել է 2 տարեկան հասակում, երբ նոր սկսել է լեզուն բացուել ու թոթովել „մայրիկ, հայրիկ“ առաջին սիրելի խօսքերը։ Բայց յանկարծ այդ պստիկ երեխան բռնւում է ուղեղի բորբոքու-

մով, մի անտանելի հիւանդութեամբ, որից յետոյ մնացել է այդ հետևանքը, այսինքն խլութիւնը։ Աղջիկը դեռ վարժ չէր վարժապետի շրթունքների շարժումին, այնպէս որ շատ քան չէր հասկանում նորա ասածներից։ Պիտի նկատեմ այստեղ, որ այդ թշուառները օտարի հարցերին պատասխանել դժուարանում են, այն ինչ ուսուցչի շրթունքներին հետևելով, անմիջապէս հասկանում, ըմբռնում են նորա ասածը։ Այն վերևն յիշածս 9 տարեկան աղջիկը ոչ մի կերպ չէր կարողանում արտասանել «ռ» հնչիւնը. ահա վարժապետը իւր ձեռքը դրեց երեխայի գլխին, իսկ երեխան իրա ձեռքը վարժապետի գլխին և միայն դորանից յետոյ աղջիկն արտասանել սկսեց «ռ» հնչիւնը և առհասարակ «ռ» ով բառերը։ Իսկ «ղ» հնչիւնի համար, որը նոյնպէս չէր յաջողւում երեխային, ուսուցիչը իւր ձեռքը բռունցքի ձևով աղջկայ դունչի տակը դրեց, որ և անմիջապէս լսուեց աղջկայ բերանից «ղ» ձայնանիշը։

Ահա այդպէս դաստիարակներն ամեն մէկ տառի ու բառի համար ունին յատուկ միջոցներ և ձևեր, որով սովորեցնում են խուլ ու համրներին կարդալ և գրել։

Այն տղան, որն առաջին անգամ հանդիպեց մեզ դպրոցի շինութեան առաջ, նէրս մտաւ. վարժապետը նրան ներկայացրեց մեզ ասելով՝ սա մեր ամենալաւ աշակերտներից մէկն է. դպրոցի համար ինչքան որ դասական պիտոյք հարկաւոր լինի, նորան ենք ուղարկում առնելու և աւելացրեց գիտէք սա այնքան լաւ գիտէ թուաբանութիւն, որ ոչ ոք նորան խաբել կարող չէ հաշուի մէջ. յետոյ նա պատուիրեց տղային որ գնայ իւր նկարած պատկերները բերէ։ Տղան մեզ երկար սպասեցնել չտուեց. ուրախ զուարթ դէմքով նա բերեց ու սկսեց մեզ ցոյց տալ իւր աշխատութիւնները, որոնք բաւական լաւ ու յաջող էին և մեզ բացատրում էր իւր յատուկ արտասանութեամբ, որ դեռ շատ նկարներ ունի, բայց թէ ամառուան արձակուրդի պատճառով պահուած են պահարանում։

Այս ուսուցիչը ցոյց տուեց մեզ երկու 5-6 տարեկան սիրունիկ, կարմրաթշիկ տղաների, որոնք նայում էին մեզ և շարունակ ու անվերջ ժպտում ու ծիծաղում էին։ Ուսուցիչը հառաչելով ասաց՝ որ այդ երկուսն էլ թէ համր ու խուլ են և թէ ապուշ են։ Սիրտ էր պէտք, որ դիմանար դոցա թշուառութիւնը տեսնելիս. ինձ վերայ այդ երկու փոքրիկներն այնպիսի տպաւորութիւն թողին, որ մինչև հիմա, չընայելով 9-10 տարի է անցել այն ժամանակից, այժմ այս տողերը գրելիս կարծես պարզ տեսնումեմ նոցա հրեշտակային, անմեղ դէմքերը, որոնք հազար անգամ երջանիկ կըլինէին եթէ գոյութիւն չունենային աշխարհիս երեսին...

Արդէն երեկոյանում էր և աշակերտները պատրաստւում էին իրիկուան հացն ուտելու։ Մենք այլ ևս չուզեցինք խանգարած լինել նոցա և մեր մեծ շնորհակալութիւնները յայտնելով պատուական ուսուցչին ու ներողութիւն խնդրելով, որ նորա ժամանակը խլեցինք, դուրս եկանք դպրոցից։

Բայց ես դեռ երկար ժամանակ չէի կարող հանգստանալ ստացածս տպաւորութիւնից և սիրտս լցուած էր սիրով դէպի այդ անբախտ արարածները և ակնածութեամբ դէպի այդ մեծ հաստատութիւնը, որը մարդկային թշուառ էակներին ներշնչում է կեանք, հաւատ, յոյս սէր, տալով նոցա թէ լեզու, թէ ուսում և թէ արհեստ, որ մեծանալով ու մտնելով կեանքի փշոտ ճանապարհը, չընկճուին, կարօտութեան մէջ չմնան, այլ իրանց քրտնքի աշխատանքով իրանց օրական հացն ունենան։

Տիրուհի Նոսաանեանց

ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՓԱՅԵԱՆ

Սրբուհի Մայրապետ Գալֆայեան ծնուել է 1822 թուին Գարթալ գիւղում։ Դեռ փոքր հասակից նա մտադրուեց կոյս մընալ և 18 տարեկան հասակում հաստատապէս վճռեց իրագործել իւր փափագը։ Այդ տարիքից նա սկսեց կանոնաւորապէս զբաղուել ձեռագործ բանուածքներով և աշխատած փողերը հաւաքում էր մեծ խնայողութեամբ։

Երբ փոքր ի շատէ ապահովեց իւր ապրուստի միջոցները, աւելի սկսեց ոյժ տալ իւր գաղափարի իրագործելուն. մի օր նա փողոցում պատահեց մի կիսամերկ որբ հայ աղջկայ, որը մնացել էր անտուն անտիրական. Սրբուհու սիրտը խորապէս զգաց թէ ինչքան դառն, որքան վշտալի բան է հացի կարօտ և մօր գուրգուրանքներից բոլորովին զրկուած, անպատսպար մի որբի կեանքի թունաւորուիլը դեռ ծաղիկ հասակի մէջ. չափազանց զգածուեց, տեսաւ որբի աչքերում արտասուքի կաթիլներ, իւր աչքերն էլ լցուեցան. «սրբէ արտասուքդ» հազիւ կարողացաւ արտասանել հեղձամղձուկ ձայնով և թեւից բռնելով տարաւ իւր սենեակը։

Այդ օրից աւելի զօրացաւ նրա սէրը դէպի որբերի պաշտպանութիւնը և մտածում էր ոչ թէ մի, այլ տասնեակ որբերի պատսպարելու հնար գտնել։ 60-ական թուականի խօլերայի ժամանակ շատերը զրկուեցան իրանց մայրերից, հայրերից և խնամատարներից։ Տակաւին կարծես հնչում է Միրնաս—Զերազի դամբանականը, որ արտասանեց Գալֆայեանի

ՄԱՅՐԱՊԵՏ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՓԱՅԵԱՆ

դագաղի վերայ «...Կ'յիշէք անշուշտ ինձ պէս, թէ ասկէ քառորդ դար առաջ խումբ մը նիհար հայուհիներ կ'թափառէին Կ. Պոլսի մէջ ընտանեգուրկ և անպաշտպան, հիւանդ և գրեթէ մերկ, որ նոքա անցորդին կ'կառկառէին իրենց բազուկները ու հաց կ'մուրային։ Խաս-գիւղի ամիրայից այս մայրաքաղաքին մէջ, ամիրայի զաւակներ ու թոռներ նոցա մօտէն կանցնէին ամեն օր և կ'տեսնէին, որ նոքա մոլութեան ու կորստեան վիհը կ'դիմէին և սակայն իրանց ճամբան կ'շարունակէին անտարբեր, կին մը միայն գտնուեցաւ, որ գթաց այդ և այդպիսի որբուհիներուն վրայ և որոշեց փրկել նոցա...»։ Այս միջոցին այն է 1865-ին Գալֆայեան արդէն հաւաքել էր 1700 ռուբլի և իրան խորհրդակից ունենալով Ներսէս վրդ. Վարժապետեանին և Կարապետ վրդ. Շահնազարեանին հրդ. Ճեռնարկեց Գալֆայեան որբանոցի հիմնարկութեանը 1866 թ. Յունուարի 1-ից սկսած։ Այդ առաջին տարուայ մէջ իւր դրամագլխով նա խնամեց ու դաստիարակեց 20 որբ ու անտէր աղջիկներ, իսկ հետևեալ տարին Վարժապետեանի խորհրդով Պօղոս պատրիարքը մի օրհնութեան կոնդակով հրաւէր կարդաց Կ. Պոլսի և թուրքիայի հայերին, որ իրանց օգնութիւնը չխնայեն որբանոցին։ Այնուհետև սկսուեց Սրբուհի մայրանը Գալֆայեանի թափառական և տաժանելի կեանքը։ Յապետ Գալֆայեանի թափառական և տաժանելի կեանքը։ Յաճախ կարելի էր տեսնել նրան պայուսակը ձեռքին թափառելիս Պոլսի փողոցներում. կամ խմբագրատուն էր մտնում գրաւոր շնորհակալութիւն յայտնելու նուիրատու բարեգործներին և կամ բաղխում էր այս կամ այն հարուստի դուռը ողորմութիւն խնդրելու իւր որբ զաւակների համար։ Այսպիսով այդ աննկուն նահատակը 24 տարուայ ընթացքում ժողովեց 220,000 ռուբլի և զանազան անշարժ կալուածքների գումարներով ապահովեց որբանոցի ապագան։

Նորա դէմքի վրայ գծագրուած էր առնական տոկունու-

թիւն. յաւիտենական գործունէութիւնն ու մտատանջութիւնը նրա դէմքին տուել էին «թափառական հրէայի» դրոշմ... քայլում էր յաւիտեան պայուսակը ձեռքին, անթիւ անգամներ արտաքսուելով մեծատներից և գրասենեակներից իբրև մի անարգուած մուրացկան։

Նրա հրաւէրին արձագանք տուեց և թուրք կառավարութիւնը, յատկացնելով որբանոցին օրական 45 ֆ. հացի և 23 ֆ. մսի գին, իսկ Սուլթան Համիտ միանուագ իւր գանձարանից նուիրեց 3000 ռուբլի։ Այսպէս թուրք կառավարութեան և հայ հասարակութեան մշտական օժանդակութեամբ Սրբուհի Մայրապետը կարողացաւ պահել իւր մտադրած նպատակը անգնահատելի մայր դառնալով 160 որբուհիների համար։ Նա ոչ միայն հոգ էր տանում իւր որբերի ապրուստի և դաստիարակութեան վերայ, այլ և նոցա մեծանալուց յետոյ մօր չափ աշխատում էր երջանկացնել իւր զաւակներին, ամուսնացնելով նոցա։ Այս կերպ նա պահել է 23 որբուհի, հոգալով նոցա հարսական օժիտը և հարսանիքի ժամանակ կատարելով այն դերը, որ ուրախութեամբ կատարում է մի մայր իւր աղջկայ հարսանիքի միջոցին։

Կարողացել է 20 որբուհի որդեգրել տալ հարուստ և պատուաւոր ընտանիքների, մօտ 75 որբուհիների ևս դպրոցական շրջանը աւարտելուց յետոյ յանձնել է իրանց ազգականներին, իսկ ովքեր ազգական չեն ունեցել աշխատել է վարժուհու կամ դաստիարակչուհու պաշտօններ գտնել, որոնք Պոլսի և Հայաստանի մէջ ծառայելու էին իգական սեռի դաստիարակութեան գործին։

1889 թ. յուլիսի 7-ին գիշերը վախճանուեց այս մեծ կինը, որի նմանը տակաւին չէ ծնել հայ ազգը ներկայ դարի մէջ։

ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ՏԻՍԱՐ

ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ՏԻՍԱԲ

Հայ իգական սեռի առաջի գրական ծաղիկը եղաւ տիկին Սրբուհի Տիւսաբ, որ ծնուեց Կ. Պոլսում 1841 թուականին։ Նորա շրջանը Կ. Պոլսի, այսպէս անուանուած, բարձր շրջանն էր, մի միջնավայր ուր ամեն ջանք գործ էր դրուում եւրոպականանալու համար և ուր մայրենի լեզուն արհամարուած և մոռացուած էր։ Սրբուհին մեծանում էր մի այդպիսի շրջանում։ Նա սովորեց ֆրանսերէն, իտալերէն, յունարէն լեզուները, բայց հայերէնի վերաբերմամբ ոչ միայն անտարբեր էր, այլ ատող, հեգնող։ Երբ նրա մօտ խօսում էին հայերէնի մասին, նա ըսնում էր ծաղրել այդ լեզուի կոպտութիւնը։ Բայց Սրբուհու մայրը, տիկին Նազլու Վահանեան նուիրուեց իւր սեռի կրթութեան գաղափարին։ Օրթագիւղի Հռիփսիմեան վարժարանի հիմնադիրը դարձաւ 1859 թ. և երկար ժամանակ վարում էր այդ դպրոցի խնամակալուհու պաշտօնը։

Իբրև մի պարտաճանաչ հայուհի և բարեկիրթ մայր, տիկին Նազլու առանձին հոգ էր տանում Սրբուհու կրթութեան մասին, ղեկավարում էր նրան երիտասարդական տարիներում։ Սրբուհին էլ մօտ էր Հռիփսիմեան վարժարանի գործերին, բայց օտարացող շրջանի ազդեցութիւնը կ՚չեզոքացներ մօր բոլոր ջանքերը և հայերէն լեզուն օտար կ՚մնար Սրբուհու համար, եթէ ճակատագիրը չ՚ծանօթացներ նրան Գրիգոր Պէշիկթաշլեանի հետ։

Պէշիկթաշլեանը մի հասարակական գործիչ էր, այդ բառի ամենագեղեցիկ մտքով։ Նրա քնարը երգում էր հայրենիքի սէր, կոյսի սէր, տխուր զգացմունքներ, եղբայրութիւն և ինքն առաջինն էր, որ իւր անձնական օրինակով ցոյց էր տալիս թէ ինչ են ասում իւր երգերը. նա ուսուցիչ էր և հայերէնի դատն էր պաշտպանում Կ. Պոլսի բարձր շրջաններում, օտարամոլութեան այդ որճերում։ Դա մի վերին աստիճանիա ազնիւ մարդ էր, սիրուն երգերի մէջ ձուլուած մի բանաստեղծ, որ ամեն տեղ հրաշալի տպաւորութիւն էր թողնում իբրև մարդ, իբրև հասարակութեան անդամ։

Օրիորդ Սրբուհին ծանօթանում է բանաստեղծի հետ, գրաււում է նրա խօսքով, նրա երգերով և հասկանում է իւր մայրենի լեզուի նշանակութիւնը և աշակերտելով Պէշիկթաշլեանին սիրով ուսումնասիրում է հայերէնը և այնքան հիմնաւոր կերպով, որ մեծ հմտութիւն է ցոյց տալիս նոյն իսկ գրաբարի մէջ։ Բանաստեղծի հոգին խոր արձագանք է գտնում օրիորդի սրտի մէջ, հաղորդում է իւր մելամաղձոտ դրութիւնը և քնքոյշ թախիծը։ Մայրենի լեզուն դառնում է Սրբուհու սրտի թարգմանը։

Սրբուհու առաջին թռթռվանքը եղաւ իւր սիրելի ուսուցչի, Պէշիկթաշլեանի մահուան առթիւ գրուած ոտանաւորը։ Մինչև գրական ասպարէզ դուրս գալը Սրբուհին նուիրուած էր կրթական գործին. նա իւր մօր ջանքերով հիմնած դպրոցում ատենադպրի պաշտօն էր վարում. յետոյ երբ նոյն վարժարանն աւարտած մի քանի կանայք հիմնեցին „Դպրոցասէր Հայուհեաց ընկերութիւնը“ նա դարձաւ այդ ընկերութեան եռանդուն ղեկավարներից մէկը։

1871 թ. օրիորդ Սրբուհի ամուսնանում է Փրանսիացի երաժշտագէտ Տիւսաբի հետ։ առաջին գրական աշխատութիւնը որ լոյս հանեց Սրբուհի Տիւսաբ մի փոքրիկ բրոշիւր էր

„Աշխարհաբար հայ լեզուն“ վերնագրով, որտեղ երևում է նրա առաջադիմասէր հոգին։ Բրոշիւրը հրատարակուած է օգուտ „Դպրոցասէր Հայուհեաց“ ընկերութեան և նուիրուած է նոյն ընկերութեան օրիորդներին։ «Հայ կուսանք, չքնաղ ծաղկունք հայ գարնան. դուք յոյսն էք, դուք ապագան էք, ձեզ աշխատութիւնը, ձեզ պատիւը»—այսպէս էր ասում նա իւր ձօնի մէջ։ Բայց հայ կինը դարերից ի վեր ճնշուած նախապաշարմունքների տակ, գերի հասարակական և ընտանեկան հասկացողութիւնների, ինչ կարող էր պատասխանել այդ հրաւէրին և տիկին Տիւսաբ դուրս է գալիս բողոքելու իւր երեք վէպերով. բողոքելու անարդարութեան դէմ, բողոքելու յանուն կանանց մարդկային իրաւունքների։ Նրա առաջին վէպը, «Մայտա» անունով լոյս տեսաւ 1883 թ. և նրա համար անուն ստեղծեց հայ գրականութեան մէջ։ Պէտք է աւելացնել և այս, որ «Մայտայի» «Սիրանոյշի» և «Արաքսիի» հեղինակը կին է, հայ կին և երևոյթը աւելի մեծ նշանակութիւն կստանայ։ Հայ կինը գրում է այնպիսի վէպեր, որոնք կարդացւում են ամեն տեղ հետաքրքրութեամբ։ Մեր գրականութեան պատմութիւնը մինչև տիկին Տիւսաբ այսպիսի երևոյթ չէ ճանաչում. Պէշիկթաշլեանի աշակերտուհին առաջինն էր իւր սեռի մէջ, որ այնքան պատուաւոր դիրք գրաւեց։ Կանանց իրաւունքների ազատութեան շարժման արձագանքներն են, որ հնչում են տիկին Տիւսաբի վէպերի մէջ։ Նա բողոքի ձայն է բարձրացնում ընկերական անիրաւութիւնների դէմ, բաց է անում կնոջ սիրտը, ցոյց է տալիս նրա տանջանքները, ցոյց է տալիս այն պայմանները որոնցից այդպիսի տանջանքներ են ծնւում և պահանջում է որ հասկանան կնոջը, որ թոյլ տան նրան ազատ լինել իւր զգացմունքների մէջ, որ նրան չ՝դատեն հին փտած նախապաշարմունքների տեսակէտից։ Կինը ստրուկ է, գոչում է տիկին

Սրբուհին, „Նա շղթաներուն շաչիւնը լսելով ապրեցաւ մինչև ցարդ առանց երբէք զանոնք խորտակելու փորձն ընելու, նա կծնանի ստրուկ, կմեռնի ստրուկ։

Չկայ յաղթութիւն առանց կռուի։

Եւ տիկին Տիւսաբ մի վայրկեան անգամ չի վարանում այս պարզ ճշմարտութիւնը հայ կանանց յանձնարարելու։ Նա դրուատում է մաքառումը՝ իրաւունքներ ձեռք բերելու համար, հրաւիրում է չընկճուել հասարակութեան սահմանած կարգերի տակ, նահատակուել, բայց չհպատակուել անարդարութեան։ Անկախ, ազնիւ աշխատանքը կ'ազատէ կնոջ ստրկական հպատակութիւնից, կտայ նրան պատուաւոր դիրք հասարակութեան մէջ։

Նրա վերջին գրուածքն է մի մենախօսութիւն, որ արտասանեց անմահ Ադամեանի յոբելեանի առթիւ տրուած նելկայացման ժամանակ. յոբելեանը կազմակերպուած էր տիկին Տիւսաբի նախագահութեան տակ։ Արտասանած մենախօսութիւնն էր „Որդեկորոյս ծնողք մը“, որտեղ կարծես կանխագգաց մարգարէութեամբ ապագայ սգաւոր մայրը իր դստեր Դորինի անփոխարինելի կորուստը և ծնողական տառապանքը էր պատկերացնում։ 1861 թ. նա կորցրեց իւր ծաղկահաս դուստր Դորինը, որ զոհ գնաց թոքախտին։ Ահա այդ մեծ վիշտը նրան գրականութիւնից ձեռնթափ արեց, նա այրեց իւր բոլոր գրական աշխատութիւնները, կտրուեց բոլորովին աշխարհից, փակուեց իւր տան մէջ և բոլորովին դադարեց գրելուց։ Նա մեռաւ 1901 թ. յունուարի 16-ին։ Մահուանից դեռ երկու տարի առաջ նա ընդունեց կաթոլիկութիւն, որպէսզի թաղուի իւր սիրելի դստեր մօտ։ Տիկին Սրբուհի Տիւսաբի մահը հայ գրականութեան և մանաւանդ կանանց դատի համար մի անփոխարինելի կորուստ է։

ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ՏՕՆԷԼԵԱՆ (ՍԻՊԻԼ)

ՏԻԿԻՆ ԶԱՊԵԼ ՏՕՆԷԼԵԱՆ (ՍԻՊԻԼ)

Տիկին Զապել Տօնէլեան, որի գրական ծածկանունն է Սիպիլ, ծնուել է 1862 թուին Սկիւտարում և պատկանում է յայտնի Խանճեան գերդաստանին։

Իւր սկզբնական կրթութիւնը ստացել է Սկիւտարի հրաշակաւոր ճեմարանում, որտեղ աշակերտելով յայտնի բանաստեղծ Սիմէօն Ֆելէկեանին ժառանգեց նորանից այն վսեմ աւիւնը որը, մինչև հիմա բարեբախտաբար պահել է։ Նա շատ կանուխ յայտնի դարձաւ հասարակութեան իւր գողտրիկ քերտուածներով։ Նրա անդրանիկ հրատարակութիւնն է «Պանդուխտն անմխիթար» ոտանաւորը, որ տպեց «Հայրենիքի» մէջ 1877 թուին։ Սրիորդ Զապել Խանճեան հազիւ հազ դպրոցի սեմից ոտքը դուրս դնելով սկսեց գործունէութեան ասպարէզ մտնել և հակառակ շատ դժուարութիւնների ու խոչընդոտների վերջապէս կարողացաւ հիմնել „Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնը» որի նպատակն էր ուսում և կրթութիւն տարածել հայաբնակ գաւառներում կանանց մէջ։ „Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնը“ պոլսում հայ կանանց առաջին կրթական ընկերութիւնն է և ճշմարիտ այս ընկերութիւնը հայ իգական սեռի ոգին շարժեց, արթնացնելով նորանց սրտի մէջ իրանց դէպի ազգն ունեցած պարտականութեան նուիրական պարտաճանաչութիւնը։

Ընկերութեան ընդհանուր ժողովի անդամների թիւը 75-էր, իսկ բաժանորդներին—500—600։

Սրանց ժրաջան և մշտական գործունէութեան արդիւնքը էին զանազան գաւառներում բացուած ձրիավարժ դպրոցները, որոնց պաշտպանութեան համար կազմակերպում էին շքեղ պարահանդէսներ և այլն։

Օրիորդ Զապէլ խանճեանի առաջին գրական կռիւը տեղի ունեցաւ 1880 թուին Բիւզանդ Քէջեանի հետ, որի առիթը մի լեզուաբանական խնդիր էր։

1881 թ. օր. Զապէլ ամուսնացաւ փաստաբան Կարապետ Էֆենդի Տօնէլեանի հետ, որի հետ միասին 8 տարի մէջ ընդ մէջ շրջեց Բիլեճիկ, Բրուսա, որտեղ Տիկին Զուլնոի հետ ազգանուէր ընկերութեան մասնաճիւղը հիմնեց։

1889 թ. Պոլիս վերադառնալուն պէս սկսեց անմիջապէս Ճերիտէ Շարզիէի մէջ հրատարակել իւր գրած „Աղջկանմը սիրտը“ վերնագրով վէպը։

Տիկին Տօնէլեանի (Սիպիլ) գրական արտադրութեան ոսկեդարը սկսւում է 1891 թուին. նոյն ժամանակ «Մասիսի» և «Հայրենիքի» մէջ, որոնք առանձին ուշադրութեան արժանի են «Պօան» և ծանեակները“ հրատարակուածները նրան գրական անուն ժառանգել տուին։

Նա մասնակցեց Մասիսի խմբագրութեանը, չ՝զլացաւ աշխատակցել նաև Մասիսի յաջորդ Արեւելք օրաթերթին։

Սիպիլի այս շրջանում հրատարակուած աշխատութիւններից նշանաւորներն են «Կեղծ մարգարիտները», «Գուլթ», «Ձանձրոյթը», «Ըլլալ և երևալ» որոնց մէջ կանացի փափուկ և նրբամիտ հայեացքներով համեմած ոգի, ուղղութիւն և բանաստեղծական թռիչք է տեսնւում։

Տ. Տօնէլեան, որ 1880 թուին մոլի գրաբարեան էր, 1891 թուից սկսած եռանդուն աշխարհաբարեան դարձաւ։

1898 թ. հրատարակեց իւր հայերէն աշխարհաբար քերականութեան առաջին տարին և 1899 թ. երկրորդ տարին։

Սիպիլ այժմ աշխատակցում է «Մասիս» շաբաթաթերթին և դասախօսում է հայոց լեզու և գրականութիւն օրիորդաց դպրոցներում։ Տիկին Տիւսաբի գրական ասպարէզից հեռանալուց յետոյ, Սիպիլ այն միակ հայուհին է, որ իւր առանձին տեղն ունի Պոլսի լրագրութեան և արևմտեան հայ գրականութեան մէջ։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

Գրական գործունեութեան 40—ամեակի առիթով.

Ո՛վ մեզանից չէ լսել Գիւլնազ տատի հէքիաթները, որը ձմեռը քուրսու շուրջը հաւաքուած իւր թոռներին արտուտիկի գեղեցկութիւններն էր բաշխում՝ մէկին նրա թևերի փափկութիւնը տալով, միւսին աղջիկների գեղեցկութիւնը, երրորդին փետուրի խուճուճը և այլն։ Երիտասարդներից ո՞վ իր մանուկ ժամանակ չէ արտասանել, կամ մեծ բաւականութեամբ երգել «Հովուի անկողինը», «Ծաւրածի ճաշը», „Կորած հորթը“ «Զաղացպանի ննջարանը» և այլն և այլն, իսկ աւելի հասակաւորները այս նոյն բանը լսած կլինին իրենց փոքրիկ որդիների կամ թոռնիկների բերանից, որոնք դպրոցից վերադարձած քթի տակ մռմռում են սրանցից մինը կամ միւսը։ Ո՞վ չէ կարդացել „Արեգնազան կամ կախարդական աշխարհ“ հրաշալի հէքիաթը. չէ ոգևորուել Արեգի յաջողութիւններով և ուրախացել չար պառաւի պարտութեան վրայ։ Վերջապէս ո՞վ չէ կարդացել և հեշտութեամբ անգիր արել „Ոսկի ձկնիկի“ հէքիաթը, խըզճացել ծերուկ ձկնորսին և զայրացել պառաւի ամբարտաւանութիւնից։ Այս բոլորը մենք կամ ինքներս մանուկ ժամանակ դպրոցում կարդացել սովորել ենք, կամ մեր տան երեխաների բերանից ենք լսել։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

Բայց մենք գիտենք արդեօք, թէ ով է այս բոլոր գեղեցիկ կտորները մեզ համար գրել, այնպէս լաւ, որ մի անգամ կարդալը բաւական է, որ անգիր սովորենք, ոմանք գուցէ գիտեն, ոմանք ոչ։ Սրանց հեղինակը Ղազարոս Աղայեանցն է, որի գրական գործունէութեան քառասնամեայ յօբելեանը տօնեցին անցեալ տարուայ մայիսին։ Ուրեմն այս մարդը քառասուն տարի շարունակ գրել է, սկսած 1862 թուից մինչև հիմա, և որքան գեղեցիկ բաներ է տուել նա մանուկների և պատանիների ընթերցանութեան համար։

Ահա այս մարդու գրական գործունէութեան հետ ուզում եմ ծանօթացնել յոդուածիս ընթերցողներին։

---

2. Աղայեանցը ծնուել է Տփխիսից 60 վերստ հեռու գտնուող Խաչէն գիւղում 1840 թուականին։ Այս գիւղի բնակիչները Ղարաբաղի Խաչէն գաւառից են գաղթել ու իրանց հայրենիքի անունը տուել իրանց գիւղին։ Աղայեանցի հայրը, Ստեփանը մի շատ նախապաշարուած և խիստ մարդ էր. նա իւր զաւակներին համբուրելու սովորութիւն չունէր, որովհետև Յուդան համբուրելով էր Քրիստոսին մատնել։ Իսկ մայրը, Հռիփսիմէն ընդ հակառակը մի շատ համեստ և փափուկ սրտով կին էր. նա շատ էր սիրում ու փայփայում իւր զաւակներին։ Աղայեանցենց տունը գիւղում յայտնի էր իբրև հիւրասէր յարկ, ուր ընդունւում և ապաստան էին գտնում ամեն տեսակ օտարականներ, մանաւանդ թափառական աշուղներ, որոնք նրանց տանը երբեմն շաբաթներով մնում էին և իրանց աշակերտներին սովորեցնում էին խաղեր յօրինել։

Մանուկ Աղայեանցը ներկայ էր լինում այդ դասերին և շուտ գլխի ընկաւ թէ ինչպէս պէտք է խաղ յօրինել։ Բացի այդ աշուղները նրանց տանը շատ անգամ էին իրար հետ

մրցութեան մտնում և առհասարակ հէքիաթներ պատմում. այս հանգամանքը Աղայեանցի համար այն օգուտը ունեցաւ, որ նա շատ փոքր հասակից սկսեց ծանօթանալ աշուղական երգերի և հէքիաթների հետ։

Նրա մօր ցեղի մէջ քահանայութիւնը որդից որդի անցնում էր. ուստի Հռիփսիմէն ուզեց իր որդուն էլ քահանայ դարձնել, դրա համար տուեց իրանց գիւղի կոյս Մանիշակի մօտ գիր կարդալու։ Մանիշակը նրան ամենից առաջ „յանուն Հօր“ և „Խաչ օգնեա ինձ“ ասել տուեց, ապա սկսեց ժամագիրք կարդացնել։ Բանը նրանումն է, որ Աղայեանցը իր դասագրքի շատ կտորները եկեղեցում լսելով արդէն անգիր էր արել, ուստի առանց տառերը ճանաչելու վարժ ասում էր գրուածը։ Մանիշակը երբ այս նկատեց, սկսեց նրան մի տարբերինակ ձևով կարդացնել. նրան նեղը լծելու համար փոխանակ „Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն“ կարդացնելու, ստիպում էր կարդալ հակառակ «օգնութիւն ինձ եկեսցէ ուստի ի լերինս իմ զաչս Համբարձի»։ Այս դժուարութեան առաջ ընկճուելով Աղայեանը փախաւ տուն և այլևս չուզեց սովորել. բայց երբ մայրը ձեռքը քցեց, որ լուծից սամի հանի և նրան մի լաւ խրատի, նա համաձայնեց գնալ և սովորել։ Ժամագրքից յետոյ Մանիշակն էլ բան չուներ սովորեցնելու, ուստի աշակերտին աւարտած համարեց և տուն ուղարկեց։

Երբ Աղայեանցը տաս տարեկան էր նրան իր մօտ վերցրեց սովորեցնելու համար հարևան Շամշուլդա գիւղի քահանան «գիտնական» տէր Պետրոսը։ Տէր-Պետրոսի գիտութիւնը այն տեսակիցն էր, որը մենք շատ անգամ կարդացել ենք խալիֆա—վարժապետների ունեցածի մասին։ Նա իր աշակերտին կարդացնում էր Աստուածաշունչ, Շարական, Քրիստոնէական վարդապետութիւն, քերականութիւն և այլն,

իսկ ազատ ժամանակն էլ իբրև ընթերցանութեան գիրք նրան տալիս էր Հարանց վարք, Այսմաւուրք, Պղնձէ քաղաքի պատմութիւնը, Եօթն իմաստասիրաց գիրքը, Տաթևացու հատորները և այլն։ Նա իր աշակերտին պատմեց և սովորեցրեց իր երբևիցէ լսած կամ սովորած ամեն մի բան՝ առակ, հէքիաթ, առասպել, առած և այլն. նա իւր աշակերտին սովորեցնում էր որ Քրիստոսն ու Գրիգոր Լուսաւորիչը ձեռք ձեռքի տուած միասին դժոխքից դուրս գալիս տեսան Ադամին Զիթենեաց սարի վրայ նստած և ուրիշ այսպիսի ժամանակով իրար չը համապատասխանող բաներ. նա սովորեցնում էր, որ խարբուզակին գրաբար սեխ կասեն, իսկ ձմերուկին—մեղրապոպ։ Երեք տարի նրա մօտ սովորեց Աղայեանցը, և դուրս բերեց մի գիտութիւն, որով հաւատում էր ամեն մի բանի, ամեն մի հնարովի բան իրականի տեղ էր ընդունում։

Տէր-Պետրոսի մօտ սովորելիս Աղայեանցը, թէև դեռ շատ փոքր, բայց սիրահարուեց իր խաղընկեր մի աղջկայ, Մայիկօ անունով, որի վերաբերմամբ մինչև այն աստիճան հասաւ, որ գիշերները գիւղից փախչում գնում էր վտանգաւոր ճանապարհներով մինչև սարը, ուր ամառը կենում էր Մայիկօն, որ նրա հետ տեսնուի։ Այս սիրոյ պատճառով մանուկ Ղազարոսը գիւղացիների աչքում ընկաւ, այն ինչ մինչև այդ ժամանակ իր սուր յիշողութեան և ընդունակութիւնների շնորհիւ ճանաչուած էր իբրև մի արտակարգ շնորհալի երեխայ։ Տէրտէրը նրա մէջ այս խենթութիւնը ոչնչացնելու համար, վճռեց ուղարկել իրանց տուն։ Գիւղ վերադառնալով Աղայեանցը իր զգացմունքի շնորհիւ դարձաւ մի շատ զգայուն երեխայ, որի պատճառով գիշերները յանկարծ վեր էր թռչում տեղից և սկսում լալ։ Հայրը իմանալով նրա լացի պատճառը վճռեց որդուն խելքի բերել և ուզեց մի լաւ

ծեծել, բայց նրան փախցրին գիւղի միւս ծայրը իր մի ազգականի մօտ. մինչև որ այնտեղից էլ տարան Տփխիս, որտեղ 1853 թ. նա ընդունուեց Ներսիսեան Դպրոցը։

Ներսիսեան Դպրոցը թէև այդ ժամանակ իր ծրագրով այնքան էլ մեծ բան չէր, բայց շատ աւելի լաւ էր իհարկէ, քան Աղայեանցի Տէրտէրը. մանաւանդ որ տեսուչն էլ Պետրոս Շանշեանցն էր, մի կրթուած և լուսամիտ մարդ, որ աշխատում էր որքան կարելի է լուսաւորել աշակերտների միտքը և նրանց ուղեղը ազատ պահել զանազան կաշկանդող ուղղութիւններից։ Աղայեանցը այնտեղ ծանօթացաւ առարկաների հետ։ Բայց նա երկար չմնաց դպրոցում որովհետև անլայտ մարդիկ շարունակ ինտրիգներ էին լարում տեսչի դէմ. մի կողմից այս, միւս կողմից էլ նա չէր համաձայնւում Ներսէս V կաթողիկոսի հետ դպրոցի ծրագրի վերաբերմամբ, այդ պատճառով տեսուչը հեռացաւ դպրոցից։ Բայց նա այնքան համակրանք էր ձեռք բերել աշակերտների շրջանում, որ աշակերտներից շատերն էլ թողին ուսումնարանը, դուրս եկան և սկսեցին պատրաստուել ռուսաց գիմնազիա մտնելու համար։ Դրանց թւումն էր և Աղայեանցը։ Գիմնազիա մտնելու համար նրանց պատրաստում էին գիմնազիայի բարձր դասարանի աշակերտները, որոնք աւելի ազատ էին վարւում իրենց աշակերտների հետ, քան պաշտօնական ուսուցիչները։ Չէին քաշւում ամեն մի բանի իր իսկական անունը տալուց. շարունակ ելնում էին դաշտ իրանց աշակերտների հետ զբօսնելու, խօսում էին բնութեան զանազան երևոյթների մասին, նրանց իսկական նշանակութիւնը հասկացնում իրանց փոքրահասակ աշակերտներին. խօսում էին զանազան նախապաշարմունքների մասին և բացատրութիւններ տալիս։ Ահա այս զբօսանքների և խօսակցութիւնների ազդեցութեան տակ Աղայեանցը շատ փոխուեց. նա այլևս առաջուայ միամիտ երեխան չէր, որ հաւատար ամեն մի առասպելի. այժմ ինքն էր սկսել ուրիշների մէջ այդ նախապաշարմունքները խորտակել և իսկական էութիւնը նրանց յայտնել։ Երբ նրան չ'յաջողուեց գիմնազիա մտնել նիւթական անկարողութեան պատճառով, նա վերադարձաւ իրանց գիւղը։

Գիւղում էլ նա հանդարտ չմնաց, սկսեց շարունակ խօսել նախապաշարմունքների դէմ, որով շատ վիրաւորում էր իր հօր զգացմունքները. այս նախապաշարուած մարդը հաւատում էր, որ թուրք Ալին տասներկու տարի գայլութիւն է արել, ապրել է գայլերի մէջ. որդին աշխատում էր ցոյց տալ այս տեսակ կարծիքների ստութիւնը։ Շարունակ զբաղուած լինելով իր ուսումը շարունակելու հոգսով, Աղայեանցը գիւղական աշխատանքներ կատարում էր շատ թերի, որով շատ վնաս էր տալիս իրանց տանը, երբեմն եզը կորցնելով, երբեմն մի գործիք փչացնելով և այլն։ Իր հօրից էլ շարունակ պահանջում էր որ իրան հնարաւորութիւն տայ ուսումը շարունակելու։ Հօր համար անտանելի դարձան որդու պահանջները ու համոզմունքները և նա որդուն տանից դուրս արաւ։

Այնուհետև Աղայեանցը եօթ տարի թափառեց Լոռուայ և Շիրակի գիւղերում, մի տեղ ուսուցչութիւն էր անում, մի ուրիշ տեղ՝ տիրացութիւն, միանում էր որսորդների հետ, տաւարած էր դառնում և այլն։ Մինչև որ վերջապէս ընկաւ Տփխիսում Համբարձում Էնֆիաջեանցի ձուլարան և տպարանը, նախ իբրև ձուլարանի աշակերտ, ապա իբրև գրաշար։ Այստեղ նրա գործը մի քիչ թեթև էր, մանաւանդ աւելի թեթևացաւ երբ Հ. Էնֆիաճեանը մի օր տեսաւ նրա գրած մի ոտանաւորը, կարդաց, հաւանեց և նրա աշխատանքը թեթևացնելով ռոճիկը աւելացրեց, որով Աղայեանցը հնարաւորութիւն ստացաւ ինքնակրթութեամբ պարապելու։

1862 թ. մայիսին, երբ մի անգամ այս տպարանում տպւող „Մեղու“ լրագիրը բաց տեղ ունէր, և խմբագիրը մո-

լորուել էր ինչով իսկոյն բացը լցնել, Աղայեանցը մի ոտանաւոր գրեց, ուղարկեց խմբագրին, հաւանութիւն ստացաւ և շարեց։ Այդ ոտանաւորը պատկերացնում է գիւղացու թշուառ վիճակը, երբ նա իր ունեցածի տէրը լինել չէ կարողանում, նրան ամեն կողմից կեղեքում են, նա տգետէ, ուսում, գիտութիւն ասած բանը նրան անծանօթ է. և առաջարկում է մտնել ժողովրդի մէջ և, շատ բան չէ, հասկանալ միայն, թէ ինչն է նրա թշուառութեան պատճառը։ ապա ձեռք ձեռքի տալ և օգնել նրան։ Այս ոտանաւորը տպուելուց յետոյ Աղայեանցը ցոյց տուեց իր ծանօթ՝ «Կռունկ» ամսագրի խմբագիր, Մարկոս Աղաբէգեանին, որը հաւանեց և խորհուրդ տուեց անպատճառ գնալ Ռուսաստան ուսումը շարունակելու։ Շրջապատող իրականութիւնը և այն ժամանակուայ մտաւոր շարժումը, երբ «Հիւսիսափայլը» սկսելէր քննադատել շատ բան և շատ հակառակորդներ ձեռք բերել, Աղայեանցին համոզեցին, որ լաւ գործիչ դառնալու համար, հարկաւոր է դեռ գնալ ուսումը շարունակել։ Ուստի ուշք չդարձնելով զանազան մարդկանց ջանքերին, որ նրան աշխատում էին այդ մտքից յետ կացնել, նա ծախեց ունեցածը, ճանապարհի ծախս գոյացրեց և իր ընկեր Միքայէլի հետ նոյն 1862 թուականին ճանապարհուեց դէպի հիւսիս, շատ նեղութիւններ ճանապարհին կրելով։

Իր արհեստի շնորհիւ նա կարողացաւ Մոսկուայում և Պետերբուրգում մի քանի տարի ապրել։ Այստեղ կային ուսանողներ, որոնք զանազան բարերարներից փող էին ոտանում և ձրի պարապում էին զանազան գործարանների բանուորների հետ։ Աղայեանցը Մոսկուայում մի այդպիսի խումբ բանուորների հետ սկսեց դաս առնել ուսանողներից։ Ապա Պետերբուրգում եղած ժամանակ նա շատ

օգտուեց այդ ժամանակ շուտ շուտ հրատարակուող զարգացուցիչ գրքերից և ձրի գրադարան ընթերցարաններից, որով նա կարողացաւ իր կրթութեան շատ թերի կողմերը լցնել։ Նա համալսարան չմտաւ, այլ աշխատեց մտաւոր պաշար ձեռք բերել ազատ ընթերցանութեամբ և ինքնազարգացմամբ։

Պետերբուրգում Աղայեանցը ծանօթացաւ հայ ուսանողների հետ և նրանց ժողովի անդամ ընտրուեց։ Ուսանողները գրում էին շարադրութիւններ և ժողովում կարդում ընկերների առաջ, որոնք գրուածքը քննադատում էին գլխաւորաբար լեզուի կողմից։ Աղայեանցին առաջարկեցին մի բան գրել և ժողովում կարդալ. նա յանձն առաւ և գրեց իւր „Արութիւն և Մանուէլի„ առաջին գիրքը։ Երբ ժողովում սա կարդացուեց, բոլորն էլ հաւանեցին և ծափահարեցին։

«Արութիւն և Մանուէլը» գրելիս Աղայեանցը իր կեանքն է նկարագրել. Արութիւնը ինքն է. այդտեղ նկարագրուած են նրա մանկութեան օրերը, ուսումնառութիւնը, թափառական կեանքը և Ներսիսեան Դպրոցում անցկացրած կեանքը և այլն։ Իբրև վիպական գրուածք „Արութիւն և Մանուէլը» մի մեծ արժէք չունի, բայց նա շատ լաւ նիւթ է պատանիների ընթերցանութեան համար, որովհետև այստեղ հերոսը պատկերացրած է իբրև նախապաշարմունքների դէմ կռուող մի անձնաւորութիւն. նա իր կռիւը զօրեղ կերպով առաջ է տանում, մինչև անդամ զրկւում է և հայրական տնից։ Այս գրքում շատ կան նախապաշարմունքների օրինակներ և նրանց դէմ բերուած բացատրութիւններ. այս գիրքը կարող է նախապաշարուած երեխային սթափեցնել, նրա մէջ քննական վերաբերմունք զարթեցնել դէպի իր լսած զանազան պատմութիւնները։ Լաւ կ՚լինէր, որ ծնողները իրանց որդիներին, պատանեկութեան շրջանը թեւակոխելուց յետոյ, այս գիրքը տային կարդալու և նպաս-

տէին, որ նա այդ գրուածքը բոլորը լաւ հասկանայ, իւրացնէ։ Արութիւն և Մանուէլը բացի այդ գործնական օգուտներից, որ կարող է տալ, ինքնըստինքեան շատ գրաւիչ, պարզ հասկանալի լեզուով գրուած մի պատմութիւն է, ուստի և շատ յարմար իբրև ընթերցանութեան նիւթ պատանիների համար։

Պետերբուրգում Աղայեանցը մնաց մինչև 1867 թ. երբ Գէորգ կաթողիկոսի կողմից հրաւիրուեց Էջմիածնի տպարանը կարգի բերելու։ Էջմիածին գալիս նա Տփխիսում ամուսնացաւ և ամուսնուն այնտեղ թողնելով ինքը գնաց Էջմիածին։ Էջմիածնում նրան յանձնեցին նաև „Արարատի“ խմբագրութիւնը։ Արարատում նա գրեց մի շարք մանկավարժական յօդուածներ, որոնք սկզբում տպւում էին առանց քննութեան, բայց յետոյ, բարոյական կրթութեան մասին գրուած յօդուածի պատճառով սկսեցին նրա յօդուածները քննել և ապա տպել։ Նա երկար չմնաց Էջմիածնում, ընդհարուեց Մանկունու հետ և հեռացաւ։ Նրանից յետոյ Աղայեանցը սկսեց ուսուցչութեամբ պարապել—Ախալցխայում, Ալէքսանդրապոլում, Երևանում, Շուշում, նաև Տփխիսի թեմում թեմական տեսուչ եղաւ։ Ուսուցչական ասպարէզում Աղայեանցը շարունակ կռուել է խալիֆա վարժապետների դէմ, միշտ աշխատել է աշակերտի համար ուսումը դիւրացնել. այդ պատճառով ոչ մի տեղ երկար չի մնացել և շարունակ հալածուել է։

Ալէքսանդրապոլում եղած ժամանակ նա գրել է „Երկու քոյր“ վէպը, գիւղական կեանքից, ուր գիւղական կոպիտ բարքեր կան պատկերացրած։ Սա նոյնպէս նրա գրական գործունէութեան մէջ առաջնակարգ գրուածքներից չէ, բայց իբրև գիւղական բարքերի նկարագրութիւն հետաքրքրութեամբ է կարդացւում։

Շուշում ուսուցչութիւնից յետոյ Աղայեանցը հրաւիրուեց տիկին Սոֆիա Բաբայեանցի մանկապարտէզը Տփխիսում,

ուր նա երեխաներին գրագիտութիւն էր սովորեցնում։ Այդտեղ նա իրան շատ լաւ էր զգում անմեղ երեխաների շրջանում և սկսեց գրել մանկական ոտանաւորներ և երգեր։ Այդ ժամանակուանից Աղայեանցը ամբողջապէս նուիրուեց մանկական գրականութեան, ու սկսեց արտադրել իր մինը միւսից գեղեցիկ մանկական ոտանաւորները և հէքիաթները, որոնք տպուեցին «Աղբիւրում,» գլխաւորաբար 1887—1890 թուերը։ Այս գրուածքներով է, որ Աղայեանցը մեր գրականութեան մէջ առաջնակարգ տեղ է գրաւում և իր հաւասարը չունի։ Նրա հէքիաթները, որոնց նիւթը վերցրած է ժողովրդից, այնքան գրաւիչ պարզ լեզուով են գրուած, որ կարդացողին կամ լսողին յափշտակում տանում են հեռու, դէպի կախարդական աշխարհները, դէպի դիւցազների մօտ և այն տեղ ապրեցնում։ Նրա ոտանաւորները այնքան հասկանալի են մանուկին և այնքան մօտ նրա սրտին որ բաւական է մի ուշադիր լսողութիւն և ահա անգիր պատրաստ են նրանք։ Ոտանաւորներում նա առհասարակ տալիս է մանուկի համար սիրելի և հասկանալի, պարզ գիւղական կեանքի պատկերներ. այստեղ ջրաղացպանն է խռմփացնում խոր քնի մէջ, չնայելով ջաղացաքարերի դղրդոցին, որոնք ամբողջ շէնքը թնդացնում են. այնտեղ հովիւն է սարի լանջին գլուխը չոր քարին դրած մի կարպետ ուսերին, անձրևի կաթիլների տակ հանգիստ քնած և անուշ անուշ ժպտում է. մի ուրիշ տեղ պառաւն է իր հարթը կորցրել և լալով փնտռում է նրան. մի չորրորդում տաւարածն է ճաշում, ցամաք չուտելու համար ջրի մէջ թրջում, դանակով կտրում, որ էլ ցամաք չըլինի և այլն և այլն, մինը միւսից գեղեցիկ, մինը միւսից աւելի գրաւիչ։ Իսկ հէքիաթներից իւրաքանչիւրը մի մի ըստքանչելի առաքինութիւն է դնում մանուկի առաջ, նրանք հիանալի քաջութեան, անմեղութեան, հաւատարմութեան,

արհեստի նշանակութեան օրինակներ են տալիս։ Ահա ձեզ Անահիտը, որ մի նախրջու աղջիկ է, բայց չի համաձայնում թագաւորի տղայի կինը դառնալ, քանի որ նա արհեստ չգիտէ, և նրա արհեստ սովորելուց յետոյ է միայն համաձայնութիւնը տալիս։ Ահա Արեգնազանը, որ այնքան անմեղ է, որ չըգիտէ թէ ինքը տղայ է, թէ աղջիկ. բայց աղաւնի—աղջկան ջլումը լողանալիս տեսնելով նոր հասկանում է իր տղայ լինելը. սա է որ կախարդի քարացրած քաղաքին կրկին կեանք է տալիս, պառաւին քարացնում է և նրա չար իշխանութիւնը վերացնում աշխարհից։ Ահա հսկայ Տորքը, որ սիրոյ առաջ այնքան է մեղմանում, որ իր կոպիտ ուժը մի կողմը դրած համաձայնում է իր նշանածի հետ մրցել «սիրոյ զէնքով» միայն։ Ահա Բէլլէրոֆոնը, որ իր թեւաւոր ձիու, Պեգասի վերայ հեծած սպանում է երեք գլխանի չար Օշափին և նրա ճիրաններից ազատում Լիկիայի թագաւորի թշուառ երկիրը և ժողովուրդը։ Ահա Արևամանուկը, որ վագրի բերանն է ճզում և այլն և այլն։ Ո՞ր մէկն ասեմ, դրանք շատ են, և ցրուած «Աղբիւրի» հին համարներում և Աղայեանցի կազմած դասագրքերում։ Աղայեանցի գրուածքները ամենալաւ միջոց է մանուկին իր մայրենի լեզուն սիրել տալու և նրանով հետաքրքրուելու համար։ Ծնողների և գլխաւորաբար մօր պարտականութիւնն է անել այդ և իր որդու հետ միասին կարդալ դրանց, անհասկանալի կտորները բացատրել, պատմել տալ, իւրացնել տալ։

Աղայեանցը Պուշկինից թարգմանել է „Ոսկի ձկնիկը," բայց եթէ մէկը չիմանայ սրա բնագրի մասին, երբէք չի կարող հասկանալ, որ սա թարգմանութիւնն է։ Նա ունի թարգմանուած նաև շատ առակներ Կռիլովից և այլ կտորներ ուրիշներից, բոլորի վրայ էլ դրել է իր լեզուի ու ոճի

կնիքը և բոլորովին հայացրել. ոչ մի օտար ոճ, հայերէնի ոգուն հակառակ մի դարձուածք չէք հանդիպիլ դրանցում, ուր մնաց նրա ինքնուրոյն գրուածքներում։ Լեզուի կողմից Աղայեանցը իր մաքուր հայերէնով, ժողովրդական, բայց ոչ գաւառաբարբառի աստիճան եղած, ոճով, պարզ սահուն շարադրութեամբ, իր հատը չունի մեզանում։ Այս էլ է պատճառներից մինը, որ երեխաները այնքան յափշտակւում են նրա գրուածքներով։

Աղայեանցի գրուածքները սկսած դասագրքերից պիտի զարդ լինեն իւրաքանչիւր հայ ընտանիքի մէջ, ուր կան երեխաներ։

Ռուսաստանի 60-ական թուականները, ինչպէս բարելաւ ազդեցութիւն ունեցան բուն ռուսական կեանքի վրայ, նոյնպէս լաւ եղան և Ռուսական կեանքի հետ անմիջապէս կապուած կովկասեան հայերիս համար։ 60-ական թուականներին Պետերբուրգում հայ ուսանող երիտասարդութիւնը չ՚մնաց առանց ազդուելու այդ շրջանի ռուսական կեանքի եռմունքից։ Եւ այդ ուսանող երիտասարդութիւնն էր, որ յետոյ մեզանում գործունէութեան ասպարէզի վրայ էր 70-ական թուականներին։ Այդ մարդկանցից է նաև Ղ. Աղայեանցը, որը իր ամբողջ կեանքի ընթացքում երբէք չէ դադարել առաջադիմութեան համար ըկռւող քաջ զինուոր լինելուց. նա նոյնն է և իր ծերութեան հասակում, միշտ թարմ, միշտ լաւ և նոր հոսանքների արձագանք տուող և հետևող։ Նա այժմ այլևս չի գրում, շատ ցաւալի է. իհարկէ, բայց գրածն ու արածն էլ բաւական են, որ նրա անունը պատուով արձանագրուի մեր գրականութեան պատմութեան մէջ։

ԹԱՒՐԻԶ Մ. Ցար.

ԹՈՔԱԽՏԱԻՈՐ ՀՕՐ ԿՏԱԿԸ ԻՒՐ ԷՄՄԱ ԴՍՏԵՐ

Ոչ ոք իրաւունք չունի թողնել յետագայ սերունդ, եթէ խելքը, գիտութիւնը և փորձը համոզում են, որ այդ սերունդի կեանքը կարճ, վշտագին և դժբաղդ պիտի լինի։

Յոյսը և հաւատը հանդերձեալ կեանքի համար ողջամիտ են և սուրբ, երբ նոքա ծառայում են այն բանի համար, որպէսզի մարդուն բարձրացնեն վսեմ զգացմունքների մթնոլորդը, որոնք ազնուացնում են նրա գոյութիւնը. իսկ նա՝ ով չի ընդունում մարդու մէջ կամքի, մտքի և գործի ազատութիւն, նա ՝վիրաւորում է Աստծուն, արհամարում է քանականութիւնը։

Ոչ մի ցանկութիւն, ոչ մի սիրոյ կայծ չի կարող շեղել ճշմարիտ ճանապարհից այն մարդուն, որը պարտաւոր է և ուզում է կատարել իւր պարտքը։

Պարքը բարձր է մարդուց, պարտքից բարձր չկայ ոչինչ բացի միակ Աստծուց։

Կենդանի արարածին չարիք չպատճառել, այս իրաքանչիւր մարդու պարտականութիւնն է ինչ հասակի, ինչ դրութեան մէջ էլ լինի նա։ Այդ ընդունում են բոլոր ժամանակների ազգերի օրէնքները և կրօնները։

Ծնել տկար որդիներ, նշանակում է գործել մեծ չարիք, ամենամեծը, որպիսին միայն կարող է գոյութիւն ունենալ

և նմանապէս այդ չարիքը պատճառել այն էակներին, որոնց մենք ամենից շատ ենք սիրում, «որոց մարմինք ի մարմնոյ մերմէ և ոսկերք յոսկերաց մերմէ են»։

Ծնել հիւանդոտ որդիներ իւր անձնական մեղքի պատճառով աւելի վատ է, քան թէ սպանել մարդուն սաստիկ բարկութեան ժամանակ. այդ նշանակում է նենգութեամբ թունաւորել մեզ համար ամենաթանկագին ստեղծուածների կեանքը։

Հիւանդոտ լինել և արտադրել որդիներ, դա ապացոյց է բուռն եսականութեան. դա նշանակում է ինքն իրան ենթարկել խղճի խայթին ամբողջ կեանքի ընթացքում։

Այն մարդու պատճառած չարիքը, որը ծնում է հիւանդոտ որդիներ, չի վերջանում առաջին զոհով. յաճախ հիւանդութիւնը և թոյնը անցնում են երկրորդ, երրորդ և յետագայ սերունդին, նուազեցնում են ծնունդները և յառաջացնում են սարսափելի տանջանքներ ու անէծքներ, զոհերը նզովում են, ինչպէս իւրեանց սեփական կեանքը, նոյնպէս և նրանց, ով իրանց աշխարհ բերեց։

Ով հիւանդոտ է և չնայած դորան, ցանկանում է որդիներ ունենալ, նա վատ հայր է, որովհետև իւր որդիներին թոյն է տալիս խմելու, վատ քաղաքացի է, որովհետև նա ազգին վատ քաղաքացի է տալիս. վատ մարդ է, որովհետև ոչնչացնում է մարդկային ընտանիքի ամենալաւ կարողութիւնը—առողջութիւնը և ոյժը։

Դիմել տմարդի և խիստ օրէնքների ապահովութեան՝ միևնոյնն է, թէ ընդմիշտ չցանկալ աւելի բարձր և մաքուր լինել սովորական մարդուց, որը ուտում, խմում և քնում է։

Չի կարելի, սքօղուելով մահմետական ֆատալիզմով, իւր բաղդը խաղաթղթի վրայ դնել, այդ նշանակում է տարուել այն բոլորը, ինչ որ ունի մարդս։

Բաղդը—դա զօրեղի բաժինն է, իսկ յաղթութիւնը պատկանում է նրան, ով գիտակցութեամբ է գործում։ Չի կարելի մի որևէ փաստ առաջ բերել, որի հիման վրայ կարելի լիներ թոյլատրել լուսնոտներին, գժերին և թոքախտներին ամուսնութեան միջոցով ընկնաւորութիւնը, թոքախտը և գժութիւնը փոխադրել յետագայ սերունդներին։

Սէրը երկրային կեանքի ամենասուրբ ուրախութիւնն է.. արդեօք կարելի՞ է թոյլ տալ նրանից պատրաստել բաժակ, որի մէջ խառնւում է թոյն։

Սէրը մարդու ամենալաւ օրհնութիւնն է. բայց արդեօք ցանկանո՞ւմ էք, որ նա անէծք սերմանէ։

Սէրը—կերոն է, որ բորբոքում է կեանքի լոյսը. ուրեմն ինչո՞ւ էք ցանկանում դուք դագաղի մօտ վառուող սգոյ լապտեր դարձնել նորան։

Ի՞նչն է սոիպում ձեզ, կենդանի նեխուածներ և թոյնով ծնուածներ, ծնել որդիներ, որպէս զի տեսնէք նոցա գերեզմանում անմեղ մանկական շրթունքների վրայ ժպիտը փայլելիս։ Չէ՞ք կարդում արդեօք ձեր որդիների ծերացած և կնճռոտ դէմքերի վրայ անէծք այն ծնողներին, որոնք նոցա կեանք տուին։

Ո՛չ հարստութիւնը, ո՛չ կրթութիւնը, ո՛չ գիտութիւնը, ո՛չ կրօնը, ոչինչ չէ կարող փոխարինել անժամանակ կորցրած առողջութեանը։

Հագցրէք հիւանդին մետաքս, զարդարէք նրան թանկագին քարերով, նստեցրէք ոսկեզօծ կառքի մէջ, տարէք աղմկալի խնճոյք և պահաջեցէք նրանից ծիծաղել։

Հիւանդի, թոյլի և փթած օրգանիզմի կեանքը պահանջում է շարունակ ուշադրութիւն և բժշկութիւն, դա մի եղեսպակ (шлафей) է, որը չի կարելի քաղցրացնել ոչ մի մեղրով, դա անմխիթար վիշտ է, յաւիտենական աքսոր է, որից միայն մահը կարող է փրկել։

Էմմա, իմ անգին Էմմա, դու միշտ սիրում էիր ինձ, դու միշտ յարգում էիր քո հօրը։ Լսիր ինձ։ Այնքան որդիներս կորցնելով և շատ անգամ քեզ գերեզմանի դռանը տեսնելով, ես սկսում էի նզովել ինքս ինձ, իմ մեղքերը և տգիտութիւնը, ես սկսեցի նզովել բժիկների տգիտութիւնը, որոնք չէին կարող փչացնել այն թոյնը, որից ես պէտք է մեռնէի, չտարածուելու իմ անբաղդ ընտանիքի մէջ։

Եթէ ես ծնուեցի հիւանդ, ապա պարտաւոր էի միայնակ կրել այդ հիւանդութիւնը և այն մի քանի տարիները, որոնք բաշխել էր ինձ բնութիւնը, նուիրել իմ բարեկամների և հայրենիքի համար։

Բայց ես այնտեղ հասայ, որ սկսեցի նզովել ծնածս վայրկեանը. իմ վիշտը հարիւր անգամ մեծանում էր զաւակներիս տանջանքներից. իսկ տունս դառնում էր գերեզմանատուն։

Ես լալիս էի և գիշերները աչքերս չէի փակում, ոչ մեռնել էի կարողանում և ոչ էլ ներել ինձ իմ յանցանքի համար։

Սակայն իմ տգիտութիւնը չէ կարող ծառայել իբրև արդարացումն ուրիշների համար։ Ներկայ գիտութիւնը բոլորովին սահմանեց և որոշ հաստատում է թէ այն մարդը, որ կամենում է ընտանիք հիմնել, պէտք է առողջ լինի, նա որոշեց, որ թոքախտները և լուսնոտները փոխադրում են այդ հիւանդութիւնը յետագայ սերունդին և ապացուցեց, որ հիւանդութեան յաջորդական անցումը բնութեան անողոք անցումներից մէկն է։

Եթէ մի հազուագիւտ և բարեբաղդ հանգամանքով, կամ թէ անչափ աշխատանքների շնորհիւ, հիւանդ ծնողներին յաջողւում է առողջ որդիք ունենալ, բայց և նոյնպէս նոցա մէջ կը գտնուի գոնէ մի մանուկ, որին անխուսափելի է դաժան բաղդը և զարհուրելի հիւանդութեան կնիքով այդ

երեսի վրայ հիւանդ հայրը և թոքախտոտ մայրը կկարդան իւրեանց մեղքի պարզ անէծքը։ Էմմա, իմ բարի Էմմա, դու ամբողջ կեանքումդ հիւանդ էիր, դու ես իմ վերջին դուստրը, ես ոչինչ չխնայեցի քո առողջութեան և փրկութեան համար և կարծում եմ, որ դու կապրես, Աստուած ողորմած է և նա գուցէ չէ կամենում ինձ իմ բոլոր որդիների սպանիչը դարձնել։

Բայց քո օրգանիզմը փուխր է և թոյլ, այն եղեգնի նման, որը միայնակ ցցուել է անապատում և անկասկած կըկոտրուի, եթէ մէկը յենուի վրան։ Երբէք մարդու չգնաս, աղջիկս, առաջին զաւակդ քեզ գերեզման կիջեցնէ և կամ թէ կունենաս որդիներ, որոնք մահուան դատապարտուած կըլինին իւրեանց կեանքի ամենաքնքոյշ տարիքում, իւրեանց մանկութեան զարունքին։ Թոքախտի թոյնը չափազանց ուժեղ է. նա թափանցեց մեր արեան մէջ և չի անհետանայ նոր սերունդով։

Ես մեռնում եմ. դու վերջին կենդանի շառաւիղն ես մեր ցեղի, քո մահով այս թոյնը պէտք է կորչի և մեղքը պիտի վերանայ։ Երդուէր Էմմա, որ դու միայնակ կապրես և միայնակ էլ կմեռնես։ Աստուած տայ, որ դու հանդիսանաս ազատիչ հրեշտակ քո հօրը և նրա մեղքերին թողութիւն բերես։ Այս դառնութեամբ լի երդումը քո հօր կտակը և ժառանգութիւնն է. վերջին խօսքը, որ ինչպէս հայր պարտաւոր եմ ասել քեզ իմ սիրելի զաւակիս, դա խղճալի դատակնիք է. համբերիր, տանջուիր և ապրիր մինչև վերջը։

Արդէն վերջացաւ ամենազարհուրելի պատիժը մեղքիս համար։ Նրանից յետոյ, երբ թաղեցի իմ բոլոր որդիներին ես պարտաւոր էի և վերջինին, որը կենդանի էր մնացել, ասել-համբերիր, կրիր քո հօր յանցանքը։

Մի նզովիր հօրդ։ Երբ նա երիտասարդ էր և ձեռքը առաջարկեց մօրդ, այն ժամանակ բժիշկները հասարակ արհեստաւորներ էին և միայն նշաւոր ու թունաւոր դեղեր էին ճանաչում։ Նոքա չէին հասկանում, որ պարտաւոր են քաջութեան քուրմ լինել և առողջութեան հովանաւորող։ Նոքա չգիտէին, որ իրանց վրայ պարտականութիւն կայ՝ հիւանդին, թոքախտին և ընկնաւորին (эпилептикъ) ասել. „Մի համարձակուիր սերունդ թողնել քեզանից յետոյ, աւելի լաւ է խրիր սուրդ քո ամենամտերիմ բարեկամի սիրտը“։

Հայրդ իբրև ժառանգութիւն քեզ թողնում է մի սոսկալի պարտք, որը դու պէտք է կատարես, ապրիր, բայց երբէք մի սիրիր, եղիր կին բայց ոչ մայր։ Ես մեռնում եմ խաղաղ, որովհետև հաւատացած եմ, որ դուստրս չի դրժիլ իւր երդումը և կկատարէ այն բարի գործը, որը հայրը չըկարողացաւ կատարել։

Զարիք գործել՝ եթէ նոյն իսկ մեր անզուսպ կրքերը մեզ դրդեն, եթէ օրենքները թոյլ տան, նոյն իսկ եթէ հասարակութիւնը չդատապարտէ մեզ այդ չարիքի համար, ահա այդ է մեծ գործը և հերոսութիւնը, որի նմանը պատերազմի դաշտում ևս չի արտայայտուում։

Եւ քանի որ իւրաքանչիւր անհատ չի զգայ իւր մէջ կարողութիւն այդ պարտքը կատարելու, մինչ այն ժամանակ մարդկութիւնը երէք չի հասնի իւր իդեալական կատարելութեանը։

Քո ճանապարհը, իմ Էմմա, անդունդի ափով է ընթանում. բայց և այս ճանապարհի վրայ, ուր հայրդ քեզ դրեց, դու կարող ես հանդիպել հրաշալի ծաղիկների։ Դու կատարում ես ամենամեծ առաքելութիւնը, դու պէտք է հասնես անմերձենալի բարձրութեան, դու պէտք է լինիս ոգի և սրբազան կրակի վեստալուհի։

Ով իւր անձը զոհում է պարտքի համար, նա բնակւում է մաքուր մթնոլորդի մէջ, ուր գուցէ չի փայլում արևը, բայց երկինքը միշտ պայծառ է։

Ով կատարում է իւր պարտականութիւնը, նա միշտ տեսնում է իւր գլխի վերևը պարզ երկինքը, նա ապրում է այն աշխարհում, որից գուցէ բուրում է վիշտ, բայց որը այնուամենայնիւ, իւրաքանչիւր ուրախութեան կցում է բարձր արժանաւորութեան փայլ։

Փոքրոգիները և վատարիները կորագլուխ անցնում են պարտքի արձանի առաջից, բայց իւրաքանչիւր ոք այդ դէպքում զգում է մի բարձր բարերար ազդեցութիւն, այնպիսին, որպիսին զգացւում է մեծ տաճարի մեռելային լռութեան մէջ։

Իսկապէս այն մարդն է սուրբ, ով իրան զոհում է իւր պարտքի համար և նա իւր փրկարար ազդեցութիւնն է թողնում իրան հետ ընդհարուողների վրայ։

Ես հաւատացած եմ, Էմմա, որ դու ձգտում ես այդպէս սուրբ լինել և այդ հաւատը խրախուսում է ինձ մահուան մահճում։

„Հիւանդ սիր“—Պաճեվացցա

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սարհասի Հայոնեաց բարեգործական Բաֆֆի Ընկերութիւն



Այս ընկերութեան հիմնադիրը եղել է Ղալասար գիւղի ուսուցիչ Նիկոլայ Ադամեանը 1891 թուականին։ Ընկերութիւնը երկու տարի գործելուց յետոյ դադարել է և վերահաստատուել 1898 թ. վերջերին Բագրատ վ. Թաւաքալեանի ձեռքով և շարունակւում է մինչև այժմ։

Ընկերութեան նպատակն է օգնել հայ իգական սեռի չքաւոր դասակարգի ազգային կրթութեան գործին և նպաստել ընդհանրապէս հայ կանանց և օրիորդների մէջ անհրաժեշտ արհեստներ տարածելով։

Ընկերութիւնը ներկայումս ունի 19 անդամ, երբեմն եղել են և շատ։

Ընկերութեան նիւթական միջոցները կազմում են ա. անդամավճարները, բ. միանուագ վճարներ դրամով, դասական պիտոյքներով, գ. վիճակախաղից գոյացած արդիւնքը։ Ընկերութիւնը իւր հաստատութիւնները ընդլայնելու համար գիմում է նաև երեկոյթների, ներկայացումների պարահանդէսների, ժողովարարութեան և այլն և այլն։

Մինչև հիմա Ընկերութիւնը կարողացել է Ղալասար գիւղում մի օրիորդաց ուսումնարան պահել 35—40 աշակերտուհու համար և մի վարժուհի, որին առաջին տարին վճարել է 20 թուման (40 ր.) և երկու բեռ ցորեն. այժմ վճարւում է 85 թուման (մօտ 160 ր.) և երկու բեռ ցորեն։

Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն

Այս ընկերութեան հիմնադիրներն են Տ. Տ. Հեղինէ Ժորժ, Մարիամ Վարդանեանց, Մարիամ Նազարբէկեան, Փեփրոնէ Յովնանեանց և Թամար Տէր-Օհանեան։

Ընկերութիւնը հիմնուեց 1895 թ. փետրուարի 26-ին, որը օրհնեց և վաւերացրեց նոյն ժամանակի Ընդհ. Ատրպատականի առաջնորդ Գերապ. Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց, նուիրելով 50 թուման։ Ընկերութեան նպատակն է Թաւրիզի Բերդաթաղի և առհասարակ նահանգի չքաւոր ընտանիքների երկսեռ մանուկների կրթութեան գործին նպաստել և կանանց ու օրիորդներին օգնութեան ձեռք մեկնել նրանց մէջ անհրաժեշտ արհեստներ տարածելով։ Ընկերութեան հասոյթները կազմող միջոցներն են՝ մշտնջենական, հիմնական և տարեկան վճարները, ներկայացումները, տօնածառ և վիճակախաղ, արհեստանոցից եկամուտ և մարդասէր անձանց կողմնակի նուիրատուութիւններ։

Ընկերութիւնը բացի Թաւրիզում մշտնջենական, հիմնական և տարեկան անդամուհիներ ունենալուց, հիմնական և տարեկան անդամուհիներ ունի նաև Ռաշտում, Ատրաբելում, Սալմաստում, Բագւում և Մարաղայում։

Ընկերութեան հաստատութիւնները հետևեալներն են.

1) Ուրմիի դպրոցը երեք բաժանմունքով, որի աշակերտները ձրիավարժ են։

2) Դէրդաբադի դպրոցը Ուրմիի գաւառում։

3) Դէրէլէքի դպրոցը Սովուղ-Բուլաղ գաւառում։

4) Կար ու ձևի արհեստանոցը Թաւրիզում։ Այստեղ բացի կար ու ձևի դասերից վերջին տարին եղել են դասեր նաև հետևեալ առարկաներից, հայոց լեզու շաբաթական 1 դաս, թուաբանութիւն 2 դաս, բնական գիտութիւններից մատչելի դասախօսութիւններ՝ 1 դաս և ընթերցանութիւն 1 դաս։

5) Մանկական պարտէզը Թաւրիզում։

Թաւրիզի հայուհեաց բարեգործական միացեալ ընկերութիւն

Այս ընկերութեան հիմնադիրներն են Տ. Տ. Իսկուհի Յակովբեանց և Շուշանիկ Մալենցեանց։

Ընկերութեան նպատակն է.

1) Նպաստել Ատրպատականի հայ իգական սեռի լուսաւորութեանը. իւր հաշուով բանալով իգական սեռի դպրոցներ իւր միջոցներով օժանդակել գոյութիւն ունեցող օրիորդաց դպրոցներին։

2) Օգնել չքաւոր հայ աշակերտ-աշակերտուհիներին։

3) Օգնել հայ օրիորդներին, որոնք կամենում են պատրաստուել վարժուհու պաշտօն կատարելու Պարսկաստանում։

4) Ըստ հնարաւորութեան իր հաշուով պահել մի հայ բժշկուհի կամ նպաստել այդ նպատակով պատրաստուել ցանկացող օրիորդներին։

5) Թաւրիզի Լիլաւա և Ղալա թաղերում պահել մանկապարտէզներ և օրիորդաց համար կար ու ձևի արհեստանոցներ և դրանց կից խոհարարական բաժին։

6) Օգնել չքաւոր հայ ընտանիքներին նիւթապէս կամ այլ կերպ։

7) Ժողովրդական սարսափների և աղէտների ժամանակ իւր կարողութեան չափով աշխատել օգնել հայ ժողովրդին։

Ընկերութեան դրամական աղբիւրները հետեւեալն են— անդամավճարներ, վիճակախաղի, ներկայացումների, երեկոյթների նուէրներ և ընկերութեան հիմնարկութիւնների եկամուտները։

Մինչև 1901 թ. Թաւրիզի և Ատրպատականի ընկերութիւնները առանձին էին գործում, բայց 1901 թ. միանալով և ստանալով ամենայն Հայոց Կաթողիկոսի կօնդակը միութեան համար, գործում են այժմ իբրև միացեալ ընկերութիւն ունենալով դրամագլուխ 72,307 դրան, պահպանելով 13 կրթական և բարեգործական հաստատութիւններ։

Նոր-Նախիջեւանի հայ կանանց աղքատախնամ ընկերութիւն

Այս ընկերութիւնը հաստատուել է 1901 թ.

Ընկերութեան հիմնադիրներն են՝ Խկուհի Ռափայէլեան Անանեան և Գրիգոր Զալխուշեան։

Ընկերութիւնը առայժմ ունի 50-60 անդամներ. անդամավճարն է տարեկան 5 ր. կամ միանուագ 100 ր. (մշտնջենաւոր)։

Ընկերութեան նպատակն է օգնել հայ լուսաւորչական կնոջը ամեն տեսակ. հոգալ նրանց նիւթական պիտոյքները, տարածել կանանց մէջ լուսաւորութիւն, հրատարակելով գրքեր և նպաստելով նիւթականին բարձրացնել կնոջ բարոյականը։

Առ այժմ ընկերութիւնը պահում է իր հաշուով մի օրիորդաց դպրոց Հռիփսիմեան, ուր բոլոր առարկաները և լեզուները աւանդւում են հայերէն լեզուով։

ՄԱՆԿԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Երեխաների ընթերցանութեան գործը մեր շատ ընտանիքներում բարձի թողի է արուած և շատ դէպքում էլ այդ կատարւում է խիստ անուշադիր և անգիտութեամբ, որը փոխանակ օգտի, վնաս է բերում երեխաներին։

Երեխաների ստեղծանաբար զարգացման հետ խիստ ընտրութեամբ պէտք է սիստեմատիքաբար տալ ընթերցանութեան գրքեր, որոնք կարողանային համապատասխանել նոցա մտաւոր զարգացման աստիճանին։

Ահա այս նպատակով պ. Յ. Տէր-Միրաքեանի «Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրքից քաղուածօրէն դնում ենք օրինակելի գրքերի ցուցակ, երեխաների հասակի համաձայն, որից կարող է օգտուել ամեն մի մայր կամ դաստիարակ։

Ուր տարեկան հասակի մանուկների համար

1) «Ատղէ դրամ» Գրիմմի, թարգմ. Տ. Կոստանեանցի։
2) «Զորս առակ»։
3 «Անվախ դերձակ» Գրիմմի պատկերազարդ։
4) «Քնած գեղեցկուհի»։
5) «Կարմիր գլխարկ»։
6) «Գուլիւերը թզուկների աշխարհում»։

7) «Գուլիւերը հսկաների աշխարհում»։
8) «Ոսկի ձկնիկ» Պուշկինի, թարգմ. Գամառ-Քաթիպայի։
9) «Ոսկի ձկնիկ» Ազատ թարգմ. Ղ. Աղայեանի։
10) «Մրինդ հովուական» Ղ. Աղայեանցի։

8—10 տարեկան մանուկների համար

11) «Խնձորենիների երկրում» Ուլդի զրույցներից։
12) «Ռոստոմ և Զոհրաբ» թարգման. Փ. Վարդանեանի։ Պատկերազարդ։
13) «Նալ և Դամայանդի» Ֆ. Շմիդտի։
14) «Լուսերեսիկ» Գրիմմի։
15) «Ճշմարտութիւնը միշտ յաղթում է»։
16) «Երրորդ ոսկի» Լաբուլէլի։
17) «Ճանապարհորդ գորտը»։
18) «Ծննդեան պատմութիւնը»։
19) «Փայլուն կոպէկ» Բաուէնի. թարգմ. Գր. Շահբուզաղեանի։
20) «Հարուստը և աղքատը» Օստրոգորսկու։
21) «Սպիտակ օձ» Օստրոգորսկու թարգմ. Տիրուհի Կոստանեանցի։
22) «Ժլատ» Գ. Կրաբբի, թարգմ. Տ Կոստանեանցի։
23) «Անհանգիստ գիշեր» և «Ոբսի գնդակ» Օստրոգորսկու թարգմ. Տ. Կոստանեանցի։
24) „Սիու—Լիէն“ թարգմ. Տ. Կոստանեանցի։
25) „Ծիծեռնակի բունը“ թարգմ. Եղիսաբ. Ալիխանեանի և Արծրունու։
26) „Մի դէպք Բէրանժէի կեանքից“ Սրա հետ է—
27) „Կեցցէ Ֆրանսիան“ մի գրքոյկում։
28) „Զուարճալի ժամեր“ Ա. Սարդարեանի։
29) „Շառատ“ Աշխարհումովայի։

30) „Անտառապահը“ Ա. Սմիրնովայի։
31) „Ժան Բատիստ Լիւլիի մանկութիւնը փոխադր. Տ. Յովհաննիսեան։
32) «Ինչով են ապրում մարդիկը» Լ. Տոլստոյից։

10—12 տարեկան մանուկների համար

33) «Թռչունների աշնանային տեղափոխութիւնը» Բոդդանովի։
34) «Վրէժ» Մոպասանի։
35) «Հիւանդապահ աղջիկը» Մոպասանի։
36) „Իլիական“ Հոմերոսի թարգմ. Փ. Վարդանեանի։
37) «Ոդիսական» Հոմերոսի թարգմ. Փ. Վարդանեանի։
38) „Լուսատտիկ“ Շմիդտի։
39) «Թաւամազ մեղու» Աւենարիուսի, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի,
40) „Ուռենց Յովսէփ“ Ի. Սպիրիի, թարգմ. Ի, Յարութիւնեանցի։
41) «Ալծարաճ Մոնի» նոյն հեղինակի ու թարգմանչի։
42) „Ալպեան հովիւ“ Ի. Յարութիւնեանցի։
43) „Հնդու աքաղաղ“։
44) „Ոսկի ասեղներ“ թարգման. Դ. Աքիմեանցի։
45) „Լեր արքայ“ Օստրոգորսկու թարմ. Տ Կոստանեանցի։
46) „Տիրոլցի աղջիկ“ Օստրոգորսկու թար. Տ. Կոստանեանցի։
47) „Մայրական սէր“ Օստրոգորսկու թարգմ. նոյնի։
48) „Զինուոր Յակովը“ Հոֆմանի։
49) „Մրցումն“ Հոֆմանի։
50) „Զինական առասպելներ“ թարգմ. Տ. Կոստանեանցի։
51) „Կուզիկ լիէու“։
52) «Աշխատութեան հրեշտակը»։

53) „Երկու եղբայր“։

54) „Վարսենիկ“ թարգմ. օր. Ն. Յարութիւնեանցի և օր. Գ. Տէր-Ասատուրեանցի։

55) „Ինչ է խօսում սենեակը“ Վ. պ. Աւենարիուսի։

56) «Մեծագործութիւն» Արևելեան աւանդութիւն թարգմ. Մ. Ալեանակի։

57) «Աղքատի բաղդը» Անդրէևա։

58) „Ջրի կաթիլի պատմութիւնը“ Գրուբէի։

59) „Քրիստոնեայ ընտանիք“ թարգմ. Աղ. Տէր-Մարուքեանի

60) „Փշրանք“ I, Կ. Կ. Մելիք-Շահնազարեանի։

61) «Աշխէնն ու մարգարիտը» Օ. Ռոգովայի։

62) „Կոլումբ“ կոմս Լ. Տոլստոյի, թարգմ. Փ. Վարդանեանի։

63) „Վարդ Ռէսլէն“ Սպիրիի։

64) „Ապենիններից մինչև Անդերը“ Դէ Ամիչիսի, թարգ. Փ. Վարդանեանցի։

65) „Երկու հէքիաթ“ Ա. „Այրուած ապառաժը“։ Բ. „Յիպլեան ժայռերը“։ Կարմէն Սիլվայի։



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԱԵՆԻ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ **1903** ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՅԻ

„ԵԻՐԱԿ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՑԱՒԻՆԼՈՒԱԾՆԵՐՈՎ

Աչքի առաջ ունենալով, որ „Ձիրակ“ օրացոյցները իրանց օգտակար և հարուստ յաւելուածներով չորս տարի է գրաւել են ընթերցողների ստուար բազմութիւն, և թէ ըզգալի արագութեամբ տարածւում են ժողովրդի ամեն խաւերում, ուստի ներկայ օրացոյցները խմբագրելիս չխնայեցինք ոչ մի ջանք աւելի հարստացնելու նոցա յաւելուածները։

Ծոցի օրացոյցի զուտ յաւելուածը կազմում է 200 երես և բացի զանազան տոմարագիտական, վաճառականական, օրէնսգիտական, բժշկական և այլ օգտակար ու անհրաժեշտ տեղեկութիւններից, կան նաև ընթեցանութեան համար առանձին հատուածներ, ինչպէս «Ծեր մշակի խրատները երիտասարդին», «Անիի պատմութիւնը»—նորա թագաւորները, Անիի աւերումները և այլն։ Հայ բարեգործներ—Յարութիւն Ամիրա Պէզճեանի, Մ. Սանասարեանի և Լազարեանների մանրամասն կենսագրութիւնները իրանց պատկերներով։

Պատի օրացոյցը, որ իւր տեսակում առաջինն է, դարձեալ հարստացրած է պատմական ու գիտական շատ տեղեկութիւններով, բարոյական խրատներով և ընտիր մտքերով։ Պատի օրացոյցում այս տարի առանձին տեղ է բռնում հայոց կեանքից պատմական հատուածներ, ինչպէս հայերի ծա-

գումը, Հայ Մելիքներ, Դաւիթ-բէկ, Հայերի գաղթականութիւնը, ռուս-թուրքական պատերազմը և այլն, այլև եկեղեցական պատմութիւնից հատուածներ, կրթական առակներ, առածներ, ժողովրդական երգեր, ընտիր բանաստեղծութիւններ, բժշկական, արհեստագիտական, աշխարհագրական, աստղաբաշխական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։

Թէ պատի և թէ ծոցի օրացոյցների նիւթը բոլորովին նոր է։

☛ «Նիրակ» և «Ախուրեան» օրացոյցներից երկուսը կամ երեքը միասին գնողները ձրի իբրև պրեմիա կստանան Ս. Էջմիածնի պատմութիւնը և Ս. Մեսրոպի օրհնութեան նկարագրութեան պատկերազարդ գիրքը։

Ցանկացողները կարող են մանրամասն բովանդակութիւնը պատկերազարդ տպագրութեամբ ստանալ ձրի։

Գները՝ Ծոցինը—20 կոպ. Պատինը—50 կոպ.

Գումարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь, Карапету Апинянцъ. Արտասահմանից Alexandrople Karapet Apinian (Caucasse).

„ԱՐՏԵՄԻՍ“

Ամսահրատարակ ընտանեկան և գրական օրգան քսաներորդ դարու հայ կանանց։

Հիմնադիր, տէր և տնօրէն խմբագիր՝ Մարի Գեղերեան։

«Արտեմիս»ը հրատարակւում է ամիսը մէկ անգամ, իւրաքանչիւր ամսի վերջը, բաղկացած 4 տպագրակ. թերթից։

Եգիպտոսի համար տարեկան բաժանորդագինն է 40 դահ. ոսկի.

» » վեց ամսեայ » 25 » »

Արտասահմանի համար տարեկան բաժանորդ. 12 ֆրանք.

Առանձին համարի գինն է 1 ֆրանք։

Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում։

«Արտեմիսի» հասցէն՝ Redaction de la Revue des Femmes Arméniennes „Artemis“ Poste Restante Caire (Egype).

13330-
13332.